ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԹԱՆԱՑԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Ը. ՏԱՐԻ Ի Զ. ՕԳՈՍՏՈՍ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ.	ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ Գիտութիւններից.	679
	ՏԵՍՈՒԹԻՒՆ Քրիստ. եկեղ. պատմ.	704
ԹԱՆԱՑԻՐԱԿԱՆ.	ԴՊՐՈՅԱԿԱՆ պեկտարք. մեթոդիկա	725
	ՍԵՊԱՋԵՒ Արձան. Թոպ. Պատմ.	745
	«ՆՈՏՈՅ».	765
	ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ խնդիր . . .	777
ԱԶԳԱՅԻՆ.	ԼՈՒՐԵՐ	780
	ՈՒՍՈՒՄ. Վարչ. Ցանձ. որոշումներից .	783
	ՄԱՀԱՑՈՒՑԱԿ	784
	ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . .	785

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ

ՌՅԽԲ—1893

ԱՐԱՐԱՏ

ԿՐԹՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԹՒԻ Ը. ՏԱՐԻ ԻՋ ՕԳՈՍՏՈՍ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ

ՌՅԽԲ—1893

ՀԻՍԱՓԱԾԱՔ

ԱՄԵՆ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՑՈՑ.



ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

(Շարունակութիւն)։

29·

ՀՈՎՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ·

Թէև ամբողջ գործնական աստուածաբանութիւնը զբաղւում է հովուական գործունէութեամբ, այնով հանդերձ կայ նորա մէջ մի բաժին, որ նեղ մտքով հովուաբանութիւն է կոչւում (théologie pastorale, пастырское богословіе)։ *Սորա նիւթն է համայնական և մասնաւոր կեանքի հոգացողութիւնն, որ կատարում է*

հովիւը թէ պաշտօնական հաւատարիմ գործունէութեամբ և թէ մասնաւոր անձնական սիրով։

Թէև այս մասի վրայ առանձին ենք խօսում սակայն հովուական աստուածաբանութիւնն և սիրութիւն է կազմում կրօնուսուցչութեան և բեմբասացութեան հետ։ Վասնորոյ կարեն դոքա նաև իբրև մի առարկայ, այսինքն՝ գործնական աստուածաբանութիւն համարուիլ՝ ի մի ամփոփուելով։ Բայց եթէ կրօնուսուցչութիւնն ստանայ իւր լրացումը մանկավարժութեան մէջ, կմնան բեմբասացութիւնն ու հովուաբանութիւնն առանձին զբաղմունքի առարկաներ։ Սոցա միութեան իրաւացիութիւնն ակներև է, եթէ չմոռանանք՝ որ հովիւը չի կարող առանց կրօնուսուցչական, քարոզչական և հովուական հմտութեան լինել։ Եթէ ուրեմն այդ երեքը մէկ շրջանի մէջ ամփոփենք, այն ժամանակ երեք բաժանումներ կունենանք ամբողջի մէջ, որոնցից իւրաքանչիւրը կարօտ է առանձին տեսութեան։

Արդէն բարոյաբանութիւնն ասլիս է այն սկզբունքներն, որոնք անհրաժեշտ են հովուին, քանի որ հովուի և աշխարհականի համար չկան ուրոյն ուրոյն բարոյականութիւններ։ Սակայն այդ սկզբունքները պէտք է դարձնենք հովուի կոչման, ճանաչելով որ հովիւն ունի առանձին պարտականութիւններ թէ պաշտօնի թէ իւր եկեղեցական դիրքի պատճառով։ Հովիւն այստեղ պէտք է ուշադրութեան առնէ թէ այն պարտիքներն, որոնք նա ունի դէպի իւր համայնքի բոլոր իաւերն, և թէ այն պահանջներն, որոնց իրագործումը սպասում է նոցանից[1]։ Հարկաւ այս պարտիքներն ու պահանջները մասամբ բարոյաբանական են և մասամբ իրաւաբանական, ուստի և այդ երկու առարկաները լրացուցիչ են հովուի գործունէութեան ճանաչողութեան մէջ։ Ուրեմն

---

1. Հովիւը, նոյնպէս և ուսուցիչը, պէտք է և գործով օրինակելի լինին. ճշմարիտ է, հիւանդը չէ նայում բժշկի առողջութեան, երբ նորանից դեղ է խնդրում, սակայն այն նոյն չէ եկեղեցական և բարոյական գործի մէջ. այստեղ պարտ է՝ նախ առնել և ապա ուսուցանել, ըստ Քրիստոսի։ Բարոյականութեան դէմ մեղանչողը չի կարող ոչ հովիւ և ոչ ուսուցիչ լինել։

գոքա պէտք է առանձնապէս պարզեն իւրեանց սկզբունքները հովուի պաշտօնն ինկատի ունենալով, թէ ծանօթութիւններ տան և թէ կրթեն ու վարժեն նորան։ Թէ այդ ծանօթութիւններն և թէ կրթութիւնն ոչ թէ ինքեանք ըստ ինքեանց օգտակար կլինին, այլ անհրաժեշտ է որ հովիւը գիտենայ և ճանաչէ իւր համայնքի բոլոր հանգամանքներն ու դրութիւններն, որպէս զի իւր գիտեցածը գործադրէ ըստ տեղւոյն և ոչ թէ պատահաբար և անտեղի։ Ուստի և գործնական աստուածաբանութեան աւանդողը պէտք է լինի փորձուած, համայնական կեանքին ծանօթ անձնաւորութիւն, որ նորա ուսուցածն ոչ թէ միայն տեսութիւններ լինին՝ այլ և կապուին փորձի հետ։ Միմիայն տեսականապէս կրթուած և գործնականապէս փորձուած հովիւը կարէ յաջողակ լինել ճշմարիտ գործունէութեան մէջ։

Հովուական գործունէութիւնը վերաբերում է ամբողջապէս համայնքին և դորա կենսական յառաջադիմութեան։ Նա է որ պէտք է ներգործէ քրիստոնէական կեանքի զարգացման, երկիրղածութեան և կրօնական կրթութեան յառաջադիմութեան։ Հովիւը՝ լինի նա քահանայ թէ վարդապետ՝ ձգտում է մի և նոյն նպատակին, միշտ ջանալով իրաւապէս կառավարել իւր համայնքը և հայրական սիրով խնամել նորան և հոգալ նորա բարեբաղդութեան և երջանկական միաբանութեան համար։ Վանորոյ և հովիւը պէտք է հոգայ ժողովրդի մատաղ սերնդի կրթութեան համար, պէտք է յառաջ տանէ եկեղեցական դպրոցների բարեզարգութիւնն և ուսման տարածումը ստորին խաւերի մէջ։ Նա պէտք է և կիրակնօրեայ դասախօսութիւններ անէ հասակաւորների համար, եկեղեցական երգեցողութեամբ զարգացնէ ժողովրդի ճաշակն և համայնական ու դպրոցական կամ կրօնական, բարոյական կրթութեան վերաբերեալ հարցերի համար ժողովներ կազմէ և։ Այդպէս նա թէ գործը յառաջ կտանէ և թէ օգնած կլինի եկեղեցական իշխանութեան ձգտումներին, տեղեկատու օժանդակիչ լինելով նորա վարիչներին [1]։

---

1. Հայոց եկեղեցու համայնական կեանքը բնաւ չէ դարձած ուսումնա-

Հովուական խնամածութեան մի ասպարէզ է և աղքատների ու անանկների վիճակը։ Դոցա համար հոգալը հովուի պարտքն է, որ կիրագործուի ոչ միայն գանձանակով, այլ և միսիթարիչ և կրթիչ ազդեցութիւն ունենալով անօգնականների վրայ։ Այդտեղ պէտք է օգնէ հովուին և տիրակինն, ինքն էլ աշխատելով իւր շրջանի մէջ։ Հովուական այս գործունէութեան մէջ պատկաւոր արդիւնքը պէտք է լինին որբանոցների և աղքատանոցների հիմնարկութիւններն, որոնք բոլորովին պակասում են մեր մէջ։

Հովիւն ունի այս կրթական և խնամածական գործունէութիւնից զատ՝ նաև յարաբերութիւն տեղական եկեղեցական վարչութիւնների հետ, վասնորոյ էս այստեղ անհրաժեշտ է նախապատրաստական ճանաչողութիւն, զի այս շրջանում հովիւն ունի իրաւաբանական պարտաւորութիւններ, որոնք կարելի է կատարել միայն որոշ սահմանների համաձայն ճշտութեամբ և ոչ ըստ անձնական հայեցողութեան։

Այս ամբողջ գործունէութեան մէջ հովիւն այնքան յաջողութիւն կունենայ, որքան նա կարենայ հայրական սէր տածել դէպի ընտանիքները, նոցա մկրտութիւններին, պսակներին, թաղումներին և այլ դէպքերին հանդիսաւոր կերպարանք տալ և առիթ առնելով՝ բարոյական յուշարար լինել կամ անհրաժեշտ տեղեկութիւններ ու խրատներ տալ ապագայի համար։ Հարկաւ այս յարաբերութիւնները միմիայն այդպիսի պաշտօնական դէպքերի պատճառով չպէտք է լինին, այլ նաև հիւանդութիւնների, դժբաղդութիւնների և այլ կարօտութիւնների ժամանակ հովիւը պարտաւոր է միսիթարական դարձնել իւր այցելութիւնները [1]։ Այս առաւել հեշտ

սիրութեան նիւթ. թերևս այդ լինի պատճառ, որ հովուութիւնն անչափ յետ է մնացած։

1) Հովուի պարտականութիւնն է այցելել նաև բանդարկեալներին, քարոզել նոցա աւետարանը, յորդորել՝ դառնալ այն ճանապարհից, որ դատապարտելի է և պատճառ է եղել բանդարկութեան։ Նա պէտք է ջանայ ուղղել նոցա, միսիթարել և զղջալ տալ և երջանկութեան ճանապարհը մատնացոյց անել։

կլինի հովուի համար, որքան բարձր է ընտանիքն և բարոյապէս կրթուած. սակայն սորին ընտանիքները չպէտք է այքմթող առնուին։ Նորա գործը յաջողակ կլինի, եթէ նա կուսակցական չլինի, այլ վայելուչ բարեկամ։ Նա լաւ պէտք է դիտէ իւր շուրջն և տեսնէ թէ ընտանիքներն ի՞նչ օգնութեան են կարօտ և կամ նոցա այս ու այն անդամն ի՞նչ խնամքից է դուրկ, որ կարելի լինի իսկոյն օգնութեան ձեռք կարկառել։ Ահա այս ամենն անելու համար անհրաժեշտ է լաւ ուսումնասիրութիւն թէ օգնութեան միջոցների և թէ համայնքի զանազան հանգամանքների և յարաբերութիւնների, դիրքի և վիճակի։

Տեսական ուսումից և ժողովրդական կեանքի վերաբերեալ ընթերցանութիւնից որքան ևս օգուտներ ունենայ հոգևորականացուն, այնով հանդերձ անհրաժեշտ է ապա և փորձ։ Փորձի համար չունինք վարժութեան միջոցներ. դոքա կարեն ամենից լաւ միայն գործնական ասպարիզում ձեռք բերուիլ։ Այդ անհնար է ունենալ հոգևոր դպրոցներում ուստի և յարմարագոյն է նշանակել հոգևորականացուին մէկ եկեղեցում իբրև օգնական մի փորձուած կրթուած բարեմիտ քահանայի, որ և կառաջնորդէ նորան համայնքի զանազան յարաբերութիւնների մէջ վարժուելու։ Իսկ ապա, երբ կվարժուի երիտասարդը (սարկաւագը) հովուական գործունէութեան և պաշտօնակատարութեան, այն ժամանակ կձեռնադրուի քահանայ։ Մինչդեռ կուսակրոնների համար միակ վարժարանը պէտք է լինի մէկ կազմակերպուած վանք կամ լաւ ևս միայն Ս. Էջմիածինն, որտեղ մնողները պէտք է լինին ազատ ունկնդիրներ Հոգևոր ճեմարանի աստուածաբանական դասերին (եթէ թերի են դորանից) և վարժուողներ թէ պաշտօնի և թէ կառավարչական գործունէութեան մէջ, այդ ևս փորձուած եպիսկոպոսների կամ վարդապետների առաջնորդութեան տակ[1]։ Այդ վարժութեան համար պէտք է ուղարկել նոցա երբեմն երբեմն քարոզելու գաւառ-

---

1) «Մանուկ կրօնաւոր, որ ոչ է առ ոտս ծերոց, աննշան որս է սատանայի». Եզնիկ։

ներում և մասնակայ գիւղերում, այլ և վարչական մանր մանր յանձնարարութիւններ կատարելու։ Իսկ առաջնորդական կամ յաջորդական պաշտօնի համար լաւ կլինէր՝ եթէ առ ժամանակ իւրաքանչիւրը մնար փորձուած առաջնորդների մօտ իբրև օգնական աբեղայ։ Միմիայն այդպէս կունենանք իւրեանց գործն ուսումնասիրած, դորա համար փորձուած և համոզմունքով[1]) հոգևորականներ։

Ուրեմն ուսումն և գործունէութեան ու պաշտօնի փորձ — սոքա են, որոնք պահանջւում են հոգևորականից։ Ցեսանք թէ ինչպիսի փորձ է հարկաւոր, սակայն պէտք է պարզ լինի մեզ համար և այս՝ թէ ի՞նչ ուսում է պէտք նորան, արդեօք բա՞ւ է առհասարակ ուսեալ լինել, թէ հոգևորականի ուսման պահանջն այլ է։

Ա. յո՛, հոգևորականութեան ուսման պահանջն ոչ միայն այլ է, այլ և առաւել է։

Որ աստուածաբանական բոլոր առարկաներին ծանօթ պէտք է լինի և լաւ ուսումնասիրած ս. Գիրքը, պաշտամունքն, Հայաստանեայց ս. եկեղեցու գաւանաբանութիւնն ու բարոյաբանութիւնն — այդ հասկանալի է, ինչպէս միևնոյն արդէն բացատրուած է։ Մանկաւարժութեան, փիլիսոփայութեան և ուրիշ օժանդակ գիտութիւնների մասին ևս ասուած է։ Սակայն այդ դեռ բաւական չէ. լաւ հովիւ լինելու համար անհրաժեշտ է գիտենալ նաև բժշկութիւն և գիւղատնտեսութիւն, որոնց կարօտութիւնը զգացւում է մանաւանդ գիւղերում։ Իւրաքանչիւր

---

1. Համոզմունքով եմ ասում, այսինքն՝ որ ներքինն և արտաքինը, մտածողութիւնն ու գործն իրար համապատասխան լինին և ճշմարիտ։ Ապա թէ ոչ, կարգարանայ Եզնիկի խօսքը թէ. «զմիս անասնոց ոչ ուտեն, և զեղբայրն անյագաբար ուտեն. գինի ոչ ըմպեն, և զհոգին արեամբ շաղախեն . . . . Շրթամբք սիրեմք զԱստուած, և ի զուր աշխատիմք»։ Իսկ այդ բոլորը կվերանայ, երբ հոգևորականացուն նախ ուսումնասիրէ պաշտօնի պահանջածն, ապա ձգտումն զգայ դէպի այդ կոչումն և ապա մտնի այդ պաշտօնի մէջ։

անհատի հոգևոր ուղղութիւնը խնամելու համար՝ չի կարող հովիւը յաջողակ լինել, առանց հոգևոր և մարմնաւոր հիւանդութիւններին ծանօթ լինելու և բժշկական օգնութիւն հասցնել կարենալու, մանաւանդ որ յաճախ մարմնաւորից է կախուած և հոգևորը։ Իսկ թէ որքան անհրաժեշտ է հովուին կարենալը բժշկական օգնութիւններ հասցնել, կզգայ իւրաքանչիւր ոք, երբ ի նկատի ունենայ, որ շատ տեղեր բժիշկներ չկան և կամ հեռու են և միայն քահանան է՝ որ ամենից մօտիկ է ընտանիքներին և սրտացու. ժողովրդի առողջապահութեան նպաստելու հոգը ընկնում է հովուի վրայ։ Նա պէտք է ոչ միայն բժշկէ, այլ առողջապահական ամեն տեսակ խորհուրդներ և խրատներ տայ թէ մեծերին, թէ փոքրերին, թէ արանց և թէ կանանց։

Դորա հետ անհրաժեշտ է գիտենալ և տնտեսութիւն, որի պակասութիւնից վտանգւում է նաև ժողովրդի մարմնաւոր առողջութիւնն՝ ապա ուրեմն և հոգևորը կմնասուի։ Միմիայն դորա մէջ գտնել նորա փրկութիւնը՝ մեծ սխալ կլինի և կնշանակէ կորստեան մատնել նորա հոգին և զրկել մարդկանց իւրեանց արժանիքից և մի քանի տասնեակ տարիներով յետ դնալ քաղաքակրթութիւնից։ Մանաւանդ որ մարդ միմիայն մարմնաւորով չէ բաղդաւոր և առողջ. նա հոգևոր պահանջ ևս ունի, որի չլրացնելը կտանէ նորան դէպի անգիտակցաբարոյական անկումն, անասնական կեանք, նիւթապաշտութիւն, որոնք սոսկալի են ամենայն ազգի և ժողովրդի համար[1]։

Որպէս զի հովիւը կարենայ յաջողապէս հոգալ ժողովրդի հոգևոր կարիքները, նա պէտք է ահա և մարմնաւորն աչքաթող

---

1. Այս գործնական հմտութիւնները շատ անհրաժեշտ են հէնց քարոզչութեան և հովուութեան յաջողութեան համար. բժիշկ և տնտես քահանան կամ քարոզիչն մուտք կունենայ ամենայն տեղ։ Ուստի Գերմանիայում լաւ քահանայացուները յաճախում են ազատ ժամերին նաև հիւանդանոցները՝ հիւանդութիւնները գործնականապէս ճանաչելու համար։

չառնէ, ուրեմն և բացի բժշկութիւնից անտեսութիւն գիտենայ, հմուտ լինի վար ու ցանքի և գիւղատնտեսութեան բոլոր հանգամանքներին, այլ և արհեստի, արդիւնաբերութեան և այլ ժողովրդական պարապմունքներին, որ կարենայ զարկ տալ երկրի յառաջադիմութեան թէ իւր խարհուրդներով ու քաջալերութեամբ և թէ կիրակնօրեայ դասախօսութիւններ անէ կամ մասնաւոր շրջաններում հաղորդէ քաղաքակրթուած աշխարհի նորանոր յառաջադիմութիւնները։ Այդ գիտութեան պէտքը զգացուում է նաև, երբ հովիւը խօսակցում է կենսական այդ պարագաների մասին։ Եթէ նա անտեղեակ լինի դոցա, նա ձանձրալի և ծաղրալի կդառնայ իւր ժողովրդի առաջ և կամ կօտարանայ, չկարենալով մասնակցել ժողովրդին զբաղեցնող խօսակցութեան և օգտակար լինել նորան[1]։

Բոլոր եկեղեցական դպրոցներում այս առարկաներն, որոնք անպայման պահանջ են հովուի յառաջադիմութեան, ուստի և անպատճառ պէտք է մտցնուին Հայոց Հոգ. Ճեմարանում և թեմական դպրոցներում։ Բժիշկների բժիշկ էր և անտեսների անտես՝ մարդկութեան փրկիչն, եկեղեցու հիմնադիրը, վասնորոյ և նորան պէտք է հետևեն եկեղեցու հովիւներն, որպէս հետևեցան նորան առաքեալներն և յաջողութիւն ունեցան անարգել։ «Զհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք», անմիջական հրամանն է Քրիստոսի։

---

1. Հովուի համար կան ռուսերէն շատ ձեռնարկներ, որոնք կարեն օգտակար լինել А. Струдза. Письма о должностяхъ свящ. сана.—Забѣлинъ. Права и обязанности пресвитеровъ.—Пѣвницкій, священникъ. Приготовленіе къ священству и жизнь священника.—Прот. Чижевскій. О церковномъ хозяйствѣ и церк. письмоводствѣ.—Архим. Іаковъ. Пастырь въ отношеніи къ себѣ и своей паствѣ.—Прот. Ѳ. Гиляровскій. Что можетъ сдѣлать священникъ для благосостоянія своего прихода? Ան. Ան. Տես և. Поповъ. Объ усердіи къ миссіонерскому дѣлу. Пермь. 1874. Քարոզել աւետարանը հեթանոս ազգերի մէջ և բարձրացնել նոցա, այդ ոչ միայն Քրիստոսի հրամանն է, այլ և քաղաքակրթութեան պահանջը։ Աւետարանով պէտք է ընտելանան աւազակաբարոյ ժողովուրդները։

Քանի որ Հայաստանեայց եկեղեցու ձգտումն է՝ իրականացնել ժողովրդի բարեկեցութիւնն և զարկ տալ նորա յառաջադիմութեան, ակներև է՝ որ պէտք է հմուտ և կրթուած պաշտօնեաներ ունենայ, երկիւղած գործողներ և աւետարանի հաւատարիմներ, ճանաչող ժողովրդի ցաւերը, կրթող և միևնոյն ժամանակ օգնող նորա մարմնաւոր կարօտութիւնները լրացնելու։ Ուստի և ս. Յակոբ պատգամելով, որ հոգևորականներն անպատճառ ուսեալ և կրթուած անձինք լինին, ասում է. «քանզի յորժամ ուխտն՝ որ գլուխն է եկեղեցւոյ՝ ընտիրք և պիտանիք լինիցին, ևս առաւել ժողովուրդն. և թէ եղիցի ոք ի ժողովրդենէն ծոյլ վարուք առաքինութեան՝ դիւրագոյն լիցի ածել յուղղութիւն. . . .»[1]։

Իսկ ապա հոգևորականի պարտիքն է՝ լինել հեզ և եղբայրասէր, ճշմարտութեան անպայման երկրպագու, չարի և վատի յանդիմանող հայրաբար և քրիստոնէական վարքի հետևող. մի խօսքով՝ նա պէտք է ունենայ հաւատք, յոյս և սէր, կամ թէ հաւատք և գործ, և կամ կարճ՝ կենդանի հաւատք[2]։

---

1. Տես. և Յովհան Մանդակունու կանոնը. «Արդ ես զայս ըստ իմում գիտելոյ ասեմ՝ թէ որ զմանուկ տգէտ և զտխմար՝ որ ոչ կարէ կարդալ զաւետարան ի բեմի ի լուր ժողովրդոց, և զբոլոր ուսումն կարգի քահանային ոչ է ուսեալ, զպատիժ քահանայանալոյ նորա՝ նա կրէ՝ որ ձեռնադրեացն զնա. զի զհանոցն և զուսելոցն զմեզաց համարս անձինք իւրեանց տան։ Այլ օրէն է առաւել զգիտունն և զհասակաւ կատարեալն արժանացուցանել այսմ շնորհի, որ կարող են ապրեցուցանել զանձինս և առաջնորդել ժողովրդեանն. . . ։ Վասն որոյ պատուիրեմ առաջնորդաց եկեղեցւոյ՝ զգուշանալ ի ձեռնադրութենէ տգիտաց, և մի կաշառօք արծաթոյ զոք յառաջ մատուցանել յեպիսկոպոսութիւն, կամ յերիցութիւն, կամ ի սարկաւագութիւն, կամ յայլ աստիճան. այլ որպէս ի ս. աւետարանին Փրկիչն ասէ առ ս. աշակերտսն թէ՝ «ձրի առէք, և ձրի տուք»։

Նոյնպէս և վարքով ու մարմնով պակասաւորներին արգելուած է ընդունել հոգևորական աստիճանի մէջ։

2. «Հնազանդեա՛ սիրով, աղօթեա՛ յուսով, աշխատեա՛ հաւատով և պայծառասցիս յերկնային հարսանիսն»։ «Լաւագոյն է զձեւսն համբառ-

30·

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ·

Հայաստանեայց ս· եկեղեցին ունի իւր կառավարչական շրջանը թէ իւր ներքին կեանքում և թէ արտաքինների հետ ունեցած յարաբերութեան մէջ։ Այդ կառավարչական գործունէութիւնը կարող է կատարուել միմիայն Հայաստանեայց եկեղեցու աւանդական կանոնների և սկզբունքների համաձայն, որոնք չեն կարող բնաւ խախտուել՝ առանց այդ ս· եկեղեցու իրաւունքներն ու օրբութիւնը շօշափելու։ Ահա գոյա օրինաւոր պահպանութեան համար անհրաժեշտ է հիմնաւոր ուսումնասիրութիւն, որ և եկեղեցական իրաւաբանութեան նիւթն է*։ (Droit canonique, церковное право).

Եկեղեցական իրաւաբանութեան մէջ առաջին տեղը բռնում է Հայաստանեայց եկեղեցու կազմակերպութեան ուսումնասիրութիւնը, թէ ինչ քաղաքական և հասարակական ձևակերպութիւն է ստացել իւր պատմական կեանքում, ինչ դիրք ունի դէպի պետութիւնները, և ինչ իրաւունքներ ունի գոյա նրկատմամբ ներկայումս։ Եթէ այդ ամենը ճշտիւ որոշուած չլինի եկեղեցականի համար, նա չկարէ ճանաչել իւր եկեղեցու իրաւական սահմաններն և վարել նորա արտաքին յարաբերութիւնները հաւատարմութեամբ և պահպանութեամբ։ Քանի որ եկեղեցին աստուածային հաստատութիւն և ուրեմն բարերար օգնական է պետութեան, իսկ պետութիւնը հիմնելով իւր գոյու-

---

նալ առ Աստուած, յորժամ ազօթեսցէ· բայց առաւել կարևոր է, որ ի պէտս եղբարցն սպասաւորեսցէ»։

«Եթէ ամենայն եղբարցն հիւանդութիւնն քեզ ոչ ցաւէ, մի լինիր առաջնորդ»։ «Եթէ զանարժանն ըստ պիտոյից ոչ յանդիմանես, մի լինիր վարդապետ»։ Եղնիկ։

*) Այս գիտութիւնը նոյնքան զգուշալի է, որքան և դաւանաբանութիւնը, վասնորոյ և դորա ուսումնասիրութիւնը աստուածաբան ուսումնականի գործն է։

թիւնը քրիստոնէական սկզբունքի վրայ՝ պարտաւոր է պաշտպանել և յարգել նորա աստուածային անկախութիւնն և իրաւունքները՝ հասկանալի է որ դոքա պէտք է ուղիղ յարաբերութիւն պահեն միայն իրաւաբանական ուղղամտութեամբ։ Հայաստանեայց եկեղեցին հեռու է հռովմէական աշխարհակալական ձգտումներից՝ բայց և մի և նոյն ժամանակ անկախ է իւր եկեղեցական էութեամբ՝ ներքին կեանքով և իրաւունքներով։ Որպէս ազատ է հաւատքն և աստուածպաշտութիւնը՝ նոյնպէս և ազատ է Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցին։ Նա ոչ ենթարկուել է իւր թագաւորներին և ոչ ստորադրել նոցա. նա այդպէս ճանաչել է միշտ իւր քրիստոնէական սահմանն ու շրջանը։ Գիտէ պետութիւնն՝ որ եկեղեցական գործն իւր իրաւունքներից դուրս է՝ թէ նա քրիստոնէական բարեպաշտութիւն ունի. գիտէ և եկեղեցին՝ որ ինքը չի կարող պետութեան տեղը բռնել և մի և նոյն ժամանակ քրիստոնէական ճշմարիտ եկեղեցի մնալ. և ահա այս բաւական է՝ որ երկուսն էլ կարենան հաշտ իրեանց գործերը յառաջ տանել՝ առանց իրար խանգարելու։ Սակայն իրաքանչիւրն էլ մանաւանդ եկեղեցին քաղաքագիտութեամբ պէտք է խիստ զգոյշ լինի՝ որ իւր սահմանները չը խախտուին։

Հայաստանեայց եկեղեցին ճանաչելով իւր դիրքը՝ կեդրոնացնում է իւր գործունէութիւնն իւր ներքին կեանքի՝ այն է՝ վարչութեան և եկեղեցական դաստիարակութեան մէջ։ Երբև վարչութիւն պէտք է որոշած ունենայ իւր հաւատալիքների սահմանը՝ պաշտամունքի՝ եկեղեցական կարգերի՝ կրթական գրքերի՝ աստուածաբանական հրատարակութիւնների կանոնաւորութիւնն՝ և այլ այսպիսի անօրինութիւններ անէ։ Իսկ դաստիարակութեան մէջ պարտ է որոշած ունենալ ժողովրդի յարաբերութիւնը դէպի եկեղեցին՝ եկեղեցականների պարտիքը թէ եկեղեցու և թէ ժողովրդի նկատմամբ։ Նոյնպէս և պսակի՝ ապաշխարութեան՝ ընտրութիւնների և այլ նման գործերի որոշմունքը պահանջում է եկեղեցուց՝ որում պետութիւնները պարտաւոր են աջակցել նորան։ Եկեղեցական ուսուցման՝ հոգևորս կանների ընտրութեան

և ընդունելութեան, եկեղեցիների և դպրոցների շինութեան, կայքերի պահպանութեան, եկամուտների հաշուի, դոցա կանոնաւորման և այլ այսպիսի գործերի բարձրագոյն վարիչներն են եկեղեցականները՝ միացած համայնքից ընտրուած օգնականների հետ։

Եկեղեցական կառավարչութեան մի մեծ գործն է նաև գաստիարակութիւնն, ըստ որում պէտք է ջանայ իրագործել այն ամենն, ինչ որ տեսանք մինչև այժմ, որ պահանջուում է Հայաստանեայց եկեղեցու յառաջադիմութեան զարկ տալու համար, այն է՝ ուսման, հոգևոր հոգատարութեան, եկեղեցական կրթութեան և ժողովրդի բարեկեցութեան զարգացման գործում։ Նա պէտք է հետևի իւր միակ գլուխ Քրիստոսի ուսուցանին և միշտ կենդանի պահէ նորա խօսքերը թէ գործով և թէ գործունէութեամբ։

Այս բոլորի համար անհրաժեշտ է և ուսումնասիրել Հայաստանեայց եկեղեցու վարչական կազմակերպութիւնը, նորա նուիրապետութիւնը, Ընդհանրական Կաթուղիկոսի իրաւունքները բոլոր եկեղեցու վրայ, միայն համաձայն Հայաստանեայց եկեղեցու ու հայրերի վարդապետութեան, եպիսկոպոսների, առաջնորդների, յաջորդների, վարդապետների, աբեղաների և քահանաների ու սարկաւագների գործունէութեան իրաւասութիւնը, նոյնպէս և կոնսիստորիաների կազմակերպութիւնն և սահմաններն առաջնորդի հսկողութեան տակ։ Դորա հետ պէտք է ուսումնասիրուին և Հայաստանեայց եկեղեցու կանոնական իրաւունքն, այսինքն՝ այն կանոններն, որոնք ընդունուել են նորա մէջ Հայոց եկեղեցական ժողովների հեղինակութեամբ կամ որոշմամբ կամ վաւերացմամբ, քանի որ Հայոց եկեղեցական ժողովներն են Հայաստանեայց եկեղեցու բարձրագոյն հեղինակութիւնները։ Դոցա

---

1. Եկեղեցական իրաւաբանութեան վրայ ռուսերէն օժանդակ գրքեր. Проф. Н. Соколова. Церковное право.—Прот. А. Луканинъ. Руководство къ производству дознаній и слѣдствій по проступкамъ и преступленіямъ священно-и-церковнослужителей.

մէջ և ս. Հայոց ս. հայրերի ժամանակ գումարուած ժողովները չափ են յետագաներին, եթէ հարցը կապ ունի Հայոց եկեղեցու մի որ և իցէ սկզբունքի հետ, զոր. պաշտամունքի, նուիրապետութեան և այլ խնդիրներում։ Իսկ դաւանանքների նկատմամբ արդէն յիշուել է վերև, որ Հայոց ս. հայրերն անպայման հեղինակութիւններ են, որոնցից շեղուել անհնարին է։

Արդ՝ Հայաստանեայց ս. եկեղեցու կանոնական իրաւունքը բովանդակուած է հետևեալ կանոնագրութիւնների մէջ, որոնք են.

1. Ս. Գրիգոր Լուսաւորչի վարդապետութեան մէջ տեղ տեղ յիշուածներն ու նորա երեսուն կանոնները։

2. Ս. Ներսէսի և ս. Սահակի կանոնները։

3. Ե. դարի ս. հայրերի մէջ ցրուածները. (Եղիշէի, Յովհան Մանդակունու, Եղնիկի, և այլոց։)

4. Շահապիվանի ժողովի կանոններն, որոնց հետ և առաքելականը [1], Թադէոս առաքելինը և Նիկիոյ ժողովինը։

5. Դւնայ Ա. ժողովինը (551 թուին)։

6. Ներսէս Գ.-ի կանոնները։

7. Սահակ Երրորդինը։

8. Յովհան Իմաստասէրի (Մանազկերտի 726 թուի) կանոնները։

9. Սիոն Կաթուղիկոսինը։

10. Սոյ ժողովինը Դաւիթ կաթուղիկոսի օրով։

11. Կոստանդին Ա. կաթուղիկոսինը։

12. Երուսաղէմի ժողովում 1651 թուին Փիլիպպոս կաթուղիկոսի հրամանով և Սոյ Ներսէս կաթուղիկոսի կամակցութեամբ որոշուած ԺԴ. կանոնները։

---

1. Առաքելական կանոնները հնագոյնն են քրիստոնէական եկեղեցու մէջ։ Ցունական եկեղեցում յայտնի կանոնական ժողուածուներն են Codex Theodosianus Ե. դարից և—Iustinianus Զ. դարից։ Սոյն դարում ժողուածու կազմեց Յովհաննէս Սխոլաստիկոսը։ Հռովմէական եկեղեցում յայտնի է Իսիդոր Հիսպալիսեցուն († 636)։ որի տեղը բռնեցին Թ. դարում սուտ Իսիդորեան վճիռները. սոցանով յառաջ տարին պապերն իւրեանց հակաեւեսարանական ձգտումները։

Գեղեցիկ ձեռնարկ է Մխիթար Գոշի դատաստանագիրքը [1], սակայն տեղ տեղ չէ հիմնուած ազգային ժողովների սկզբունքների վրայ, վանորոյ և վաւերացման կարօտ է։ Այդ մի թանկագին գանձ է մեր մատենագրութեան մէջ, որ և նախընթաց կանոնների հետ միայն կարող է իրրև հիմք ծառայել մի կանոնական ձեռնարկ յօրինելու. այսոնք են Հայոց եկեղեցու իրաւաբանութեան ուսումնասիրութեան աղբիւրները։ Իսկ ուղղութիւնը պէտք է լինի՝ ջանալ նոյն սկզբունքների վրայ յարմարցնել մեր ժամանակի հանգամանքներն և երբ դոքա մի ամբողջ ժողովածու կազմեն, այն ժամանակ կարենք ապահով լինել թէ կրերանան անկարգութիւններն, ապօրինութիւններն ու ոտնձգութիւնները։ Մինչդեռ առ այժմ Գոշի դատաստանագիրքը կարէ յիրարկուել միմիայն համեմատուելով մշտապէս վերոյիշեալ կանոնագրութիւնների հետ, եթէ նորա այս ու այն որոշումը պարզապէս չէ հիմնուած Հայաստանեայց եկեղեցու ժողովական վճիռների և ս. Հայրերի վարդապետութիւնների վրայ։ Ինչ օրէնք և կանոն որ դոցա հակառակ է, չի կարող բնաւ մշտական իրաւատութիւն ստանալ Հայաստանեայց ս. եկեղեցու գաւթում [2]։ Վանորոյ և անպայման անհրաժեշտ է աստուածաբանական, իրաւաբանական և քաղաքագիտական հանճար և կրթութիւն, որպէս զի նուրբ հարցերի թեթև սխալով մեծամեծ վատ հետևանքներ չյառաջանան, քանի որ եկեղեցական խնդիրներում ոչ մի կերպ ներողամտութիւն, բարեժամանակն եղանակ (opportunistisch) և կոմպրոմիսներ թոյլատրելի չեն [3]։

---

1. Տպուած է ի Ս. Էջմիածին 1880. Վահան Վ. Բաստամեանի գիտնական և բազմահմուտ աշխատութեամբ։ Այդ գեղեցիկ գիրքը մեծ օգուտներ կտայ իւրաքանչիւր ընթերցողի։

2. «Արդ եթէ ոք անհնազանդեալ կանոնիս, նորոգաձևել կամեսցի զկարգեալ սահմանագրութիւնս, մի ընկալցի մասն և վիճակ ժառանգութեան Քրիստոսի և Աստուծոյ։ Եւ որ ոք միաբանեալ կատարեսցէ՝ ընկալցի զօրհնութիւն ի Տեառնէ, հաղորդելով պարգևացն և անվաղճան հանգըստեանն երջանիկն Գրիգորի և հօրն մերոյ Սահակայ և նոցին հետևելոց ճշմարիտ ուղղափառութեան . . . Տես. «Կանոնք ս. Սահակայ»։

3. Տես. Արարատ. 1892. ԺԱ. էջ. 961։

31.

ԱՄՓՈՓՈՒՄՆ ԲՈԼՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ։

Այժմ ունինք մեր աչքի առաջ այն բոլոր առարկաներն, որոնք կազմումեն աստուածաբանական գիտութիւնների շարքը չորս բաժանմունքների մէջ։ Տեսանք որ ուսման հիմք է կազմում մեկնական աստուածաբանութիւնը, զորան հետևումէ պատմականն, ապա բանակարգականն և ի վերջոյ դոցա արդիւնաւորումը գործնական աստուածաբանութեան մէջ։ Այսպէս ասելով չպէտք է հասկանալ թէ իւրաքանչիւրի համար առանձին ժամանակ է պէտք, այլ ամեն մէկի բաժնից գոնէ գլխաւորները պարտ է դպրոցական դասընթացքով անցնել։ Ուսման ընթացքում ի հարկէ անհրաժեշտ է լինում շարունակ ուսումնասիրել նաև միւս բաժինները, զի դոքա սերտ կապ ունեն իրար հետ։ Նոյնը կարելի է ասել լեզուների մասին, դոցա համար 2—3 ամիս բաւ է հիմնական տեսութիւն ձեռք բերելու և յետոյ ս. Գրքի (կամ պատմական և դաւանական ազբիւրների) ուսումնասիրութեան ժամանակ կունենայ ուսանողն ամենագեղեցիկ վարժութիւն և կատարելագործումն[1]։ Իսկ եթէ կամենայ որ իւրաքանչիւր առարկայ մի ժամանակի մէջ սովորել և վերջացնել նա տասնեակ տարիներ պէտք է նուիրէ։ Սակայն ուսումն ոչ թէ լոկ սովորելու մէջ է կատարելագործուում, այլ գործադրութեան, ուսումնասիրութեան մէջ։ Առարկայով պէտք է վարժուել, կրթուել, նորա

---

1. Կրթութեան գործը լաւ յառաջ տանելու և ժողովրդի կեանքի անյարմարութիւնների մէջ խանգարելուց և փչանալուց պահպանելու համար էր, որ որոշուած էր միայն քանի մի տարին միանգամ Ճեմարանի աշակերտին՝ ևս լաւագոյններին՝ տուն թողնել 2 ամսով. «Ժամանակ ամառնային աւուրց հանգստեան անցուցանեն աշակերտք ի Ճեմարանի աստ կամ յամարանոցի սորա, պարապելով ի թեթևագոյն վարժս ուսմանց և ընթերցանութեան։—Միայն աշակերտաց Դ. դասարանին, որք գովութեամբ աւարտեցին ի նմին զուսմունս՝ հրաման լինի չուել ի հայրենիս իւրեանց յետ տարեկան հարցաքննութեանց երկամսեայ ժամանակաւ . . . . .»։ Արարատ. 1877. էջ. 195։

էութիւնն ու սկզբունքներն իւրացնել և ոչ թէ նորանից նիւթ ժողովել և գերի դառնալ պատրաստի տուածների։

Գլխաւոր առարկաները սովորելուց յետոյ ուսանողը պէտք է մասնաւոր աշխատանք գործ դնէ թէ կատարելագործուելու և թէ մնացած առարկաներն ևս ուսումնասիրելու, որպէս զի գիտեցածը թերի չլինի։ Նա, որ այդ սկզբունքն աչքից ձգումէ, չի կարող ինքնուրոյնութիւն ձեռք բերել գիտութեան մէջ և թերակատարութեամբ մէկ հարցի մասին դատողութիւն տալով, կարէ մեծամեծ սխալների մէջ ընկնել դորա հետ կապակցուած ուրիշ խնդիրների մէջ։

Աստուածաբանական առարկաները դարձնելով երեք տարուայ ընթացք, ինչպէս գերմանական շատ համալսարաններում ընդունուած է, և յարմարցնելով Հայոց դպրոցներին, կունենանք հետևեալը.

Ա. ՏԱՐԻ.

1 Աստուածաբանական գիտութիւններն իրրև նախագուռն ուսման, (Введеніе въ кругъ богословскихъ наукъ).

2. Սրբազան մատենագրութիւն կամ Հին և Նոր Կտակարանի գրքերի պատմութիւն, որ կարէ ուսումն ս. Գրոցի մէջ ևս լրանալ.

3. Հին Կտակարանի մեկնութիւններ.

4. Նոր Կտակարանի մեկնութիւններ. (Համատես աւետարանները՝ Մատթէոսի, Մարկոսի և Ղուկասու. հետն և Յովհաննու).

5. Ընդհանուր եկեղեցական պատմութիւն մինչև միջին դարերը. (3. ժամ).

6. Հնաբանութիւն, ս. Գրոց ուսմունքի մէջ։

Բ. ՏԱՐԻ.

1. Քրիստոսի կեանքը.

2. Ընդհանուր եկեղեցական պատմութիւն. (վերջը).

3. Դաւանաբանութիւն Հայաստանեայց եկեղեցու (կամ տեսական աստուածաբանութիւն).

4. Բարոյաբանութիւն. (կամ բարոյական աստուածաբանութիւն).

5. Մեկնութիւններ։

Գ. ՏԱՐԻ.

1. Դաւանանքների պատմութիւն, որ կարելի է նաև եկեղեցական պատմութեան ու դաւանաբանութեան մէջ դրայնել.

2 Կրօնի փիլիսոփայութիւն.

3. Դաւանագիտութիւն. (կամ քաղդէական աստուածաբանութիւն).

4. Գործնական աստուածաբանութիւն.

5. Իրաւաբանութիւն։

Բեմքաստայութիւնը կարէ ընդհանուր դաս լինել[1]։

Դոցա հետ պէտք է աւանդուին նաև Ընդհանուր պատմութիւն, ընդհանուր և ազգային մատենագրութիւն, փիլիսոփայական և մանկավարժական բոլոր առարկաներ, բնական գիտութիւններ և ուսողութիւն, հոմուական բժշկութիւն, գիւղատնտեսութիւն և լեղուաբանական, պատմական, աստուածաբանական, սակայն մատենագրական՝ գլխաւորապէս ազգային շրջանին վերաբերեալ աշխատանքներով։

Դպրոցներում այդ առարկաները կաւանդուին հետևեալ կարգով.

Ուսումն ս. Գրոց (Բ. դասարանից մինչև Զ.). Սրբազան պատմութիւն, ընդհանուր եկեղեցական պատմութիւն (Գ.—Ե. դասարան). Հայոց եկեղեցական պատմութիւն (Ե. դասարան), Հա-

---

1) Ստորև գրուած է և ՃեմարանիՍկզբնական ծրագիրն, որի մէջ յիշուած առարկաները գրեթէ նոյն են, ինչ որ մինչև այժմ տեսել ենք, միայն անունների փոփոխութեամբ։

յոց պատմութիւն (Ա.—Դ. դասարան), աստուածաբանական գիտութիւնները, (2—5 ժամ), Դաւանաբանութիւն (Ե—Զ դասարան 2 և 4 ժամ), բարոյաբանութիւն (Զ. դասարան), գործնական աստուածաբանութիւն (Ե—Զ.) և հոգեբանութիւն, փիլիսոփայութեան պատմութիւն, տարրական մանկավարժութիւն, տեսութիւն բանահիւսութեան, գրականութիւն, պատմութիւններ, լեզուներ, երկրաչափութիւն, բնական գիտութիւններ, ուսողութիւն, տրամաբանութիւն, տոմարագիտութիւն, բժշկութիւն և անատոմիա։

Իսկ հոգևոր ճեմարանի լատինական դասընթացքը պէտք է լինի յիշեալ առարկաներից հիմնականների մանրազնին ուսումնասիրութիւնը։

Այդ ընդհանուր ցուցակին նայելով, տեսնում ենք որ հոգևոր դպրոցների պահանջը մեծ է և ընդարձակ [1]։ Աստուածաբանական ուսումը պահանջում է տալ նաև բոլոր գիտութիւնների էականը։ Ոչ մի դպրոց այնքան բազմակողմանի ուսում չէ տալիս, որքան հոգևոր դպրոցն ու ճեմարանը, վասն զի հոգևորականը կոչուած է առաջնորդելու իւր ժողովուրդը, վասնորոյ և լաւ պէտք է ծանօթ լինի ամեն գիտութեան, հարկաւ՝ ոչ թէ մասնագիտաբար, այլ բազմակողմանի կրթութեամբ։ Այդ պահանջւում է հոգևորականից և այն պատճառով, որ նա ժողովրդի ամենապիտանի անդամն և կրթիչը պէտք է լինի, ուրեմն կարող թէ գործելու և թէ խօսակցելու և խորհրդակցելու բոլոր խաւերում։ Թէ գիտական և թէ գեղարուեստի զարգացումը պէտք է անպակաս լինի լաւ հոգևորականի մէջ։ Հոգևո-

---

(1) Առ հասարակ ամեն դպրոցի տեսուչ պէտք է լինի մանկավարժ։ Անկարելի է ոչ մանկավարժներին տեսուչ նշանակել մի դպրոցի։ Իսկ Հոգևոր դպրոցների տեսուչներն ու վերատեսուչներն, ինչպէս ընդունուած է, աստուածաբաններ պէտք է լինին, որպէս զի չդաւաճանեն դպրոցի նպատակին և ուղղութեան։ Իսկ ուսուցիչները պէտք է Հայաստանեայց եկեղեցուն հաւատարիմ և բարոյական անձնաւորութիւններ լինին, որ չփչացնեն ժողովուրդն ու երիտասարդութիւնը վատ օրինակով։

բականի գեղարուեստական (երգեցողութեան, նկարչութեան և այլն) զարգացումը, կարգապահութիւնը, վայելուչ կեանքը, խելացի խօսակցութիւնն, հեզահամբոյր վարուողութիւնն և ն. պէտք է օրինակելի լինին ժողովրդի մէջ։ Իսկ այդ ամեն կրթութիւնը պէտք է տան Հայոց դպրոցները։ Միմիայն կրթուած հոգևորականներ տալով՝ կարող ենք յուսալ, որ Հայաստանեայց ս. եկեղեցու գաւթում կլինին պատուական բարձրագիր հովիւներ, որոնց շուրջը զարգացած խմբեր կկազմուին Հայ ժողովրդից [1]։ Մինչև որ հովիւը բարձր չլինի իւր հօտից, նա չի կարող դաստիարակ, առաջնորդ, մխիթարիչ, բժիշկ, օգնական, խրատիչ բարեկամ լինել նորան։ Հայաստանեայց եկեղեցին իւր ամբողջ կեանքում ունեցել է ժողովրդից շատ բարձր հոգևորականներ. ուսումը կեդրոնացած է եղել նոցա ձեռքում, ուստի և յառաջադիմութեան վարիչներ էին։ Նոյն իսկ Ս. Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցը միշտ ժողովրդից շատ առաւել ուսեալ հովիւներ և աշխարհականներ է տուել։ Ս. Էջմիածնի նուիրակներն ամեն տեղ իբրև հրեշտակներ են ընդունուել [2]։ Իսկ երբ ժամանակի հանգամանքները փոխեցին այդ դրութիւնը, Ներսէս Ե. ջանացաւ օգնել և աղատել հոգևորականներին իւրեանց անկումից, ըստ որում և հիմնեց Ներսիսեան դպրոցը։ Գէորգ Դ.

---

1) Տես և Ղ. Աղայեանի գրութիւնը Ճեմարանի առթիւ. Արարատ. 1869. էջ 31—32.

2) Տես զորօր. երեք նուիրակների (1506 թուին) գլխատման վրայ տաղը. Արարատ. 1869. էջ 223.

Ով որ տեսաւ զնոսա լըման,
Իբր հրեշտակ ընդունեցան.
Մեծն Յոհաննէս՝ սրբոց նման,
Եպիսկոպոս ազնուական։
Վանք 'ւ անապատք ուրախացան,
Յորժամ տեսին ըզերեսեան,
Զտէր Սարգիս եպիսկոպոսն,
Եւ զԴաւիթ կոյս աբեղայն։
Անուանք նոցա համբաւեցան. և ն։

դեռ կամեցաւ վանական դպրոցներ բարեզարդել՝ քահանաներ պատրաստելու համար [1], ուստի և ուսումնական յանձնաժողովին կանոններ մշակել տուաւ [2]: Նա զարկ տուաւ թեմական դպրոցների յառաջադիմութեան, տալով նոցա նաև կանոններ ու ծրագիր [3]: Սակայն նա չբաւականացաւ դոցանով և հիմնեց Ս. Էջմիածնի ձեմարանն, որ և բանալով 1875 թուին, որոշեց նորա ծրագիրն ու նպատակն ասելով.

«Նպատակ ձեմարանի Ս. Էջմիածնի է՝ պատրաստել զկուսակրօն եկեղեցականս բարեկիրթս և քաջահմուտս եկեղեցական և աստուածաբանական ուսմանց և արտաքին կարևոր և կենցաղօգուտ գիտութեանց և լեզուաց ի պէտս Հայաստանեայց եկեղեցւոյ»: Եւ «ուսումնաւարտ աշակերտք ձեմարանի պարտին ընդունել յատկապէս զաստիճան վարդապետութեան և աւհասարակ եկեղեցականութեան, և իրրև բայսաւութիւն՝ (կարգին) յուսուցչութիւն յազգային ուսումնարանս» [4]:

---

1) Տես նորա կոնդակն առ Սինոդը. Արարատ 1872. էջ 35.

2) Արարատ. 1869. 4.

3) Արարատ. 1869. էջ. 141. Տես և կանոնք ծխական դպրոցաց. Արարատ. 1876. էջ. 381. 1873. էջ 457.

4) Արարատ. 1874. էջ. 263. Աւանդելի առարկաներ են նշանակուած. 1. Կրօնագիտութիւն ընդարձակ. 2. Պատմութիւն Հայ. եկեղեցու. 3. Ընդհ. եկեղ. պատմ. 4. Գիտութիւն և մեկնութիւն ս. Գրոց. 5. Աստուածաբանութիւն տեսական, գործնական, բարոյական և բաղդատական. 6. Տոմարագիտութիւն եկեղեցական և հմտութիւն ժամակարգութեան. 7. Կրթութիւն եկեղեցական բեմբասացութեան. 8. Վարք ս. Հարց. 9. Եկեղեց. իրաւաբանութիւն. 10. Ազգային և Ընդ. դիցաբանութիւն. 11. Փիլիսոփայութիւն (հոգեբան. տրամաբանութիւն) և պատմութիւն փիլիսոփայութեան. 12. Ազգային պատմութիւն և աշխարհագրութիւն. 13. Ընդհ. և Ռուսաց պատմ. և աշխարհագրութիւն. 14. Թուաբանութիւն, բնաբանութիւն և տիեզերագրութիւն. 15. բնական պատմութիւն. 16. Հայկաբանութիւն և մատենագրութիւն Հայոց. 17. Ռուսաց լեզու. 18. Գաղղերէն. 19. Լատիներէն. 20 Յունարէն. 21. Եբրայեցերէն. 22. Գծագրութիւն և նկարչութիւն (առաւելապէս եկեղեցական). 23. Հայնագրութիւն Հայոց.

Իսկ Կանգակի մէջ բացատրելով եկեղեցականների ուսման մեծ նշանակութիւնը, շեշտում է. «յաջողեցաք վերջապէս յաւարտ ածել այսօր զհոյակապ շինութիւնն զայն. զոր և կազմեցաք Ձեմարան Գառանդաւորաց Սրբոյ Էջմիածնի, ի մտի եդեալ պատրաստել ի նմա զարժանաւոր կուսակրօն եկեղեցականս» . . . . «որք զարդարեալք բարձրագոյն ուսմամբք կրօնական գիտելեաց և կարևորացն աշխարհականաց լեզուաց և գիտութեանց, կրթիցին և զարգանայցեն ամենայն Աստուածահաճոյ վարուք և հաւատոյ վայելչութեամբք լցեալք՝ պատրաստեալք և ամեթացեալք՝ և յաւարտ ուսմանցն ելանիցեն ի հանդէս Ազգային հոգևոր դաստիարակութեան առ ի սերմանել և տարածել առաքելական զճշմարիտ վարդապետութիւնս Հայկազեան Աստուածատուրս կրօնի և դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց, արմատաքի քանցելով հանելով յազգային անդաստանէ զորոմանս նորահնար եկամուտ վնասակար մոլութեանց և սովորութեանց*, առ ի բանալ հետզհետէ զազգային զպրոցս և յաւելուլ յԱզգիս մերում զթիւ հոգևոր դաստիարակաց, բանիբուն քարոզչաց, քաղցրաձայն վարդապետաց, բարեսէր դպրապետաց, արիասիրտ հովուաց, մեծարգոյ իմաստասիրաց, համառօտ ասել՝ ի բարեպաշտ վարս կրթեալ և կարևոր ուսմամբք պերճացեալ եկեղեցականաց և ուսուցիչ վարժապետաց։ Այսոքիկ ահա լինելոց են պարտք աշակերտելոցն ի Ճեմարանիս առ սիրեցեալ Ազգն մեր...»

1874 թուին 28 սեպտեմբերի կատարուեց Ճեմարանի բացման հանդէսն, որում վերատին արտայայտուեցան թէ Հայրապետաց և թէ աշակերտներից և հանդիսականներից նոյն յոյսերը։

---

*) Կամ կռուել Հայաստ. եկեղեցու ներքին և արտաքին թշնամեաց դէմ. տես Արարատ. 1875. էջ 355.

1) Տես, Արարատ. 1874. էջ 342—353. Տես. և երկրորդ հանդէսի մէջ Ճեմարանի վերատեսուչ հանգուցեալ Գ. Արքեպիսկ. Այվազեանի ճառը (Արարատ. 1876. էջ 340), որով յիշում է և Գէորգ Դ.ի մտադրութիւնը «զընտրելագոյնսն ըստ ամենայն գլխոց յուսումնաւարտ ա-

Արդէն միւս տարին Ճեմարանի վերատեսուչը գրում է իւր ճառի մէջ. «Արդ ի տես և ի լուր այսքանոյ յուսապատար խընդութեան ընդ արգասիս օրհնութեան վեհիդ և աղօթից ս. Ուխտիս միաբանութեան, որպէս և անդուլ ջանից վարժապետացն մերոյ և աշակերտաց, ներեսցէ ինձ Ձերդ Վեհափառութիւն թոիչս արձակել առ վայր մի մտացս թևօք, և վերասլացեալ ի լուսափայլ գագաթն մեծի լերինդ Մասեաց, ի Հայկազեանդ ասեմ Ոգիմպոս, շուրջ յածել զականոդիս ի կայս և ի կոյս արևելից և արևմտից, հիւսիսոյ և հարաւոյ, և իբր ի պատկերի մեծի զԳէորգեանս Ճեմարան մատնանիշ ցուցանելով զդրուագ Հայաստանի՝ որ ի սփիւռս իցեն՝ քարոզ կարդալ առ նոսա և ասել. Մանկունք Հայաստանի, որդիք սիրասունք Վեհափառ Հայրապետիս մերոյ Գէորգայ Դ., զարթիք ի ձերմէ մահահանգոյն թմրութենէդ յուսահատութեան, յոր ընկղմեալ կայք յամաց բազմաց հետէ, մոռացօնս գործեցէք վայրիկ մի աղեսիցն մեծաց զորս կրեցէքն և սպառեցէք. սրբեցէք զարտասուս յաչաց ձերոց, և տեսէք զակնկալութեանցն ձերոյ նշոյլս պայծառապէս վալատակեալ առ տեղեաքն՝ յորս կոխեցին լուսաշաւիղ ոտք Նահապետին Նոյի և Լուսաւորչին ազգիս Գրիգորի Պարթևի և Ներսիսի Մեծի, և Սահակեանցն և Մեսրոպեանցն...»:

Ահա այսպիսի վիճակում և այսպիսի տրամադրութեանց տակ են բացուել Հայոց դպրոցներն ու Ճեմարանն, ինչպէս նկատում է բազմաթիւ ճառերի և ուղերձների միջից բերուած այդ քանի մի վկայութիւններից: Վանորոյ այսօր ևս առանց դուրս գալու նախագծուած շաւղից, կարենք հոգևոր ուսումն յառաջ տանել, ինչպէս ընդունուած է քաղաքակրթուած աշխարհի

շակերտաց Զ. դասարանին առաքել ի դէպ ժամուն ի համալսարանս Եւրոպիոյ Ծախիք Ճեմարանիս, որպէս զի անդանօր զամն երկուս կամ երիս կատարելագործեալք ի պէսպէս մակացութիւնս և ի հմտութիւնս՝ դարձ այսրէն առնիցեն, եթէ հնար է՝ մէն մի Խորենացիք և Եղիշայք և Եզնիկք և Ղազարիկք....». Եթէ Ճեմարանը կանոնաւոր պահուի, ճշմարիտ որ 2 տարին բաւ է ուսման այդ կատարելագործման համար։

դպրոցներում և համալսարաններում։ Մենք յարմարութիւններ չունինք պահանջելու աստուածաբանական ուսման այն ընդարձակութիւնն, որ տիրապետող է Եւրոպայում, սակայն անհրաժեշտն և աչքաթող անելն՝ ապաշնորհութիւն է, թէ չասեմ անազնուութիւն և չարագործութիւն։ Բոլոր առարկաներն և՛ կարող են շատ գեղեցիկ կերպով դասաւորուիլ, միայն թէ ոչ մի ամբողջական առարկայ չդարձնել երկու երեք տարուց աւելի դասընթացք և ոչ մի առարկայի չտալ բաւականից աւելի ժամեր [1]։ Եթէ եկեղեցական պատմութիւն կամ հանրահաշիւ կամ ուրիշ առարկաները 3 – 4 տարի անցնենք, տասը տասնուհինգ տարիներ անգամ չեն բաւականանալ՝ ուսումը վերջացնելու համար։ Արդ՝ սակաւ, բայց լաւ, այս է մանկավարժութեան անփոփոխելի սկզբունքը։ Ընդ սմին ուսուցման և կարգապահութեան մանկավարժական սկզբունքները պէտք է անպայման իրագործուին դպրոցներում և մանաւանդ Հոգ. դպրոցներում։ իսկ դորա համար հարկաւոր են մանկավարժներ և ոչ թէ վարձկաններ։ Դաւաճանել այդ գիտութեան սկզբունքներին՝ մի և նոյն է թէ մի ձեռքով շինածը միւս ձեռքով քանդել . . . ։

3՛։

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋԸ։

Ով որ գիտութիւնը սովորում է՝ ճանաչելով նորա բարձրութիւնն ու բարերար ազդեցութիւնը մարդկային ազգի կատարելագործման համար, նա երբէք չէ վերջացնում իւր ուսումը։

---

1) Դպրոցների ծրագիրը փչանում է, երբ մի ուսուցչի չլինելու պատճառով՝ նորա առարկայի ժամերն աւելացնում են մի ուրիշ ուսուցչի առարկայի վրայ, որ իրը թէ բաց չյարաջանայ. դորանով խախտում են ուսման մանկավարժական սկզբունքը, ձանձրացնում աշակերտին և ժամանակի ընթացքում սովորութեամբ փոխում է ծրագիրը։ Հոգևոր դպրոցների ծրագիրն ամեն տեղ գրեթէ նոյն է, որին և պէտք է հետևել։ Տես. օր. ռուսաց հոգևոր դպրոցների ծրագիրը, վերև § 21։

Դպրոցի գասընթացքն աւարտելով՝ նա շարունակում է կեանքի մէջ ևս իւր ուսումն՝ թէ իւր առարկան և թէ նոյն իսկ կեանքն ուսումնասիրելով։ Հետևել գիտութեան և մանաւանդ սեփական մասնագիտութեան, կարդալ գիտնական գրքեր և թերթեր, սրտակցել գիտութեամբ զբաղուողներին օրըստօրէ յառաջադիմելով զարկ տալ ճշմարտութեան յաղթանակին հասարակութեան մէջ, ըստ սրում և ճշմարտութեամբ մասնակցել ժողովրդի գործերին և գործել նորա համար թէ խօսքով՝ թէ գրչով և թէ գործով՝ ահա այս է աստուածաբանի ճանապարհը։

Վերջացնել ուսումն և միայն պաշտօնի ծառայել՝ նոյն է թէ չհասկանալ իւր բարձրութիւնն և ապերախտ վաշխառու լինել գիտութեան ու լուսաւորութեան. յանուն գիտութեան և քաղաքակրթութեան խօսել՝ դաւաճան լինելով նորա դրօշակի դէմ կամ թէ գիտութեան դրօշակիր հռամարուել՝ գիտութիւնը մասնաւոր շահերի ծառայեցնելով հանդերձ՝ այդ սորաքարշ սարկութիւն է։ Ճշմարիտ աստուածաբան ուսումնականի սկզբունքն ու նշանաբանը պէտք է լինի գիտութեան ճշմարտութիւնը կամ աստուածային լոյսի յաղթանակն և ոչ թէ հացն՝ որ ամենատգէտն անգամ տեսնում է *։

Սակայն յանուն գիտութեան և նոյն իսկ յանուն ս. Գրքի խօսողը պէտք է նախ երկրպագու ծառայող և ուսումնասիրող լինի նոցա. նա՝ որ չէ սուղսած մի գիտութեան մէջ՝ նա՝ որի առօրեայ զբաղմունքը չէ գիտութիւնն՝ նա իրաւունք չունի գիտնական դատողութիւն տալու՝ ապա ուրեմն և չի կարող ներգործական գիրք բռնել. նա միայն ընդունող է։ Գիտութեան դրօշակիրները պէտք է մասնագէտներ՝ հաւատարիմներ լինին՝ որոնք երբէք հայի համար չեն փոխիլ իւրեանց մասնագիտութիւնն մի այլ մասնագիտութեան պատկանած պաշտօնի հետ և միշտ կծառայեն նորան։

---

*) «Զհաց աւուրն քրտամբք հրամայեաց քեզ ուտել՝ և դու զկեանս յաւիտենից քնով կամիս ժառանգել։ Եօթանասուն ամէ կարդեալ զկենաց քոց՝ և զայն ցաւօք և հեծութեամբ. դու զհաղարամեայ օրն առանց ցաւոց կամիս ժառանգել»։ Եղնիկ։

Իսկ երբ իւրաքանչիւր գիտութիւն ունենայ իւր ճշմարիտ պաշտօնեան, միայն այն ժամանակ կարող ենք ճանաչել ուսումնականի յարգը, միայն այն ժամանակ արժէք կունենայ մասնագէտի կարծիքը, միայն այն ժամանակ կհաւատայ հասարակութիւնն իւր գործիչին և ճշմարիտ յառաջադիմութիւն կլինի*։ Այն ժամանակ վարպետը կճանաչէ իւր գործն և գործը կճանաչէ իւր վարպետին, ապա թէ կարող կլինի ասել· «գործի քնար, այլ ի ձեռն քնարահարի»։

Աստուածաբանութիւնը պահանջում է հաւատարիմ պաշտօնեաներ, որպէս և ամեն գիտութիւն, ըստ որում աստուածաբանի անխզելի ուխտն Աստուծոյ առաջ է, ուստի և նա է ժողովրդի յառաջադիմութեան երդուեալ առաջնորդը։ Այդ պաշտօնեաները պէտք է ելնեն Հոգևոր դպրոցներից, ուսանելով այդ գիտութեան պահանջածը հոգով և սրտով։ Հաւատարմութիւն դէպի Հայաստանեայց ս· եկեղեցու ս· Հայրերի սկզբունքներն ու վարդապետութիւնն — այդ է աստուածաբանի անպայման ուխտը։ Եկեղեցի, ուրեմն և ազգ — դոքա են, որոնց դիմաց ունի Հայոց դպրոցի ուսանողն անխուսափելի պարտքը։ Այդ ուխտի հիման վրայ պէտք է նա ուսանէ ԺԹ· դարի գիտութիւնները, կրթուի, զարգանայ և ապա Հայաստանեայց ս· եկեղեցու անշէջ ջահի անվեհեր կրողը լինել Հայ ազգի մէջ։

Սակայն այդ ամենը կիրագործէ նա, որի մէջ կենդանի է լոյս հաւատն և պարտքի վսեմ նշանակութեան ճանաչողութիւնն և որ՝ իւր ուսումն աւարտելով հանդերձ՝ նաև կեանքում ուսման մէջ է յարատևում։

Ա· ՏԷՐ ՄԻՔԷԼԵԱՆ

(վ. հ ր ջ)։

---

*) Ոչ ոքի չի կարելի մի պաշտօն յանձնել, որի համար նա չունի գիտութեան պահանջածը։ Իւրաքանչիւր պաշտօնի համար անհրաժեշտ է և որոշ գիտութեան որոշ «ցենզ»։ առանց որի թէ պաշտօն տուողն և թէ ընդունողը հաւասարապէս մեղանչում են արդարութեան դէմ։ Մանաւանդ առանձին և մեծագոյն ուշադրութիւն պէտք է դարձնել դաստիարակների վրայ, որոնք պարտ են ուսեալ, մանկավարժ և բարոյական մարդիկ լինել։

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԴԱՐԱՑԻՄ

(Հարունակութիւն)։

Մարդկութեան մեղաց մէջ անկման և նորա փրկութեան վերաբերեալ վարդապետութեան մասին մենք նկատեցինք՝ որ բոլոր եկեղեցիներում այն վարդապետութիւնն էր՝ որ անկեալ մարդուն անհրաժեշտ էր փրկուել Աստուծու առջև վերականգնելու համար՝ և հարկաւոր էր աստուածային օգնութիւն կամ շնորհք բարին գործելու համար։

Ցիրաւի՝ մարդ ստեղծուած էր ազատ՝ սակայն իր մեղանչականութեամբ այնչափ թուլնաւորուեց՝ որ Պօղոս առաքեալի ասածին համեմատ չարիք էր գործում՝ և բարին գործել չէր կամենում։ Նրա ստացած վէրքը մահացու էր այն մտքով՝ որ եթէ նա առանց շնորհքի և փրկութեան մնար՝ նրան յաւիտենական մահ կպատճառէր։ Միայն թէ այդ վէրքը դեռ ևս նոյն ինքն մահ չէր։ և եթէ մարդ գրեթէ այլապէս չկարողացաւ իր ազատութիւնը գործ դնել՝ բայց եթէ չար գործել՝ այնուամենայնիւ բարին գործել նրա համար դեռ ևս հնարաւոր էր՝ ինչպէս որ Պօղոս առաքեալն առ Հռոմայեցիս գրած թղթի մէջ ասում է։ Հետևաբար չէ կարելի անպայման կերպով ասել՝ թէ մարդուս ազատութիւնը մեռաւ՝ և մարդ այնուհետև միմիայն չարը պիտի գործէր։ բայց բոլոր միւս եկեղեցու հայրերի հետ արդարապէս կարելի է ասել՝ որ նրա ստացած վէրքը մահացու էր և թէ մարդ չէր կարող այլապէս ապրել՝ բայց եթէ իր ազատութիւնը դէպի չարը գործածել։ Բանականութիւն և ազատութիւն այնպէս ոչնչացած չէին՝ ինչպէս մարդկային բնութիւնը՝ որ վերածնութեան կարօտ էր։ մարդկային ամենա-ազնիւ ընդունակութիւնները—բանականութիւն և ազատութիւն այնչափ թուլնաւորուած և ապականուած էին՝ որ ճշմարտութիւնը մարդու աչ-

քի առջև խաւարի մէջ ծածկուած էր և չարը նրան շատ յաճախ էր հրապուրում։

Ոչ ոք այն մասին չէ վիճում, որ մարդ մինչև անգամ իր անկումից յետ ևս պահեց այն բնութիւնը, ինչ որ Աստուած նրան պարգևել էր։ Բայց երբ ընդունւում է, որ այդ բնութիւնն ընկաւ, ուստի նրան հարկաւոր էր վերածնել։ Ոմանք համաձայնեցին, որ բնութիւնն արդէն ինքն ըստ ինքեան գոյութիւն ունէր, բայց միայն ստոր և կոյր դրութեան մէջ էր, և թէ նրա լուսաւորութեան համար անհրաժեշտ էր յայտնութիւն, իսկ վերածնելու, նոր հոգևոր ծնունդ ստանալու համար հարկաւոր էր արիւնով գնուել և փրկուել։

Մարդս այնքան կուրացած չէր, որ բնական կերպով չտեսնէր բարին, բայց այնքան ստորացած էր, որ անընդունակ էր բարին գործելու։ Նրան անհրաժեշտ էր գերբնական օգնութիւն նոր, սուրբ կեանքի համար՝ բարին սիրելու և գործելու։ Նրա բնութիւնը մեռած չէր, այլ վարակուած էր մի այնպիսի վէրքով, որ կարող էր յաւիտենական մահուան հասցնել առանց ի վերուստ առաքուած գերբնական օգնութեան։

Առաջին երեք դարու եկեղեցին ամենայն հաւատարմութեամբ հետևում էր Պօղոս առաքեալի վարդապետութեան։ «Զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել ևս յաւելան շնորհքն։ Զի որպէս թագաւորեցին մեղքն ի մահու անդ, նոյնպէս և շնորհքն թագաւորեսցեն արդարութեամբ ի կեանսն յաւիտենից ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ» Հռմ. Ե. 20. 21։

Առաքեալի հետ ի միասին բոլորն ևս հաւատում էին, որ մկրտութեամբ մեղաւոր մարդ թաղւում և յարութիւն է առնում արդարութեան համար նոր հոգևոր կեանք զգենլով, և թէ մկրտութիւնը մահուանից դէպի կեանք անցնելն է։

Եւ որովհետև անկեալ բնութիւնը ներկայումս ևս կայ, ուստի պէտք է ենթադրել, որ նոյնպէս գոյութիւն պիտի ունենային երկու հակառակ սկզբունք, բարի և չար։ Եթէ որ նոքա ընդ միշտ չմնային, այն ժամանակ չարը պիտի ոչնչացնէր բնութիւնը և չար սկզբունքն ամեն տեղ պիտի թագաւորէր. կամ թէ շնորհքի ներգործութեամբ բարի սկզբունքն ամեն տեղ պիտի իշխէր։ Բայց որովհետև մինչև աշխարհիս վերջ բնութիւնը պիտի լինի, ուստի և դրանից հետևում էր որ բարւոյ և չարի կռիւը, սկըսած մարդու անկումից մինչև ապագայ նոր կեանքը, պիտի շարունակուի։

Հետևաբար, քրիստոնէութեան գլխաւոր նպատակն է վերածնել մարդկային կամքն ու բանականութիւնը հաւատքով և գրական հաւատոյ վարդապետութիւններով։ Այս հաւատոյ վարդապետութիւնները գտնւում են առաքեալների և սրանց անմիջական աշակերտների վարդապետութեանց մէջ. նոցա մենք գտնում ենք նաև առաջին երեք դարու քրիստոնէութեան

յիշատակարանների մէջ։ և քրիստոնէական պաշտամունքի խորհրդների մէջ։

Մկրտութեամբ մարդս նոր կեանք է զգենում։ օծմամբ և դրոշմամբ ու աղօթքով նորոգ մկրտեալը ստանում է ս. Հոգու շնորհքը։ Մեղանչող քրիստոնեան իր մեղքերը խոստովանում էր Աստուծու և եկեղեցու հովիւների առջև և ապա եղբայրների ներկայութեամբ ապաշխարելով թողութիւն էր ստանում։

Յիսուսի կատարած վերջին ընթրիքի յիշատակը նրա պատուէրի համեմատ կատարում էին եպիսկոպոսներ կամ քահանաներ անապակ գինի և բաղարջ հաց սրբագործելով։ Հաւատացեալները երկիւղածութեամբ ներկայ էին այդ սրբագործութեան։ որ նոցա աչքերին Գողգոթայի զոհն էր։ խորհրդաբար և առանց արիւնի նորոգուած։ Հաղորդութեամբ նոքա մասնակից էին լինում Քրիստոսի մարմնոյ և արեան և այդ նոցա համար մեղաց թողութեան և յաւիտենական կեանքի յուսոյ առհաւատչեան էր։

Ս. հաղորդութեան խորհրդի կատարումից առաջ կային նախապատրաստական աղօթքներ և ապա բերում էին սրբագործելու համար գինի և հաց։ Բոլոր այդ աստուածպաշտական գործողութիւնները կազմում էին աստուածային պաշտամունքի գլխաւոր և էական մասը։ Հիւանդների տկարութեան թեթևութեան համար եկեղեցու մէջ կար ս. խորհուրդ։ որի գլխաւոր մասն էր աղօթքն ու օծումը։ Ամուսնութիւնը քրիստոնեաների մէջ ենթարկւում է խիստ օրէնքների և դառնում է եկեղեցու ս. խորհրդներից մինը։

Վերջապէս։ եկեղեցու հովիւների ձեռնադրութիւնը լինում էր առաքեալների ծէսերի համեմատ։ որով իրաւունք էին ստանում քահանայագործելու։ Եկեղեցական կանոնները ցոյց են տալիս։ թէ ինչպիսի մեծ նշանակութիւն էր տրւում առաքելական պաշտամունքը շարունակող անձինքների ընտրութեան և ձեռնադրութեան։ Եկեղեցին իր պատմութեան առաջին շրջանում հետևում էր Փրկչի և առաքեալների վարդապետութեանց։ անթերի կատարելով նոցա հաղորդած ս. խորհուրդները։

Եկեղեցին հէնց սկզբից ներկայանում է մի այնպիսի կազմակերպութիւն ունեցող։ որ տուել են Նրան Յիսուս Քրիստոս և առաքեալները։ Եկեղեցին։ ընդհանրապէս նայելով։ Ճշմարիտ քրիստոնեաների ժողովն է։ այսինքն ճշմարիտ քրիստոնէական վարդապետութիւն դաւանողների ժողովը։ Աստուած միայն կարող է հաւատացեալների ներքին տրամադրութիւնը դատել։ ուստի և սուրբեր ասելով պիտի հասկանանք ճշմարիտ քրիստոնեաներին։ Աւետարանի մէջ եկեղեցին նմանում է մի արտի։ ուր բարի սերմերի հետ ի միասին աճում են նաև որոմներ.—ուռկանի։ որով անխտիր բռնում են լաւ և վատ ձկներ։ հետևաբար եկեղեցու մէջ կան թէ բարիներ և թէ չարներ։ թէ արդարներ և թէ մեղաւորներ։ բայց որպէս արտաքին

մի միաբանութիւն։ Եկեղեցին կազմուած է ճշմարիտ հաւատոյ վարդապետութիւնը դաւանողներից։ Սոցա հէնց սկզբից անուանեցին հաւատարիմներ և սուրբեր, որոնք հերետիկոսներից և մեղաւորներից տարբերուում էին իրանց սուրբ և անարատ դաւանանքով և եկեղեցու առաջնորդութեան և կառավարութեան համար սահմանած կանոնների հնազանդութեամբ։

Եկեղեցին հէնց սկզբից առաքելականութեան վերայ հաստատուած է ներկայանում։ Խորհրդաւոր տաճարի երկոտասան առաքեալները երկոտասան սիւներ են, որոնք հաստատուած են անկեան վիմի—Յիսուս Քրիստոսի վերայ։ Առաջին երեք դարու մատենագիրները սիրում էին եկեղեցին փոխաբերական բառերով կոչել. այդպէս բոլոր հաւատացեալներին անուանում էին շինութեան քարեր, որոնցով շինուած էր հաստատութիւնը և որը պահպանում է երկոտասան սիւներով անշարժ վէմի վերայ հաստատուած։

Առաքելականութիւնը պատմութեան մէջ մի ժամանակաւոր հաստատութիւն չէ ներկայանում, որ երկոտասան առաքեալների կեանքի հետ վախճան ունենար։ Նա կազմում էր նոր ուխտի քահանայութիւն և ինչպէս որ այդ ուխտը նշանակուած էր ամեն տեղի և ժամանակի համար, այնպէս և այդ քահանայութիւնը պիտի շարունակուէր, ուստի և հէնց սկզբից տեսնում ենք, որ առաքեալները ձեռնադրութեան միջոցով ուրիշներին տալիս էին Փրկչից իրենց տրուած պաշտօնը։ Նոր ձեռնադրեալները շարունակում էին իրենց առաքելութիւնը, երկոտասան առաքեալների տեղը բռնելով. սոքա ևս միևնոյն կերպով տալիս էին ուրիշներին իրենց պաշտօնը, ինչ կերպով որ ստացել էին առաքեալներից։

Եկեղեցին ոչ մի ժամանակ առանց քահանայութեան չէ մնացել, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ առաքելութեան հաղորդումը (1)։ Այդ քահանայութիւնը ունի երկու աստիճան։ Յիսուս Քրիստոս ինքն ընտրեց տասն և

---

(1)։ Մատենագիրներից ոմանք հաստատում էին, որպէս թէ քահանայութիւնն պատկանում էր ամբողջ քրիստոնեայ միաբանութեան, որ Պետրոս առաքեալի (ա. Պետր. Բ. 9.) ասածին համեմատ կազմում էր ընտիր ժողովուրդ և արքայական քահանայութիւն և թէ ժողովուրդը պէտք է իրեն զոհաբերէր Աստուծուն (Հռմ. ԺԲ. 1)։ Այս դրութեան համեմատ եկեղեցու մէջ պաշտօն կատարելը՝ միաբանութեան զանազան անդամներին տրուած պարգևներից մինն է։ Նայելով թէ ով ինչ բանի վերայ Աստուծուց նախապէս նշանակուած է։ Պօղոս առաքեալը (ա. Կորնթ. ԺԲ. 9) այդ մատենագիրների հասկացողութեան համեմատ առաքելութիւնը հրաշագործութեան շնորհքի հետ հաւասար է դասում։

Այս դրութիւնը պատմական ճանապարհով պաշտպանել անհնարին է. իսկապէս ասած քահանայութիւնն ոչ եկեղեցուն է պատկանում և ոչ էլ ընտրեալ պաշտօնեաներին, այլ միայն Յիսուս Քրիստոսին՝ Նոր ուխտի Քա-

երկու առաքեալներին և եօթանասուն աշակերտներին, որոնք աստիճանով առաքեալներից ստոր էին։ Միևնոյն պայմանների տակ քահանայութիւնը շարունակւում է նոցա յաջորդներով։ Մենք չենք հանդիպում մի այնպիսի ժամանակի, երբ որ և իցէ մի այլ կարգ գոյութիւն ունեցած լինի։ Մեզ յայտնի է նոյն իսկ Նոր Կտակարանից թէ ինչպէս Պօղոս առաքեալի աշակերտները Տիմոթէոս և Տիտոս Կրետէում և Եփեսոսում տեսուչ են նշանակւում եկեղեցիների կազմակերպութեան և նոցա մէջ երկրորդական հովիւներ հաստատելու համար։ Նոյնպէս Յովհաննէս աստուածաբանի փոքր Ասիոյ եօթն եկեղեցիներին գրած թղթից ևս երևում է, որ դոքա ունեցել են «հրեշտակներ» կամ եպիսկոպոսներ, որոնք տասն և երկու առաքեալների յաջորդներն են համարուած։

Առաջնակարգ հովիւները ոչ մի տիտղոս չունէին, որով զանազանուէին երկրորդական հովիւներից, այլ սոցանից զանազանւում էին իրանց ընդարձակ իշխանութեամբ։ Առհասարակ դոցա բոլորին երէցներ, կամ վերատեսուչներ էին կոչում։ Այդ անունների նմանութիւնից ոմանք եզրակացրին որպէս թէ բոլորի իշխանութիւնը հաւասար է եղած։ Այդպէս մտածողները մոռացել են այն բազմաթիւ իրողութիւնները, որոնք հակառակն են հաստատում 1)։

Երկրորդ դարից սկսած եկեղեցու հովիւների համար գործածուած բառերն աւելի որոշեալ միտք են ստանում։ Եպիսկոպոս են անուանում այն քահանային, որին պատկանում էր քահանայութեան բարձր աստիճան, իսկ երէց՝ որին պատկանում էր ստորին աստիճան։

Առաքեալները քահանայութեան այս երկու աստիճանին աւելացրին մի

հանայապետին։ Ամբողջ քրիստոնեայ միաբանութիւնը կոչուած է այդ քահանայութեան խորհրդաբար մասնակցելու։ Նոյն իսկ պաշտօնեաները կարող են արժանաւոր կերպով քահանայագործել միայն աստուածային շնորհքի միջոցով և եթէ որ նոքա ընտրուած են այդ մեծ պաշտօնի համար։

Ահա ինչ որ կարելի էր հանել վերոյիշեալ գրութիւնը պաշտպանողների գրածներից։ Դոցանից ոչ ոք չէ մերժում այն մեծ իրողութիւնը, որ Յիսուս Քրիստոսի քահանայութիւնը առաքեալներից և եօթանասուն աշակերտներից ընդունուած, յաջորդաբար շարունակւում է, որի աղբիւրն է առաքելականութիւնը, և թէ դրա հաղորդման միջոցն է աղօթք և ձեռնադրութիւն առաքեալների և նոցա օրինաւոր յաջորդների միջոցով։

1) Մենք չենք վիճում, որ ս. գրքի մէջ եպիսկոպոսները կոչւում են նաև երէցներ և այս մտքով գործ է ածւում ընագրի մէջ Գործ. Ի. 17—25. Ա. Տիմ. Գ. Տիտ. Ա. 5—7։ Սակայն երկու բառի նմանութիւնը բաւական պատճառ կարո՞ղ է լինել պալզ և ակնյայտնի իրողութիւնը հերքելու համար. Քահանայութեան երկու աստիճանի մէջ եղած տարբերութիւնը՝ ոչ թէ նոցա կրած անուններին է վերաբերում, այլ նոցա ընդարձակ կամ սահմանափակ իշխանութեան։

երրորդ աստիճան սարկաւագների կամ սպասաւորների, որոնք քահանաների օգնական էին։ Այս երեք աստիճանը կազմում էին եկեղեցու մէջ սուրբ նուիրապետութիւն։

Մատենագիրներից ոմանք հաստատում էին, որպէս թէ եկեղեցու մէջ սկզբից քահանայութիւն չկար, այլ միայն սպասաւորութիւն— բոլոր անդամները միմեանց հաւասար են եղած և թէ եկեղեցու սկզբնական կառավարութիւնը հասարակապետական էր։ այսպիսի վարչական եղանակից եկեղեցին անցնում է եպիսկոպոսութեան հաստատութեան միջոցով ազնուապետական կառավարութեան և վերջապէս պապականութեան հաստատութեամբ՝ միապետութեան։ Սակայն մեզ սրանից աւելի պատմութեան հակառակ դրութիւններ յայտնի չեն։

Նոքա, որոնք այդ դրութեան հետևող են, չեն կարողանում փաստերով հաստատել իրանց դրութիւնը և ցոյց տալ այն ժամանակը, թէ ե՞րբ արդեօք այդպիսի վարչական եղանակներ եկեղեցու մէջ յառաջ են եկել։ Նոքա պէտք է իրողութիւններով ճիշտ որոշէին այն դարը, երբ եպիսկոպոսութիւն հաստատուեցաւ, և երբ եկեղեցին հասարակապետական դրութիւնից անցնում է ազնուապետականին։ Այնու ամենայնիւ նոքա ոչ մի ժամանակ չկարողացան ցոյց տալ այն դարը, մինչդեռ մենք բազմաթիւ իրողութիւններ յիշատակեցինք, որոնք այդ դրութիւնը հերքում են 1)։

---

1) Այդ դրութիւն պաշտպանող մատենագիրներից գլխաւորն է Պ. Գիզո։ Դա իր «Պատմութիւն յաղագս քաղաքակրթութեան Ֆրանսիոյ» աշխատասիրութեան մէջ հաստատում է, որպէս թէ եկեղեցին հասարակապետութիւնից անցել է ազնուապետութեան, իսկ այնուհետև միապետութեան, բայց իրողութիւնները հաստատում են որ եկեղեցին վարչական այդ եղանակներից ոչ մինի տակ չէր գտնւում։ Այստեղ անօգուտ չի լինիլ, եթէ որ նոյն իսկ պ. Գիզոյի դրութիւնը բացատրենք։ Այս մատենագրի կարծիքով կրօնական Համայնքի ներքին կազմակերպութեան մէջ կարող են երևալ բազմաթիւ զանազան տեսակ սկզբունքներ և ձևեր։

Նախ՝ երկու գլխաւոր դրութիւն ա. իշխանութիւնը կարող է կենդրոնացած լինել հոգևորականութեան մէջ, և այդ դէպքում կրօնական համայնքը կառավարում է հոգևորականներով։ բ. կրօնական համայնքը կառավարում է ինքն իրան կամ թէ խառնում է իր վարչութեան մէջ։ և հասարակական կազմակերպութիւնը տարածում է թէ հաւատացեալների և թէ քահանաների վերայ։ Եթէ վարչութիւնը հոգևորականութիւնից է կախուած, այն ժամանակ նա կարող է երեք տեսակ կազմակերպութիւն ունենալ, կարող է լինել հասարակապետական՝ եթէ որ հոգևորականութեան բոլոր անդամները հաւասար են—ազնուապետական կամ միապետական։ Իսկ եթէ կրօնական համայնքն ինքն իրան է կառավարում՝ այն ժամանակ տարաբերութիւններ շատ կլինին։ 1, աշխարհականներ կարող են քահանաների հետ միասին կառավարել։ 2, ամեն մի մասնաւոր եկեղեցի կարող է անկախ լինել։ 3 կարող է այն ևս պատահել, որ հոգևորականութիւն չլի-

Գալով եկեղեցու միապետական կառավարութեան անցնելուն, վերոյիշեալ մատենագիրները պաշտպանելով այդ կարծիքը, ցոյց տուին զարմանալի անուշադրութիւն և եկեղեցու մի մասը ամբողջ եկեղեցու տեղ ընդունեցին. Ցիրաւի, միայն արևմտքում հաստատեցաւ եկեղեցու միապետական կառավարութիւն կամ պապականութիւն. Արևելքը, որ մի ժամանակ եկեղեցու ամենալուսաւորեալ մասն էր համարւում, երբէք այդպիսի վարչական եղանակը չընդունեց, մինչև ցայժմ պահպանած է եկեղեցու սկզբնական կազմակերպութիւն որ հիմնուած է քահանայութեան երկու աստիճանի վերայ.

Մենք յարմար տեղում ցոյց կտանք այն ժամանակը, երբ արևմուտքն աստուածային յօրինուածութիւնը մերժեց և ենթարկուեցաւ հոգևորական միապետութեան լծին. իսկ այժմ միայն ընդհանրապէս ցոյց կտանք մի քանի պատճառներ, որոնք արևմուտքը եկեղեցական միապետութեան հասցրին Աւետարանի ոգուն հակառակ.

Արևելքը մի աղբիւր էր, որտեղից քրիստոնէութեան լոյսը տարածուեցաւ արևմտքում. Այստեղ միայն Հռոմայ եկեղեցին հաստատուած էր առաքեալի ձեռքով, իսկ միւս փոքրաթիւ եկեղեցիները հաստատուած էին առաքելական դարու մարդիկների ձեռքով, որոնք ամենքն էլ արևելքից եկան և ցրուեցին մեծ մասամբ արևմտքի հռոմէական և յունական գաղթականութեանց մէջ. Այնտեղից քարոզիչներ գնացին հիւսիսային Գալլիի և հոգևորականի պարտականութիւնները կկատարեն իրենք աշխարհականները ներշնչմամբ կամ պատգամմամբ.

Գիզոյի կարծիքով բոլոր այդ սկզբունքները գործադրւում էին և իրապէս գոյութիւն ունէին. Միայն թէ նա ընդունում է որ քրիստ. համայնքի գլուխ եղել է միշտ հոգևորականութիւնը, որովհետև, ասում է նա, ձեռնադրութիւնը եկեղեցու մէջ մի սկզբնական իրողութիւն է. Սակայն պ. Գիզոյի համար պարզ է, որ հոգևորականութիւնը սկզբում չէր կառավարում կրօնական համայնքը, և այս նրա համար, ինչպէս որ ինքն Գիզոն ևս նկատում է, որ այդպիսի բարոյական հասարակութիւն չէր կարող յառաջ գալ առանց անդամակիցների մեծամասնութեան գործունէութեան. Նա ասում է, կասկած չկայ, որ սկզբում քրիստ. հասարակութիւնները ամեն մի քաղաքում մեծ մասամբ իրանք իրանց էին կառավարում և միմեանցից բաժան. Բայց թէ պ. Գիզոն ինչպիսի՞ փաստեր է յառաջ բերում իր ասածը հաստատելու համար.—Ոչ մինը. Բայց եթէ նա կամենար, դրա հակառակ շատ փաստեր կարող էր գտնել. Պ. Գիզոն սկզբում եկեղեցու վարչութեան զանազան ձևերը քննելուց զկնի, միևնոյն ժամանակ ասում է, որ կրօնական համայնքներին կառավարողը հոգևորականութիւնն է, որ որոշուած է հաւատացեալներից ձեռնադրութեամբ, եկեղեցու մէջ եղած այդ սկզբնական իրողութեամբ. Բայց նա գտնում է, որ այդ հոգևորականութիւնը կառավարութիւն էր, սկզբում հասարակապետական, յետոյ ազնուապետական և վերջը միապետական. Սկզբում հոգևորականութեան բոլոր աստիճաններ-

այի և Մեծ Բրիտանիայի գլխաւոր տեղերը։ Միայն երրորդ դարում Հռոմը իր քարոզութիւնը տարածեց միջին Իտալիայի սահմաններում։ Պէտք է նկատել, որ եկեղեցիներ միայն հաստատուում էին քաղաքներում։ գիւղերում սկսեցին քարոզել միայն չորրորդ և հինգերորդ դարու ընթացքում առանց արևելեան եկեղեցու ազդեցութեան։

Բոլոր արևմտեան եկեղեցիները բնական կերպով խմբուած էին արևմտքի ամենանշանաւոր և հարուստ հռոմէական եկեղեցու շուրջը։ դա էր արևմտքի միակ առաքելական եկեղեցի, որ կարող էր արևելեան եկեղեցու հետ ունեցած հաղորդակցութեան մէջ պահպանել։

Հիւսիսային Ափրիկէն իր տեղագրութեան դրութեան համեմատ պատկանում էր Կայսրութեան արևմտեան մասին, բայց երկրորդ դարից սկսած այնտեղ աւելի շատ քրիստոնէական կեանք կար, քան արևմտքի ուրիշ մասերում։ Հռոմէական լուսաւորութիւնն թէև այնտեղ տարածւում է Կարթագինէն նուաճելու ժամանակից, բայց Հռոմի դէմ ընդդիմադրական ոգին միշտ պահպանւում էր։ Ափրիկէի եկեղեցին եղբայրական յարաբերութեան մէջ էր արևմտքի միակ առաքելական կեդրոնի հետ, բայց նոյնպէս կապակցութիւն ունէր Աղէքսանդրիոյ հետ։ և սրա միջոցով արևելքի հետ։ Ափրիկէի եկեղեցին զանազան հանգամանքներից դրդուած ենթարկուած էր հռոմէական եկեղեցու ազդեցութեան։ Տերտուղիանոս՝ հիւսիսային Ափրիկէի եկեղեցու նշանաւոր հայրերից մինը պաշտպանեց իր եկեղեցին հռոմէա-

---

ը հաւասար էին, բայց շուտով նոցանից ոմանք ծննդեամբ ազնուական լինելով և մեծ քաղաքներում ապրելով, հետզհետէ միւսներից որոշւում են և դառնում եպիսկոպոսներ։ իսկ այնուհետև նոցանից մինը, իր բնակած դրքի համեմատ գլխաւոր քաղաքում հետզհետէ ազդեցութիւն է ձեռք բերում և դառնում է պապ կամ եկեղեցու թագաւոր։

Գիզոյի յայտնած գաղափարներն առանց հիմունքի են, ոչ մի քննութեան չեն դիմանում։ նոյն ինքն Գիզոն ամեն մի քայլափոխում իրեն հակասում է և ցոյց է տալիս քրիստոնէական սկզբնական յիշատակարաններին անտեղեակ լինելը։

Որպէս զի Գիզոյի գործ դրած տրամաբանութեան մասին գաղափար կազմած լինենք, նրա խորհրդածութիւններից մի քանիսը միմեանց հետ համեմատենք։

Նրա սկզբնական եկեղեցու կառավարութեան մասին յայտնած մտքերի գլխաւոր եզրակացութիւնն այն է, որ իսկապէս կառավարութիւն չկար, նրա համար, որ մասնաւոր եկեղեցիները միմեանցից բաժան էին և իրենք իրանց էին կառավարում ամեն հնարաւոր միջոցներով, որոնք նրա կարծիքով բոլորն էլ գործ էին դրւում։

Համեմատենք այս եզրակացութիւնը պ. Գիզոյի «պատմութիւն յաղագս լուսաւորութեան Եւրոպիոյ» երկի մէջ ասած հետևեալ խօսքերի հետ՝ «երբ որ, մարդկանցից մի որոշ մաս միմեանց հետ միանում է ընդհանուր կրօնական կարծիքներով, այն ժամանակ նոցա համար կառավարութիւնն անհրաժեշտ է։ Ոչ մի հասարակութիւն չէ կա-

կան եպիսկոպոսների պահանջների և ձգտումների դէմ։ իսկ նորա աշակերտ Կիպրիանոսը այնպիսի վարդապետութեան հետևող և պաշտպան էր, որ յետագայ ժամանակներում նրան հերետիկոս դարձրեց հռոմէական եպիսկոպոսների աչքի առջև։ Արևելեան եկեղեցու դրութիւնը չէր նմանում արևմտեանին. այնտեղ կային բազմաթիւ առաքելական եկեղեցիներ, նոքա բոլորն էլ հաւասար պատիւ ունէին, և հաւասարապէս Աւետարանի լոյսը տարածում էին շրջակայ երկիրներում։ Այնտեղ առաքելական աթոռներից ոչ մինը կեդրոն չդարձաւ արևմտեան եկեղեցու նման։ Արդարև, Երուսաղէմի եկեղեցին Մայր եկեղեցեաց էր համարւում. բայց նա հարուստ էր միայն անցեալի յիշատակներով. և նրա եպիսկոպոսը պահպանեց միայն այն նշանակութիւնը, որ անցել էր նրան Յակոբոս Տեառն եղբօրից, որ եկեղեցու առաջին եպիսկոպոսն էր։ Երուսաղէմ արևելքի համար առաքելական նախաթոռի նշանակութիւնը չունէր արևմտեան եկեղեցու նման։ Անտիոք, Աղէքսանդրիա, Եփեսոս, Զմիւռնա, Կորինթոս, Աթէնք և միւս քաղաքները, ուր որ առաքեալների ձեռքով հաստատուած եկեղեցիներ կային, հաւասար յարգանք էին վայելում ինչպէս Երուսաղէմինը և նոցա աւանդութիւնը միևնոյն նշանակութիւնն ունէր։

Արևմուտքում ընդհակառակ, առաքելական աթոռի միակ նախագահութիւնը պատկանում էր Հռոմին, իսկ միւս եկեղեցիները Հռոմի հետ միա-

---

ղող մի շարաթ, մինչև անգամ մի ժամ առանց կառավարութեան մնալ . . ։ Կրօնական համայնքի կառավարութեան, իշխանութեան անհրաժեշտութիւնը, ինչպէս և ամեն մի հասարակութեանը լինում է նոյն իսկ հասարակութեան գոյութեան մէջ »։

Պ. Գիզոյի կարծիքով կառավարութիւն և իշխանութիւն կարևոր են և չէ կարելի երևակայել քրիստ. հասարակութիւն մի վայրկեան առանց կառավարութեան և իշխանութեան։

Սակայն ի՞նչպէս է խօսում պ. Գիզոն իր միևնոյն երկի մի այլ տեղում։ « Առաջին ժամանակ, հէնց սկզբում, քրիստոնէական հասարակութիւնը ներկայանում է մի համոզման և դաւանանքի բնկերութիւն։ Սկզբում քրիստոնեաները հաւաքւում էին որպէս զի ուրախանան միևնոյն զգացմունքներով և միևնոյն կրօնական համոզմունքներով։ Նոցա մէջ մենք չենք գտնում դրական հաւատոյ վարդապետութեան ոչ մի գրութիւն, եկեղեցական բարեկարգութեան ոչ մի կանոնական ժողովածու, և ոչ մի վարչական կապմակերպութիւն »։

Չկան կառավարիչներ, սակայն կառավարութիւն ու իշխանութիւնն այնքան կարևոր են, որ ոչ մի համայնք չէ կարող գոյութիւն ունենալ առանց նոցա մի վայրկեան, չկայ ոչ մի որոշ բան հաւատոյ վարդապետութեան մէջ միայն թէ՝ միևնոյն կրօնական համոզմունքներ,

նալով իրանց ապահովութիւնն էին գտնում և ընդհանրական եկեղեցու մի մարմին էին կազմում։

Հռոմայ եպիսկոպոսները արդէն շատ վաղուց սկսան հպարտանալ իրանց աթոռի այդ բացառիկ նշանակութեամբ։ միայն թէ եօթն դարու ընթացքում դուրս չեկան իրանց ուղիղ դաւանութեան սահմաններից։ բայց երբ քաղաքական հանգամանքները նոցա ձգտումներին նպաստեցին։ նոքա սկըսեցին ևս առաւել ձգտել իրանց կարծիքը ընդունել տալու բոլոր եկեղեցիներին։ այսինքն բոլորն ևս հռոմէական աթոռի վերայ պիտի նայէին բացառապէս։ որպէս ա ռ ա ք ե լ ա կ ա ն ա թ ո ռ ի և ը ն դ հ ա ն ր ա կ ա ն ո ւ թ ե ա ն կ ե դ ր ո ն ի վ ե ր ա յ։

Երբ այդպիսի կարծիքներ միանգամ արդէն արտայայտուեցան։ այնուհետև սկսեցին ս. Գրքի քմահաճ բացատրութեամբ և կեղծ վկայականներով զարգացնել ու հաստատել։ Նոքա աշխատումէին պապականութեան աստուածային ծագումն ընծայել. սրա համար Նոքա Աւետարանի ընագիրը կեղծեցին և սխալ մեկնեցին իսկ պատմական հիմունքներ գտնելու համար պատմական յիշատակարանների և դաւանաբանական գրուածների մէջ իրանց ուզած բառերն աւելացնում կամ պակասացնումէին։ Նշանաւոր իրողութիւնները այնպէս էին փոփոխում։ որ Նոքա համապատասխանէին յայտնի պայմաններին. օրինակի համար։ եթէ որ արևմտքում մի որ և է ժողով առաջին երեք դարում իր որոշումն ուղարկումէր Հռոմայ եպիսկոպոսին։ որպէսզի նրա միջոցով հաղորդէին միւս եկեղեցիներին։ Նոքա սրանից եզրակացնումէին։ որ այս որոշումները ուղարկումէին նրան հաստատութեան և հաճութիւն տալու համար. իսկ եթէ արևելքից Հռոմայ

ը ն դ հ ա ն ո ւ ր դ ա ւ ա ն ա ն ք ։ ը ն դ հ ա ն ո ւ ր կ ա ր ծ ի ք ն ե ր։ Այս այնպէս խորհրդաբար է ասուած։ որ ոչինչ չէ հասկացուում։

Պ. Գիզոն ասելով։ որ եկեղեցին սկզբում կառավարիչներ չուներ. այնուհետև ասումէ։ որ նրա մէջ կային այն ժամանակ եպիսկոպոսներ։ երէցներ և սարկաւագներ։ Ցառաջ բերենք նրա իսօքերը.

«Ս կ զ բ ն ա կ ա ն յիշատակարաններից երևումեն միևնոյն հաւատոյ վարդապետութեան հետևող մի ժողով։ բարեկարգութեան կանոններ և կ ա ռ ա վ ա ր ի չ ն ե ր։ որոնցից մի քանիսին՝ անուանումէին երէցներ կամ քահանաներ։ մի քանիսին եպիսկոպոսներ կամ վերատեսուչներ։ իսկ մի քանիսին սարկաւագներ։ որոնք աղքատների մասին հոգս պիտի տանէին»։

Մի՞թէ այդ կառավարիչների համար օծումն և սրբացումն չկար։ Պ. Գիզոն ընդունումէ քրիստ. եկեղեցու մէջ ձեռնադրութիւն։ որ սկզբից ի վեր եկեղեցու մէջ գոյութիւն ունէր։

Այսպիսով կարելի է ապացուցանել։ որ պ. Գիզոյի շարադրութեանց մէջ շատ նշանաւոր առարկաների մասին այս էլ է ասուում և այն էլ. սրանից աւելի տրամաբանութիւն մենք չենք գտնում այդ դրութեան հետևող մատենագիրների մէջ։

եպիսկոպոսին մի որ և է տեղեկագիր էին ուղարկում այն ժամանակի բոլոր եպիսկոպոսների նուիրագործուած սովորութեան համեմատ։ Նոքա սրանից ևս եզրակացնում էին որպէս թէ արևելքը անհրաժեշտ էր ճանաչել Հռոմայ եպիսկոպոսի հետ կապակցութիւն ունենալ։ որպէսզի նրա միջոցով Կաթուղիկէ եկեղեցու մի մարմին կազմեն։

Այս բոլոր բռնադատեալ պատցոյցները պիտի ծառայէին ութերորդ դարում յառաջ եկած միապետական կազմակերպութեան յայտնի կերպով յառաջ գալուն։ Մենք այստեղ չենք վիճում այն բանի մասին, որ Հռոմայ եպիսկոպոսներից ոմանք դեռ ևս ութերորդ դարից առաջ ձգտում էին տիեզերական իշխանութեան, որոնք յետոյ պապական կոչուեցան։ բայց նոցա դիտաւորութիւնն իրագործուեցաւ միմիայն ութերորդ դարում և միմիայն արևմտքում։ Հետևաբար չէ կարելի հաստատել, որ եկեղեցին ընդհանուր մտքով վեր առած, եպիսկոպոսական վարչութիւնից անցել է միապետական կառավարութեան։ այդ կարելի է միայն հաստատել արևմտեան եկեղեցիների նկատմամբ։ որոնք պապական կառավարութեան ենթարկուելով թողել են Յիսուս Քրիստոսի և առաքեալների ձեռքով պարգևած հաստատութիւնը։

Եպիսկոպոսութեան հետ հաստատուած եկեղեցին փոխադարձ յարաբերութեան մէջ լինելով։ կազմում էր մի հասարակութիւն։ որի գոյութիւնը պարզ և որոշ է։ իսկ նրա կեանքն ու գործունէութիւնը խիստ տարբերւում են միւս քրիստոնեայ համայնքներից։ ինչ տեսակ մասնաւոր անունով էլ դոքա ժողոված լինին։ Այդպիսի համայնքներ եկեղեցու վերաբերմամբ աղանդներ են կազմում։ ինքն եկեղեցին կոչւում է կաթուղիկէ և տիեզերական նրա համար։ որ չէ սահմանափակւում ոչ ժամանակով։ ոչ տեղով և կազմում է մի այնպիսի միատեսակ ամբողջութիւն։ որ ամեն ժամանակ և ամեն տեղ։ ուր էլ որ հաստատուած լինի։ միևնոյն կեանքով է ապրում։

Եկեղեցու այդպիսի միատեսակ կեանքը մենք անկասկած գտնում ենք առաջին երեք դարում։ Սրանից յառաջ եկան աղանդներ և հերձուածողներ։ որոնք չէին խառնւում նրա հետ։ եկեղեցին մերժեց ամեն մի յարաբերութիւն նոցա հետ և նոցանից որոշուելով առանձին դիրք էր պահում։ Եկեղեցու այսպիսի վիճակի մէջ մարդկային միտքը աւելի զարգացաւ քրիստոնէական ուղիղ վարդապետութեան մէջ քան հերետիկոսութեան և հերձուածողութեան մէջ։

Եթէ որ եկեղեցու պատմութեան առաջին շրջանի ընթացքում գրուած փիլիսոփայական և աստուածաբանական երկերն ամբողջութեամբ պահպանուէին։ այն ժամանակ աւելի լաւ կարելի էր մեր ասած իրողութիւնն ապացուցանել։ սակայն ինչ որ մնացել է և մեր ձեռքը հասել։ նրանով ևս կարելի է բաւականանալ։

Մեզ հարկաւոր է այստեղ յիշել առաջին կարգի գրուածներ՝ ինչպէս են՝ Յուստինոս Նահատակի ջատագովութիւնը, Երանոսի գիտնական երկը «ընդդէմ հերետիկոսաց»· Հիպպոլիտի փիլիսոփայական խորհրդածութիւնները· Տերտուղիանոսի ջատագովականք և ուրիշ ճառերը· Որիգինեսի ընդդէմ Կելսոսի գրած գիրքը՝ նաև «յաղագս սկզբանց· գիրքը՝ Կիպրիանոսի նամակներն ու խորհրդածութիւնները· Եւսեբիոս Կեսարացու «Պատրաստութիւն և աւետարանական ցուցմունք» և նոյնպէս նրա եկեղեցական պատմութիւնը։

Այս երկերին կարելի է աւելացնել Հիպպոլիտի և Որիգինեսի մեկնողական աշխատասիրութիւնները՝ որոնք դժբաղդաբար կորսուած են և նոցանից միայն հատու կտոր հատուածները մեր ձեռքն են հասել։ Եւ եթէ որ սրանց վերայ աւելացնենք ընդհանուր ցուցմամբ մեզ յայտնի եղած աշխատասիրութիւններ՝ այն ժամանակ չէ կարելի չենթադրել՝ որ առաջին երեք դարու ընթացքում եկեղեցու ծոցում յառաջ եկաւ փայլուն մտաւոր շարժումն։

Սկզբնական եկեղեցին լիակատար իրաւունք ունի պարծենալու Թէոփիլոս Անտիոքացու և Յուստինոս Նահատակի փիլիսոփայական հանճարով՝ Երանոսի և Հեպպոլիտի գիտնականութեամբ՝ Տերտուղիանոսի ճարտասանութեամբ՝ Կիպրիանոսի և Լակտանտիոսի գործ գրած վսեմ ոճով։ Կղեմէս Աղէքսանդրացու և Եւսեբէոս Կեսարացու խորին գիտնական հմտութիւններով՝ կարող է նաև պարծենալ Որիգինեսով՝ որպէս մարդկային հանճարներից ամենանշանաւոր անձով։

Եկեղեցու պատմութեան առաջին շրջանի մատենագիրների երկերի մէջ ամենից առաջ մեզ զարմանք է պատճառում նոցա մտածողութեան անկախութիւնը և խորին յարգանքը ընդունած հաւատոյ վարդապետութեան։ Այս հաւատոյ վարդապետութիւնն այնպէս պարզ որոշուած էր՝ որ բոլոր մատենագիրների մէջ միատեսակ ենք գտնում թէ առաջին և թէ յաջորդ դարերում՝ ինչպէս արևելքում՝ այնպէս ևս արևմտքում։

Նորագոյն ժամանակի աստուածաբանները փորձեցին գտնել նոցա մէջ հաւատոյ վարդապետութեան տարբերութիւնը և մինչև անգամ տարբեր դպրոցների բաժանել՝ ամեն մի դպրոցին մի առաքեալ յատկացնելով՝ որպէս թէ ինքեանք առաքեալները տարբեր վարդապետած են։ Մենք ուշադրութեամբ քննելով այդ դրութիւնները՝ այն համոզման եկանք՝ որ նոքա ոչ մի պատմական հիմունք չունին և հնարուած են միայն նրա համար՝ որպէսզի պաշտպանեն այն տեսութիւնները՝ որոնք բարեյաջող կարող են լինել մի քանի եկեղեցական ձևերին կամ վարդապետութեան։

Բոլոր այդ տեսութիւնները նսեմանում են այն մեծ իրողութեան առջև՝ որ առաքեալները ամեն տեղ միևնոյն հաւատոյ վարդապետութիւնն են քարո-

զած՝ որին պարզ ապացոյց կարող է լինել զանազան առանձնացեալ եկեղեցիների մէջ եղած վարդապետութեան միութիւնը։ Այս առաքելական վարդապետութեան միութիւնն ամենուրեք վկայուած է և գտնուում է բոլոր եկեղեցական մատենագիրների մէջ՝ որոնք այդ վարդապետութիւնն իրանց խորհրդածութեանց հիմունքն են ընդունած և որի հաստատութեան համար մատնացոյց են անում բոլոր առաքելական եկեղեցիների նոյնանման վկայութեան վերայ։ Այս վկայութիւնը նոքա բերում էին հերետիկոսների՝ և իրենց հակառակորդների դէմ՝ և միևնոյն վկայութեամբ նոցա առարկութիւնները հերքում։

Եկեղեցուն հաւատացած յայտնութեան կից առաջին երեք դարու մատենագիրների մէջ մենք գտնում ենք բացատրութիւններ և խորհրդածութիւններ՝ որոնք ցոյց են տալիս՝ որ նոքա յայտնեալ վարդապետութիւնը ուսումնասիրութեան առարկայ են համարած և թէ նրա գիտութեան մէջ մարդ կարող է յառաջադիմել։ Սակայն այս յառաջադիմութիւնը՝ նոցա կարծիքով՝ մարդկային մտքի մէջ կկատարուի միայն այն պայմանով՝ եթէ որ նա իսկական էութեամբ ճշմարտութիւնը յարգում է՝ ապա թէ ոչ՝ ոչ թէ յառաջադիմութիւն՝ այլ դաւաճանութիւն և յետադիմութիւն կլինի։

Հէնց այս էութեան մէջ է ուղղափառ մատենագիրների և հերետիկոսների մէջ եղած արմատական տարբերութիւնը։ հերետիկոսները յառաջադիմելու և հասունանալու պատրուակով յայտնեալ հաւատոյ վարդապետութեանց վերայ յարձակումներ են անում՝ նոցա աղաւաղում և վնասակար մոլորութիւններ են դարձնում։

Քրիստոնէութիւնն ընդունող փիլիսոփաներից շատերն աշխատում էին կրօնը հաշտեցնել առաջուայ փիլիսոփայական դրութեանց հետ։ Այս ուղղութիւնը գլխաւորապէս զարգացաւ Աղէքսանդրիայում։ Այս քաղաքում կեդրոնացած էր Աթէնքի՝ Հռոմի և Ասիայի փիլիսոփայութիւն և լուսաւորութիւն։ Հրէաներն ևս այնտեղ դպրոց ունէին Եօթանասնից թարգմանիչների ժամանակից և դրա ամենալաւ ներկայացուցիչներն էին Փիլոն Երրայեցի և Արիստոբողոս՝ որոնք մովսիսականութիւնն ու յունական փիլիսոփայութիւնը միմեանց հետ ձուլեցին։ Զարմանալի չէ՞ արդեօք՝ որ կիսաքրիստոնեայ հրէաները կամ յոյները փորձում էին քրիստոնէութիւնը հրէականութեան կամ փիլիսոփայութեան հետ ձուլել։ և մինչ իսրայելացիք մտածում էին հրէացնող քրիստոնէութեան վերայ՝ փիլիսոփաները այնպիսի ծայրայեղութեամբ հրէութեան դէմ ելան՝ որ ամենանմիտ դրութիւններ հնարեցին յայտնեալ վարդապետութիւնները Պիւթագորասի և Պղատոնի տեսութեանց հետ համաձայնեցնելու համար։

Խոր չմտածող մարդկանց թվում էր՝ թէ բոլոր այդ հերետիկոսները

քրիստոնեայ են, և նոքա սրանից եզրակացրին, որ քրիստոնէութիւնը մի տեսակ բաբելոն է և անբարոյական տեսութիւններն ամենահակասական և ծաղրական դրութեանց տակ իրեն ծածկոյթ է առնում։ Մենք արդէն դէպք ունեցանք նկատելու, որ ընդհանրական եկեղեցու մատենագիրները՝ գլխաւորապէս Յուստինոս և Տերտուղիանոս ամեն կերպ աշխատում էին որոշել Կաթուղիկէ եկեղեցին հերձուածներից, որոնք նրան օտար էին և քրիստոնեաներին անուանարկում էին։

Բազմատեսակ աղանդների ուսումնասիրութիւնն և նոցա համեմատութիւնն եկեղեցու գրուածների հետ մեզ այն եզրակացութեան է հասցնում, որ հերձուածողների և աղանդաւորների մտաւոր շարժումը շատ աւելի ստոր էր քան եկեղեցու մէջ։

Յայտնեալ հաւատոյ վարդապետութիւններ, բոլոր առաքելական եկեղեցիների վկայութեան համեմատ, միշտ եղել են մարդկային մտքի համար ամուր հիմք։ Նոքա ոչ թէ լուծ էին մտքի համար, այլ աղբիւր, որտեղից լոյս էր սփռւում ամեն խնդիրների վերայ։ Իսկ հերետիկոսները այդ վարդապետութիւնից հեռանալով զբաղւում էին սխալ կարծիքներով, և չէին կարողանում ոչինչ արտայայտել բացի դատարկ և անկապ մտքերից։

Եթէ որ նոքա, Վաղենտինոսի և Բազիլիտեսի, սուտանուն վարդապետների նման, մտածում էին քրիստոնէական դրութեան լիովին կազմակերպութեան մասին, այն ժամանակ նոքա ընկնում էին անհեթեթութեան մէջ և Պիւթագորոսի ու Պղատոնի ընդհանուր գաղափարների վերայ հիմնում էին իրենց անհասկանալի և ծաղրական տեսութիւնները։ Եթէ որ նոքա Մարկիոն և Մանի աղանդապետների նման աշխատում էին իրանց կեղծ գիտութիւնը հասարակացնել և ասիական երկրութեան, բարբոյ և չարի վարդապետութեան ենթարկել, այն ժամանակ նոքա հարկադրուած էին այնպիսի անհեթեթ մտքեր արտայայտելու, որ քրիստոնէութիւնն ոչ թէ միայն պիտի ոչնչացնէր, այլ և մինչև անգամ մարդուս առողջ դատողութիւնն էր վիրաւորում։ Իսկ եթէ, Սարել Լիբիացու և Արիոսի նման յարձակւում էին հաւատալիքներից մինի վերայ, այն ժամանակ տեսնում էին, որ բոլոր քրիստոնէական ճշմարտութիւնները տատանւում էին, որովհետև մէկը միւսի հետ այնպէս սերտ կապակցութիւն ունի, որ չէ կարելի նոցանից մինին ձեռք տալ առանց ամբողջ շինութիւնը տեղից խախտելու։

Զարմանալի է, որ հերետիկոսներից ոչ մինը չկարողացաւ իր ուսումը մտցնել եկեղեցիներից մինի մէջ։ Հէնց որ մի որևէ նոր վարդապետութիւն էր երևում, իսկոյն մի քանի անձինք բաժանւում էին իրենց եկեղեցուց և յարում էին սուտ վարդապետին կպմելով մի հերձուած մի որևէ անունով։ Այս իրողութիւնը՝ իբրև ապացոյց մեծ նշանակութիւն ունի այն բանի համար, թէ գոյութիւն ունէր մի որոշ և պարզ հաւատոյ վարդա-

պետութիւն՝ որ յայտնի էր բոլոր եկեղեցիներում և ծառայում էր նոցա համար որպէս փոխադարձ միացնող կապ։

Հերետիկոսութիւնն ևս նոյնպէս ճշմարիտ հաւատքի ապացոյց կարող է լինել՝ իսկ այս հաւատքի վերայ յարձակումները զանազան երկրներում նպաստեցին անվիճելի կերպով որոշել ամբողջ հաւատոյ վարդապետութիւններ՝ որոնք ընդհանուր դաւանանք կամ հանգանակ են կազմում։

Զանազան հերետիկոսութեանց համեմատութիւնը սարսափելի քաոս և հակասութիւններով լի բաբելոն է ներկայացնում՝ մինչդեռ բոլոր մասնաւոր եկեղեցիների ընդունած հաւատոյ վարդապետութիւնները միմեանց հետ համեմատելով՝ ամենայն տեղ միևնոյն դաւանանք և հաւատք ենք գտնում՝ և միևնոյն առաքելական աղբիւրից ծագած։

Հերետիկոսութեանց պատմութիւնը նոյնպէս շատ օգտակար է քրիստոնէական հաւատալիքներն ուսումնասիրելու համար՝ կարելի է մոլորութիւնների միջոցով հեշտութեամբ վերականգնել սկզբնական եկեղեցու լիակատար հանգանակը՝ ինչպէս որ գտնում ենք եկեղեցական մատենագիրների մէջ։

Ընդհանուր դաւանանքը հէնց սկզբից մի հիմքն էր զանազան եկեղեցիների մէջ եղած յարաբերութեանց։ Այս յարաբերութեանց էութիւնը չափազանց նշանաւոր է և որոշում է եկեղեցու աստուածային հաստատութիւն լինելը։ Այս յարաբերութիւնները ընդարձակաբար ուսումնասիրելով՝ մենք պարզ կտեսնենք՝ որ նոքա հիմնուած են եկեղեցիների մէջ եղած եղբայրութեան վերայ և թէ նոցանից ոչ մինը չէր մտածում միւսի վերայ իշխելու։ Ի հարկէ՝ առաջին շրջանի ընթացքում մի քանի եկեղեցիներ աւելի յարգանք ունէին և կեդրոնական էին համարւում միայն մի քանի նահանգների համար՝ այդ եկեղեցիների եպիսկոպոսներն օգտւում էին մի քանի առաւելութիւններով՝ որոնք դեռ ևս պարզ՝ օրէնքով որոշուած չէին՝ իսկ դոցա պատճառն էր այդ եկեղեցիների կեդրոնական դիրք ունենալը՝ որտեղից Աւետարանի քարոզութիւնը տարածւում էր շրջակայքում։ Եթէ որ մինչև անգամ երկրորդական եկեղեցու եպիսկոպոսը ձեռնադրում էր առաջնակարգ եկեղեցու եպիսկոպոսից՝ այնու ամենայնիւ նրա եպիսկոպոսական իրաւունքները նոյն էին ինչ որ ձեռնադրողինը՝ մանաւանդ նա հաւասար էր նրան եկեղեցական ընդհանուր գործերի վերաբերմամբ։

Եպիսկոպոսական ամեն մի եկեղեցի օգտւում էր միևնոյն իրաւունքներով՝ ինչպէս միւս բոլոր եկեղեցիները՝ նա իր տուած վկայութեամբ գործակցում էր տիեզերական և կաթուղիկէ վկայութեան՝ իսկ նրա եպիսկոպոսը մասնակից էր այն իշխանութեան՝ որով եկեղեցին պիտի կառավարուէր։ Այս ընդհանուր դաւանանքից անխուսափելի կերպով յառաջ է գալիս ժողովների մասին վարդապետութիւն՝ որով պիտի հաստատուէր ճշմարիտ

հաւատքը հերետիկոսներին ընդդէմ և հանգամանքների պահանջման համաձայն կանոններ և օրէնքներ հաստատել։

Ժողովը սկզբնական մի իրողութիւն է եկեղեցու մէջ և յառաջ է գալիս կաթուղիկէ հաւատոյ վարդապետութիւնից, որ եկեղեցին հիմնուած է եպիսկոպոսութեան վերայ, որ ինքն ըստ ինքեան առաքելական ժողով է ներկայացնում, ուստի և նրա իշխանութիւնը ժողովական է. այս է պատճառ, որ նորագոյն ժամանակի աստուածաբանները հարցնում են, թէ արդեօք հաստատուած ժողովը մարդկայի՞ն է թէ աստուածային։ Եթէ որ ժողովը Յիսուս Քրիստոսով եկեղեցուն պարգևած հաստատութեան յաւելուած է, այն ժամանակ նա աստուածային է, ինչպէս աստուածային վարդապետութեան յաւելուած։ Ոչինչ զարմանալի բան չէ որ առաքեալները Երուսաղէմում հաւաքուեցան առաքելասարաս մարդիկների հետ միասին և հաւատացեալների ներկայութեամբ վճռեցին հրէաների ծէսերի մասին ծագած խնդիրները։ Այս ամենապարզ ապացոյց է և միանգամայն վկայութիւն, որ նոքա իշխանութիւնը մարդու մէջ չէին որոնում, եթէ մինչև անգամ այդ մարդն առաքեալ կամ Աստուծուց ներշնչուած լինէր։

Եւսեբէոս Կեսարացին ընդհանրապէս յիշում է երկրորդ դարու ընթացքում Մոնտանոսի դէմ Ասիայում գումարուած ժողովների մասին։ Միևնոյն ժամանակ, գիտնական Եւսեբէոսի վկայութեամբ, եպիսկոպոսները յաճախ հաւաքւում էին զատկի մասին վէճը լուծելու համար։ Այդ ժողովներն եղել են Պաղեստինում, Հռոմում, Եփեսոսում և Պոնտոսում Գալլիայում, Միջագետքում և Յունաստանում։ Այդ ժողովներին նախագահում էին կամ գլխաւոր քաղաքների եպիսկոպոսներ կամ ամենահասակաւոր անձն։ Ժողով գումարելու առաջարկութիւնն առաջին անգամ նա էր անում, ով որ ցանկանում էր իրեն երևացող նշանաւոր խնդրի մասին ուշք դարձնել, նա գործում էր ոչ թէ իշխանաբար, այլ եղբայրաբար խնդրելով և հրաւիրելով։ Ճիշտ այսպէս արեց Հռոմի Վիկտոր եպիսկոպոսը. նա զանազան եկեղեցիների եպիսկոպոսներին խնդրեց հաւաքուել և զատիկը միակերպ տօնելու մասին կարգադրել։

Ժողովականք ընդունեցին այն որոշումները, որոնք եկեղեցիների մէջ պահուած հին աւանդութիւններին համապատասխանում էին, իսկ Վիկտոր եպիսկոպոսին նախատեցին հին աւանդութիւններից մի քանիսը չյարգելու համար. գլխաւորապէս նախատում էր Ս. Երանոս։

Երրորդ դարու ընթացքում աւելի շատ ժողովներ են լինում. Գլխաւորապէս յայտնի են Ափրիկէի ժողովները։ Ամենահին ժողովը գումարւում է Կարթագինէի Ագրիպինա եպիսկոպոսի ձեռքով, ուր որոշւում է հերետիկոսներին վերստին մկրտել։ Այդ ժողովը լինում է երրորդ դարու առաջին կիսում և դրեթէ միևնոյն ժամանակում լինում են Իկոնիոյ և

Սիննայի ժողովները. միևնոյն խնդիրների նկատմամբ Ափրիկեան ժողովներ Կիպրիանոսի նախագահութեամբ գումարուած հետևումէին եկեղեցիների հին աւանդութեան և ընդունեցին եկեղեցու բարեկարգութեան կանոններ, որոնք յետոյ ընդհ. եկեղ. կանոնագրութեան մէջ են մտած։

Արաբիոյ Բոստր քաղաքում գումարուած ժողովները, ուր Որիգինէս Բերիլ եպիսկոպոսի մոլորութիւնները հերքեց, իսկական ժողովի կերպարանք ունէին. այնտեղ գիտնական ձևով քննուեցան հաւատոյ վարդապետութեան մասին խնդիրները եկեղեցու աւանդութեանց համեմատ. ինչ որ վերաբերումէ Աղէքսանդրիոյ Դիմիտրիոս եպիսկոպոսի գումարած ժողովներին Աղէքսանդրիայում Որիգինէսի դէմ նոցա չէ կարելի եպիսկոպոսների ժողովներ համարել։

Բաւականաչափ յայտնի են Հռոմում և Կարթագինէում գումարած ժողովները. Ֆիլիցիսիմի և Նովատիոսի աղանդի մասին, Սպանիոյ Բազիլիդէս և Մարկիանոս եպիսկոպոսների գումարած ժողովը. Անտիոքի ժողովները Պօղոս Սամոստացու դէմ և Աղէքսանդրիայում գումարած ժողովը Մելիտոս եպիսկոպոսի դէմ։

Դ. դարու սկզբում առաջին տիեզերական ժողովից առաջ եղել են նշաւոր ժողովներ Էլիվայում և Արլում՝ արևմտքում և Անկիւրայում ու Նէսկեսարիայում՝ արևելքում։

Աղէքսանդրիոյ Աղէքսանդրոս եպիսկոպոսը մի քանի անգամ ժողով գումարեց Արիոսի դէմ։ սրան հրապարակաւ դատելուց առաջ, Կարդովայի Ոզիոս եպիսկոպոս նախագահած է Աղէքսանդրիոյ ժողովներից մինին միևնոյն գործի համար. իսկ Նիկոմիդիոյ Եւսեբէոս եպիսկոպոս Բիւթանիայում ժողով գումարեց Արիոսին պաշտպանելու համար։

Կարելի է հաւաքել մի քանի տեղեկութիւններ միւս ժողովների մասին, որոնք եղել են առաքելական ժամանակներից մինչև առաջին տիեզերական ժողովը։ Հաւանական է, որ ժողովներ շատ են եղել, որովհետև առաքելական կանոնագրութեան համեմատ տարին երկու անգամ ժողով պիտի գումարուէր։ Եթէ որ մինչև անգամ այդ կանոնագրութիւնը առաքելական ժամանակից ուշ է եղած, այնու ամենայնիւ եկեղեցու պատմութեան առաջին շրջանին է պատկանում, և կարող է ապացոյց լինել այն բանի, որ զանազան եկեղեցիներում ժողովներ շատ յաճախ են եղած։

Մեզ հասած տեղեկութիւններից երևումէ, որ ժողովներ առ հասարակ գումարումէր երկրի նշանաւոր եպիսկոպոսը, սակայն այս չէր համարւում իբրև նրան պատկանող իրաւունք. այնպէս որ Ասիոյ առաջին եպիսկոպոս Պօղոս Սամոստացու գործի առթիւ նրա ցանկութեան համեմատ և նրա դէմ ժողով է գումարւում Նրա աթոռանիստ քաղաք Անտիոքում։ Յայտնի է

նոյնպէս՝ որ Բոստրիայում գումարուած ժողովները Բերիլ եպիսկոպոսի ձեռքով չէ եղած։ Ժողով գումարելու իրաւունք ունի ամեն մի եպիսկոպոս և դիմել իր եղբայրներին հաւատոյ վարդապետութեան խնդրի առթիւ։ Ժողովուած եպիսկոպոսները խորհրդակցում են այն անձի նախագահութեամբ, որին ինքեանք են ընտրած։ իսկ իրենց որոշումների ընդունուիլը կախում ունի ամենից։ Միւս եկեղեցիների եպիսկոպոսները կարող են ընդունել կամ մերժել ժողովի որոշումները՝ եթէ որ այդ տիեզերական չէ բոլոր եկեղեցիների համար։

Եկեղեցու պատմութեան առաջին շրջանի ժողովներն և եղելութիւնները բաւական ապացոյցներն են այն բանի՝ որ եկեղեցու կառավարութիւնը հէնց սկզբից եպիսկոպոսական էր և թէ հովիւները գործում էին ոչ թէ առանձին առանձին՝ այլ փոխադարձ համաձայնութեամբ ժողովների միջոցով և թէ ժողովներում աշխատում էին պաշտպանել հին աւանդութիւնները։ վերջապէս՝ առաջին շրջանի ժողովների մէջ մինչև անգամ իշխանասիրութեան հետքը չէ նկատւում՝ որ կեդրոնացած լինի մի որ և է եպիսկոպոսի անձի մէջ։

Առաջին ժողովների մասին մնացած տեղեկութիւններից պարզ է՝ որ նոքա առաւելապէս աշխատում էին պահպանել քրիստոնէական բարոյականութիւնը ամենայն սրբութեամբ։ Այդ յարգելի ժողովների որոշումներից երևում է՝ որ հաւատացեալների մէջ երբեմն մեծ յանցաւորներ են եղել՝ բայց սրանից չպիտի եզրակացնել՝ որ առաջին դարերում՝ քրիստոնէական ոգին աւելի նուազ զարգացած էր եկեղեցու մէջ՝ քան թէ մեր ժամանակում։

Կարող է լինել՝ որ երբեմն չափազանցնում էին առաջին դարերը և յաջորդ դարերը նսեմացնում՝ բայց պէտք է ճիշտ խոստովանել՝ որ նախնական քրիստոնեաները անպայման մեղանից լաւ են եղած, և թէ ներկայումս եկեղեցական բարեկարգութիւնն և բարոյականութիւնը տխուր վիճակի մէջ են գրեթէ բոլոր եկեղեցիներում։

Մենք այստեղ մտադիր չենք զանազան եկեղեցիների քրիստոնեաների բնաւորութիւնները քննելու՝ բայց պարտաւոր ենք առաջին դարերի պատկերը նոյնութեամբ ներկայացնել։

Երուսաղէմի քրիստոնեաները քրիստոնէական կեանքի ամենակատարեալ օրինակն էին ներկայացնում։ Նոքա հրէութիւնից դուրս գալով անձնատուր եղան հայրական աւանդութիւններին և ս. Գրքին՝ իրենց սեպհականացնելով հիմնական առաքինութիւններ և դոցա իրենց կեանքի խնդիր դարձնելով։ Անկասկած նոքա Իսրայէլեան ժողովրդից շատ բարեպաշտ էին՝ որովհետև նոքա խնամով պահպանել էին Մեսիայի մասին մարգարէութիւնը և Նրան ճանաչեցին Յիսուսի Քրիստոսի անձի մէջ։ Նոքա խրատուած և

դաստիարակուած էին նոյն ինքն Քրիստոսով և Նրա առաջին առաքեալներով, ուստի և նոցա օրինակին հետևելը բոլոր քրիստոնեայ միաբանութեան նպատակը պիտի լինէր։ Նոքա, Գործք առաքելոցի հաղորդածին համեմատ, ապրումէին սիրով միաբանութեամբ. ամեն ինչ հասարակաց էր, հարուստները իրենց ինչքը վաճառում և բերում դնումէին առաքեալների ոտի տակ։ Նոքա շատ սիրով հետևումէին առաքեալների վարդապետութեան, հաւաքուումէին միասին, Փրկչի պատուէրի համեմատ, Յիսուս Քրիստոսի յիշատակը տօնելու, հաց բեկանելու և աղօթելու համար։

Առաքեալները կայքի հաւասարութիւն իբրև պարտականութիւն չէին դնում հաւատացեալների վերայ, այլ այդ բնական կերպով մտնումէր հաւատացեալների մէջ եղբայրական սիրուց դրդուած։ Սակայն պէտք է ասել, որ էսսէնները՝ հրէից մէջ ամենակատարեալներն արդէն մոցնումէին նման սովորութիւն, և կարելի է կարծել, որ նախնի քրիստոնեաներ Հրէաստանում առաւելապէս նոցանից էին։ Յիսուս Քրիստոս եղբայրութեան այդ զգացումները կատարելագործեց և սովորացրեց, որ Նրա աշակերտներին կճանաչեն միմեանց հետ ունեցած փոխադարձ սիրով. բացի սրանից Նա սովորացրեց հեռանալ ժամանակաւոր բարիքներից, եթէ որ ուզումեն կատարեալ լինել։ Ոչինչ զարմանալի բան չէ, որ որ Երուսաղէմի եկեղեցին Տիրոջ քարոզութեան ազդեցութեան տակ մի զարմանալի տեսարան էր ներկայացնում, ինչպէս որ Գործք առաքելոցի մէջ նկարագրուած է։ Նոցա աշխարհի ժամանակաւոր բարիքներից հեռանալու ցանկութիւնը այնքան մեծ էր, որ վերին աստիճանի աղքատութեան մէջ ընկան և ուրիշ երկրների եղբայրներ հարկադրուած էին նոցա օժանդակելու։

Երբոր աստուածային բանի քարոզութիւնը հեթանոսների մէջ մտաւ, հանդիպեց վերին աստիճանի ապականուած բարքին։ Հորացիոս, Տակիտոս, Յովնաղ, Սվետոնիոս և ն. մատենագիրներ մեզ թողել են այն ժամանակի բարքերի սարսափեցնող նկարագրութիւններ։ Երբ առաքեալները դոցա մէջ սկսեցին քարոզել, հաւատացողները պարտաւոր էին ամենից առաջ հրաժարուել քստմնելի և ամօթալի գործերից և հետևել Աւետարանի քարոզած առաքինութիւններին։

Ոչինչ բան նոցա չէր ստիպում իրանց առաջուայ կեանքը փոխելու։ Աւետարանը նոցա միայն առաջարկումէր խիստ առաքինութեանց ապագան, այն է հալածանք և արհամարհանք. նոքա, որոնց այս բանը չէր վախեցնում, արի մարդիկ էին և խոր համոզմունքի տէր. նոքա առաքինութեան ամենաբարձր աստիճանի վրայ էին, ուստի և անհնարին է բացատրել, որ նախնական շրջանի հաւատացեալների մեծ մասը ճշմարիտ քրիստոնեայ էին բառի բուն նշանակութեամբ։

Անկասկած, լինումէին նաև բացառութիւններ. եկեղեցու գործ դրած

խստութիւնը՝ յանցաւորների վերաբերմամբ՝ պարզ ապացոյց է՝ որ յանցաւորների թիւը մեծ չէր՝ և եկեղեցին ամեն մի քայլափոխում աշխատում էր իր անդամների բարքի և վարքի մաքրութեան համար և քրիստոնեայ անունը չխայտառակել հեթանոսների առջև։ Եկեղեցու հոգացողութեան երկրորդ ապացոյցը գտնում ենք գործ դրած նախազգուշութեանց մէջ երեխաների ընտրութեան և քննութեան վերաբերմամբ։

Հաւատացեալներ՝ միանգամ արդէն՝ եկեղեցու ծոցը մտնելով ամենայն սրբութեամբ աշխատում էին քրիստոնէավայել կեանք ունենալ և շարունակ քրիստոնէական առաքինութեանց մէջ յառաջադիմել։ Նոքա առաւօտ և իրիկուն ժողովում էին եկեղեցու մէջ աղօթելու՝ իսկ մի քանի օրեր՝ ինչպէս շաբաթ և կիւրակի՝ մի քանի անգամ էին հաւաքւում ս. հաղորդութեան խորհրդին մասնակցելու՝ հոգևոր և փառաբանական երգեր երգելու՝ եպիսկոպոսների և քահանաների տուած քարոզներին և խրատներին ունկնդիր լինելու համար։ Այս բարեպաշտական դաստիարակութիւնը շարունակւում էր ամեն մի ընտանիքում՝ ուր ընտանիքի գլխաւորներ քահանաներին փոխանակելով բացատրում էին Քրիստոսի սուրբ վարդապետութիւնը։ Այնտեղ կարդում էին ս. գրքեր՝ բացատրում էին՝ և խորհրդածում նոցա մասին. բոլոր պարապմունքները՝ մինչև անգամ ամենասովորականները սրբագործւում էին աղօթքով։

Քրիստոնէական գաղափարը հոգու հետ ձուլուած էր արտաքին գործողութիւնների միջոցով — խաչի նշանով՝ զանազան ծէսերով և արարողութիւններով՝ և ամեն կերպ աշխատում էին Քրիստոսին նմանող լինել։ Նոքա շատ լաւ գիտեն՝ որ Քրիստոսի փրկարար արիւնով գնուած մարդ՝ եթէ որ կոչման անարժան է՝ նա Աստուծուց մերժւում է՝ իսկ եթէ նրա վարքն ու բարքը համապատասխանում է Քրիստոսի վարդապետութեան՝ և իրանց հաւատոյ գործողութեանց՝ այն ժամանակ նա աստուածահաճոյ է՝ և Փրկչի խոստացեալ երանաւէտ կեանքի ժառանգորդ։

Առաքինութեան ներքին յաղթանակներ արտաքնից աւելի բարձր էին համարւում՝ որովհետև արտաքինը միայն մի միջոց է կատարելութեան համար՝ բայց ոչ ինքնըստինքեան կատարելութիւն է։ Առաջին երեք դարու մատենագիրների մէջ գտնուած մանրամասնութիւններ առաքինութեանց մասին մեզ լիակատար գաղափար են տալիս քրիստ. բարոյական կատարելութեան մասին՝ որին քրիստոնեաներ հասել էին ի հարկէ. հանդիպում ենք նաև երբեմն նոցանից նախատուած քրիստոնեաներին՝ որոնք իրենց կոչումն ու խոստումը մոռացել էին։

Նորագոյն ժամանակի մատենագիրները՝ որոնք աշխատում էին առաջին դարեր նսեմացնել՝ ի չարն էին գործ դնում այդ մատենագիրների մէջ գտնուած նախատինքներ անարժան մարդիկներին տրուած՝ և այդ-

պիսիներին ներկայացնում էին ամբողջ քրիստոնեայ միաբանութեան ընդհանուր տիպար։ Սակայն, յայտնի է, որ այդ նախատիպերը ընդհանուր բնաւորութիւն չունին, ինչպէս որ վերագրում էին, այլ նոքա միայն հաստատում էին անվիճելի պատմական ճշմարտութիւն, թէ քրիստոնեայ միաբանութիւնն առաջին երեք դարերում յիրաւի Աւետարանին արժանի է եղել և թէ քրիստոնէութեան ոգին այն ժամանակ աւելի զարգացած էր բոլոր եկեղեցիներում, քան թէ վերջին ժամանակներս։

Այնուամենայնիւ մենք չենք ցանկանում յաջորդ ժամանակները նսեմացնել։ Ամեն մի դար ունէր իր արժանաւորութիւններ և թերութիւններ։ Եկեղեցին միշտ կազմուած է եղել բարի և մեղաւոր քրիստոնեաներից, բայց աստուածային շնորհքը մեղաւորներին բոլորովին երեսից բաց չէր թողնում, ինչպէս որ այս յայտնի է եկեղեցու պատմութեան ընթացքից։ Եւ եթէ այժմս մենք գնահատելու լինենք եկեղեցու պատմութեան առաջին շրջանի ընթացքում քրիստոնէական միաբանութեան բնաւորութիւններ, պէտք է ասենք, որ բոլոր այն ժամանակի յիշատակարաններից և դէպքերից երևում է որ նա մի այնպիսի միաբանութիւն էր, որ իր բարոյական մասերով յետագայ ժամանակի բոլոր եկեղեցիներից գերազանցում էր։

Սակայն, այս ևս պիտի ասել, որ այլասպէս ևս չէր կարող լինել, որովհետև այդ միաբանութեան մէջ ընդունում էին միայն խիստ երկարատև փորձութիւնից յետոյ և արտաքսում էին միաբանութիւնից՝ եթէ որ արժանի չէին։ Եկեղեցու դործ դրած այդ միջոցները բնականաբար պիտի պահպանէին քրիստոնեայ միաբանութիւնը մաքուր և սուրբ կեանքի մէջ։ Թէ ինչ պատճառներով և հանդամանքներով այս դեղեցիկ կարգադրութիւնները յետոյ փոխուեցան, այդ մեզ ցոյց կտան եկեղ. պատմութեան յետագայ շրջանները. մինչ թէ այստեղ խօսելով առաջին երեք դարերի մասին, մենք պիտի բաւականանանք նրանով, որ մենք նոցա վերայ մատնացոյց ենք անում որպէս գերազանց միջոցների վերայ, որոնց շնորհիւ նախնական եկեղեցու մէջ յառաջ է գալիս ճշմարիտ քրիստոնեայ միաբանութիւն, որ զարմացման արժանի է։

Ս. Տէր-Գարրիէլեան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԷՋ

§ 1

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴՈՒՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԵԼՈՒ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Մարդ ծնւում է բոլորովին անօգնական, այժերից զուրկ։ Նա պէտք ունի խնամքի և հոգատարութեան առաւել շատ, քան թէ մի որ և է ուրիշ կենդանի տարած։ Նա զուրկ է այն նպաստաւոր բնազդումից, որ երևում է նորածին կենդանիների մէջ նոյա գոյութեան տրդէն իսկ առաջին օրերում։ Ընդհակառակ՝ նա ղեկավարութիւն է պահանջում մեծերի կողմից շատ երկար ժամանակ, մինչև որ նորանում մի ընդունակութիւն զարգանայ իւր դատողութեամբ կանոնաւոր գործելու։

Մարդ ոչ միայն պահանջ ունի դաստիարակուելու, այլ և ընդունակ է դաստիարակչական ազդեցութեան ենթարկուելու։ Ի՛նչ որ շրջապատում է մարդուն, ամեն բան՝ ընութիւնը, հասարակութիւնը, կեանքի հանգամանքները և այլն,—այդ ամենը յայտնի ազդեցութիւն է անում թէ մարդու ֆիզիքական առանձնայատկութիւնների վրայ, և թէ նորա բարոյական բնաւորութեան կազմակերպուելու վրայ։ Սակայն այդ բնական ազդեցութեանց մատնուած մարդը շատ քիչ շանս (նպաստաւոր պայմաններ) ունի, որ այդ ձևով ստացած դաստիարակութիւնը լիապէս հա-

մասամասխան լինի դաստիարակուողի անձնական յատկութիւններին և հասարակական շահերին

Կեանքի ազդեցութիւնները կարող են ներգործել մարդու վրայ պատահաբար և միակողմանի կերպով։ Մինչդեռ՝ որպէս զի դաստիարակութիւնը հատատ և կանոնաւոր արդիւնքներ տայ, անհրաժեշտ է որ նա հիմնուած լինի մտածուած ծրագրի վրայ, հետևողութեամբ և նպատակայարմար ձևով առաջ տարուի։

Այսպէս ուրեմն՝ մարդս կարիք ունի ոչ միայն դաստիարակուելու, այլ և նախամտածուած դաստիարակչական ազդեցութիւն կրելու իւր վրայ հասակաւոր և հասունացած մարդկանց կողմից։

§ 2

ԹԷ Ի՞ՆՉ Է ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, ՆՈՐԱ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ՊԱՇՏՕՆԸ։

Դաստիարակութիւնն է հասակաւոր մարդկանց գիտակցական, նախամտածուած և կարգաւորուած գործունէութիւնը, ուղղած դէպի այն նպատակը, որ մանուկ սերնդի համար ստեղծուին այնպիսի պայմաններ, որոնք ամենից շատ նպաստաւոր են նոցա մարմնաւոր և հոգևոր ոյժերի զարգացման համար։ Դաստիարակութեան նպատակն է՝ օգնել պատանիների կատարելագործութեան այն աստիճանին հասնելու, որը համապատասխան է մարդուս բնական կոչմանն։

Դաստիարակութեան պաշտօնն է տալ հասարակութեան այնպիսի մարդիկ, որոնք իւրեանց գործունէութեան միջոցին՝ գիտակցաբար և ազատ հոգով ձգտեն իրագործելու արդարութեան և բարոյական բարեաց պահանջները։ Բայց որովհետև այդ պահանջներին գոհացնող գործունէութիւնը առաքինութիւն է, ուստի կարելի է ասել թէ դաստիարակութիւնը ըստ իւր էութեան ղեկավարութիւն է դէպի առաքինութիւնը։

§ 3

ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

Դաստիարակութիւնը՝ յայտնի դաստիարակչական ծրագրի իրագործումն է։ Ի՞նչ առանձնայատկութիւններ էլ ունենայ այդ

ծրագիրը, նա պիտի բովանդակէ իւր մէջ դաստիարակչական գործունէութեան հետևեալ տեսակները.

ա) Խնամատարութիւն մանուկների վրայ՝ ֆիզիկական և բարոյական։ Խնամատարութեան ամենամերձաւոր նպատակն է պաշտպանել մանուկներին այն վնասակար ազդեցութիւններից, որ ունենում են նրա մարմնաւոր և հոգևոր բարեկեցութեան վրայ կենցաղավարութեան պայմաններն և պարագաները։

բ) Ուսուցումն։ Սա լրացնում և բարձրացնում է սանի անձնական փորձառնութիւնը, հասցնում է իւր կոչման ճանաչողութեանը, ծնեցնում է հոգւոյ բարի արամադրութիւնը։

գ) Մանուկներին ղեկավարելը, որի նպատակն է զարգացնել նոցա մէջ վարժութիւն բարի և օգտակար գործունէութեան համար և ձգտում դէպի այդ տեսակ գործունէութիւն։

Այս դաստիարակչական միջոցների գործածութիւնը ի միասին՝ կոչւում է դաստիարակութիւն խօսքի լայն իմաստով։ Աւելի նեղ մտքով, դաստիարակութիւն ասելով հասկանում են սովորաբար այնպիսի գործունէութիւն, որ ուղղուած է դէպի սանի մարմնաւոր և հոգևոր բարեկեցութեան պահպանութիւնը և նորա բարոյական կատարելագործութիւնը, մանկավարժական գործի այս կողմին հակադրելով ուսուցումը իբրև մի գործունէութիւն, որի մերձաւոր նպատակն է գիտութիւններ հաղորդել։

§ 4.

ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ։ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ։

Մենք տեսանք (§ 1) որ արդէն ինքն իսկ կեանքը դաստիարակում է մարդուս։ Կեանքի դաստիարակչական ազդեցութիւնը սկսւում է մարդու լոյս աշխարհ գալու օրից և անընդհատ շարունակւում է մինչև գերեզմանի դուռը։ Մարդուն դաստիարակում են սնունդը և լմպելիքը, դաստիարակում են նորան կեանքի բոլոր պատահարները իւրեանց ուրախութիւնով և վշտով, դաստիարակում է բնութիւնը, որով նա շրջապատուած է, դաստիա-

բակում է այն հասարակութիւնը որի մէջ ապրում է, մի խօսքով դաստիարակում է նորան ամբողջ կենցաղավարութիւնը իւր պարագաներով։ Բայց միմիայն մարդս կարող է մարդուն կանոնաւոր դաստիարակել, որովհետև միմիայն մարդ, իբրև բանական էակ, կարող է դաստիարակչական ազդեցութիւնները յայտնի ծրագրի տակ ձգել և հետևողութեամբ առաջ տանել դաստիարակչական գործունէութիւնը։

Այդ դաստիարակիչ մարդու ձեռքը երեխան ընկնում է իսկոյն իւր ծնուելուց յետոյ։ Բնութիւնը դրել է ծնողաց սրտի մէջ ձգտում դաստիարակելու երեխաներին։ Այսպէս ուրեմն առաջին դաստիարակչական հիմնարկութիւնը, որին հանդիպում է մարդ, այդ նորա հայրական տունն է, նորա ընտանիքը։ Եւ երեխաների առաջին բնական դաստիարակներն են՝ նոցա հայրն ու մայրը։

Չկայ այնպիսի ծնող, որ իւր համար պարտք չհամարէր խնամք տանել երեխաների վրայ թէ ֆիզիկապէս և թէ բարոյապէս։ Երբ այդ պարտքը կատարում է ծնողների կարողութեան և բարոյական զարգացման սահմաններում, դորանով սկիզբն է դրւում տնային կամ ընտանեկան դաստիարակութեան։

Բայց փորձը ցոյց է տալիս, որ ծնողների մեծ մասը անկարող են անձամբ և լիապէս կատարել իւրեանց այդ բնական պարտականութիւնը երեխաների վերաբերեալ։ Շատ քիչ ծնողների վիճակուած է ունենալ այն բոլոր գիտութիւնները, որոնք անհրաժեշտ են դաստիարակի համար։ Այդ պատճառաւ անհրաժեշտ է դառնում մի առանձին հիմնարկութեան գոյութիւնը, որի մէջ մտաւորապէս լուսաւորուած, բարոյապէս արժանաւոր և գործնականապէս փորձառու և միևնոյն ժամանակ բարձր գաղափարական ձգտումներով ոգևորուած մարդիկ ստանձնած լինէին ծնողական պարտաւորութեանց մի մասը տալու համար երեխաներին այն, ինչ որ անկարող էր տալ ծնողական տունը։ Այդ հիմնարկութիւնը դպրոցն է։ Այդ հիմնարկութեան մէջ դաստիարակն է ուսուցիչը։ Այդ հիմնարկութեան գործունէութիւնն է դպրոցական դաստիարակութիւնը։

Այսպէս ուրեմն ընտանիքը և դպրոցը երկու դաստիարակչա-

կան հիմնարկութիւններ են, որոց պաշտօնն է պատանիների կրթութիւնը։ Պատանեկական հասակը արդիւնք է գլխաւորապէս դաստիարակութեան այդ երկու նեղգործող ոյժերի ազդեցութեան։

Բայց իւրաքանչիւր մարդ, իւր ծննդեան վարկեանից, անդամ է դառնում մարդկային կեանքը կանոնաւորող երկու մեծ հիմնարկութիւնների, անդամ եկեղեցւոյ և պետութեան։ Եկեղեցին և պետութիւնը նոյնպէս դաստիարակչական հիմնարկութիւններ են, որոնք յայտնի ընաւորութիւն են տալիս կեանքի ամբողջ կազմակերպութեան, նպաստելով մարդկային հասարակութեան այս կամ այն ձգտումներին, այս կամ այն գործողութիւնների զօրեղանալուն։ Այսպիսով դաստիարակուող պատանիները բացի ընտանիքի և դպրոցի ազդեցութիւնից՝ ենթարկւում են նշանաւոր դաստիարակչական ազդեցութեան եկեղեցւոյ և պետութեան կողմից։

Բայց եկեղեցին և պետութիւնը ազդում են երեխաների դաստիարակութեան վրայ ոչ անմիջապէս, այլ հասակաւոր սերնդի միջոցով, որի վրայ է երեխաների դաստիարակութիւնը ղեկավարելու ծանրութիւնը։

§ 5.

Թէ ի՞նչ է դպրոցական դաստիարակութիւնը։ Դպրոցական դաստիարակութեան պաշտօնը եւ միջոցները։

Դպրոցական դաստիարակութիւնն է ի միասին առած այն բոլոր նախամտածած գործողութիւնները, որոց միջոցով դպրոցն աստիճանաբար հասցնում է աշակերտին մի տեսակ բարոյական վիճակի, երբ սանը մի ներքին բուռն պահանջ է զգում իրագործելու կեանքի մէջ ճշմարտի և բարւոյ գաղափարները։ Դպրոցական դաստիարակութեան նպատակն է բարոյական զարգացման այդ աստիճանին հասցնող ճանապարհը հեշտացնել սանների համար։ Այսպէս ուրեմն, դպրոցի դերը դաստիարակութեան մէջ ղեկավարող է։ Դպրոցը չէ ստեղծագործում այլ յուզում, զարգաց-

նում է մանուկների բնական ոյժերը։ Դաստիարակութեան գործի ամբողջ ընթացքն է աշակերտի սեպհական կենդանի գործունէութիւնը ուսուցչի ղեկավարութեան տակ։ Ուսուցման մէջ աշակերտը բերում է ճանաչողական ոյժեր և տաղանդներ. իսկ ուսուցիչը նպատակայարմար դասաւանդութեամբ հետաքրքրութիւն է շարժում դէպի ճանաչողութիւնը, զարգացնում է ուշիմութիւն, յառաջացնում ջանասիրութիւն։ Բարոյական դաստիարակութեան մէջ աշակերտը երևան է գալիս իւր խղճով, որ բնազդմամբ որոշում է չարն ու բարին. ուսուցիչը պատշաճաւոր իմաստութեամբ գործելով, նպաստում է մի առանձին նուրբ բարոյական զգացմունքի զարգանալուն, դէպքեր և առիթներ է տալիս բարի գործ կատարելու, պահպանում է հոգւոյ լուսաւոր տրամադրութիւնը, որը յառաջանում է պարտականութիւն կատարելուց. ամրացնում է երեխայի մէջ վճռողականութիւն առաքինութեան շաւղով ընթանալու։

Այն ուսուցումը, որ չէ հիմնուած ուսանողի ինքնագործութեան վրայ՝ բթացնում է նորան։ Ստիպողական, կրաւորական հնազանդութիւնը թուլացնում է բնաւորութիւնը։ Միայն այն գիտելիքները արդիւնաւոր են, որոնք ձեռք են բերուած աշակերտի ոգևորուած աշխատանքով։ Միայն այն բարի գործը գնահատելի է, որը կատարուած է նախ ներքին համոզմունքով, որ գործը արժանաւոր է, ապա այդ բարի գործը կատարողի ազատ վճռով։

Դաստիարակութեան նպատակին հասած պիտի համարել միայն այն դէպքում, երբ սանը ոչ միայն գիտութիւններ է իւրացրել և իւր ոյժերը զարգացրել, այլ և սիրել է գիտութիւնը և իւր ոյժերը վարժեցնելու ճաշակ է ձեռք բերել. երբ նա ոչ միայն սովորել է խիստ կերպով որոշել աղնիւը և անազնիւը, այլ և երբ սորա հետ միասին ընդունակութիւն է ձեռք բերել կեանքի ամեն կասկածաւոր դէպքերում ընտրել արդարութեան և բարւոյ ճանապարհը։ Սորանից հետևում է այն, որ դպրոցական դաստիարակութեան արդիւնքները լիակատար պարզութեամբ երևան են գալիս սանի մէջ դպրոցից դուրս գալուց յետոյ։

Երբ նա դպրոցական ընթացքը աւարտելուց յետոյ շարունա-

կումէ սովորել, և եթէ շարունակումէ նմանապէս լաւ լինել և այն ժամանակ, երբ հեռացել է նրանից դպրոցի արթուն հսկողութիւնը, այդ նշանակումէ որ դաստիարակութիւնը յաջող էր։ Եւ որքան աւելի երկար պահպանումէ դպրոցի այդ հեռքը, այնքան աւելի արդիւնաւոր է եղել նորա ազդեցութիւնը։

Դպրոցը սանի հոգու մէջ մի կրակ պիտի վառէ որ չպէտք է մարի երբէք։ Դպրոցական դաստիարակութեան միջոցները նոյն են ինչ որ ընդհանուր դաստիարակութեան (§ 3)՝ խնամատարութիւն, ուսուցումն, և ղեկավարութիւն։

§ 6.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՆՔ։

Վերևում (§ 4) ասուած էր, թէ քիչ ծնողներ կարողութիւն ունին անմիջապէս և անձամբ կատարելու այն բոլոր պարտականութիւնները, որոնք նոցա վրայ դրուած են երեխաների դաստիարակութեան համար։ Ժամանակի սուղութիւնը, գիտութեան և մտաւորութեան սակաւութիւնը և նոյն իսկ սիրոյ պակասութիւնը դէպի դաստիարակութեան գործը խիստ յանախ ստիպում են ծնողներին դպրոց տալ իրենց երեխաներին։ Թէկուզ երեխաները տան մէջ էլ դաստիարակուեն՝ համարեա միևնոյն պատճառներով ծնողների դաստիարակչական գործունէութիւնը լինումէ ոչ այլ ինչ, եթէ ոչ արտաքին հսկողութիւն նոցա վրայ և այն, որ ծնողները պահպանումեն երեխաներին կարգի և բարի վարուց դէմ խիստ շեղուելուց։ Մինչդեռ դաստիարակութիւնը պիտի ներգործէ մարդու վրայ ոչ թէ այդպիսի արտաքին և բացասական կերպով, այլ և ներքին և դրական կերպով։ Նա պիտի ըմբռնէ սանի ամբողջ ներքին աշխարհը, ամեն կողմից ազդէ նորա վրայ, գործէ իբրև ամբողջացած և լրացած մի համակարգութիւն։

Դաստիարակութիւնը այդպիսի լուրջ դերը կարող է ստանալ

ընտանիքի մէջ միմիայն բացառական դէպքում։ իսկ ընդհանրապէս դա դպրոցի բանն է, որովհետև դպրոցը յատկապէս դաստիարակչական հիմնարկութիւն է։

Ցեռոյ՝ դպրոցական դաստիարակութիւնն ունի մի էական առաւելութիւն ընտանեկանի համեմատութեամբ։ Շատ հասակակիցների ընկերութեան մէջ ապրելը մի այնպիսի պայման է դպրոցական դաստիարակութեան մէջ, որ երբէք չէ կարող տեղի ունենալ ծնողական տանը, որ սակայն թանկագին միջոց է ուսուցումը յաջողութեամբ տանելու համար և բարոյական բնաւորութիւն զարգացնելու։ և այդ պայմանը անփոխարինելի է դարձնում դպրոցը, հետևապէս դպրոցը պիտի համարուի կրթութեան մի անհրաժեշտ շրջան։

Բացի այն, որ հասարակական ուսուցումը աւելի հիմնաւոր է և արդիւնաւոր քան թէ տնային կամ մասնաւոր ուսուցումը, նոյն իսկ իւր ընթացքով կրթում է աշակերտի մէջ հասարակական յայտնի առաքինութիւններ։ Նա փարժեցնում է երեխաներին գնահատել ընդհանուրի շահը, զոհել նրա համար իւր իսկական պիտոյքները, զարգացնում է նրանում իւր անձը կառավարելու ընդունակութիւն։ Համբերութեամբ սպասել դասարանական աշխատութիւնների վերջանալուն՝ ահա առաջին զոհը, որ ապագայ քաղաքացին անում է ընդհանուրի օգտի համար։ Այսպէս ուրեմն դպրոցական կրթութիւնը, հակառակ տնային կրթութեան, ուր ծանրութեան կենդրոնն է տանի անձնաւորութիւնը, ամենից շատ նպաստում է բնաւորութեան այն յատկութիւնների զարգանալուն, որոնք կարևոր են անձնական բարգաւաճութեան և հասարակական բարեկեցութեան համար։

Բայց եթէ ուսուցումից դառնանք դպրոցի ղեկավարական կարգին, այն ժամանակ դպրոցական կրթութեան նշանակութիւնն աւելի ևս պարզւում է։ Դպրոցը նախատիպարն է այն ամեն հիմնարկութիւնների, որոց անդամ է համարւում իւրաքանչիւր իրաւունքի տէր քաղաքացին։ Դպրոցը հասարակութիւն է իւր պետով, իւր օրէնքներով, իւր ընդհանուր գործով։ Եթէ նա կանոնաւորուած է, ոնը չէ կարող զուրս չտանել այնտեղից կանո-

նաւոր յարաբերութիւններ դէպի վարիչ իշխանութիւնը, դէպի օրէնքները, և իւր պարտականութիւնները։

Այսպէս ուրեմն՝ դպրոցի կեանքը—կեանքի իսկական դպրոցն է։

§ 7.

ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ։

Ընդունելով դպրոցի մեծ կարևորութիւնը և նորա անփոխարինելի լինելը իբրև կրթական հիմնարկութեան, չպէտք է սակայն կարծել որ դպրոցը ամենակարող է։ Նորա ազդեցութեան չափը որոշւում է նախ և առաջ նորա կատարած պաշտօնով (§ 5)։ Դպրոցը ոչ թէ ստեղծագործող հիմնարկութիւն է, այլ մշակող։ Որպէս զի երևայ նորա ազդեցութիւնը, անհրաժեշտ է մի այնպիսի նիւթ, որ կարելի լինի մշակել։ Ամենահանճարաւոր քանդակագործն անգամ չէ ստեղծում գեղարուեստական բան այնպիսի նիւթից, որն անպէտք է մի որ և է կաղապար շինելու համար։ Նմանապէս և ամենաբարեկարգ դպրոցն անկարող է զարգացնել սանի մէջ այնպիսի ընդունակութիւններ կամ հակումներ, որոնք գոյութիւն չունին նորանում նոյն իսկ իբրև սաղմ։

Բացի այդ, դպրոցը նշանաւոր չափով կախում ունի ընտանիքից։ Այն սէրը, որ ակներև անձնազոհութեան հետ տածում են ծնողները դէպի երեխաները, կապում է նոցա այնպիսի ամուր սրտագին յարաբերութիւններով, որոնք միջոց են տալիս խիստ կերպով ազդելու երեխաների վրայ։ Այդ ազդեցութեան տակ երեխաները բոլորովին անկասելի կերպով իրագործում են ծնողների հայեացքները, մտածողութեան եղանակը և նոցա սովորութիւններն ու բարքերը։ Բայց որովհետև ծնողները նմանապէս համարեա միշտ լինում են շրջապատող հասարակութեան աւելի կամ պակաս ազդեցութեան տակ, որին միևնոյն ժամանակ հանդիպում են երեխաները հայրենական անից դուրս, ուստի սորանից պարզ է որ դպրոցն էլ չէ կարող չենթարկուիլ յայտնի ճնշման հասարակական բարքերի, հասարակական կար-

ծիքի կողմից։ Բոլոր այդ զանազանակերպ միջոցների դէմ, որոնցով արտայայտւում է ընտանիքի և հասարակութեան ազդեցութիւնը դաստիարակուող պատանիների վրայ, դպրոցն ունի ճիշտ ասած միակ միջոց՝ ուսուցումն, որից ամեն բան ծագում է, և որի շուրջն է խմբուած դպրոցի մէջ ամեն ինչ։

§ 8.

Ի՞ՆՉ ՊԷՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԱՍԵԼՈՎ.

Ինչպէս դաստիարակութիւն խօսքը երկու իմաստով է հասկացւում՝ աւելի ընդարձակ և աւելի նեղ (§ 5), այնպէս էլ ղեկավարութիւն խօսքը կարող է ունենալ աւելի նեղ իմաստ և աւելի լայն։ Նեղ իմաստով մեզանում գործածւում է կարգապահութիւն խօսքը։ Սովորաբար «դպրոցական կարգապահութիւն» (դիսցիպլինա) խօսքը հասկանում են իբրև դպրոցի արտաքին կարգը։ Երբ ասում են թէ այս ինչ դպրոցում կարգապահութիւնը (դիսցիպլինան) լաւ է, մեծաւ մասամբ այդ նշանակում է թէ այդ դպրոցում ամեն բան ընթանում է նշանակուած կարգով, ուսուցիչները իրանք չեն բացակայում։ և պահանջոլ են աշակերտի վերաբերեալ, աշակերտները խստութեամբ կատարում են իրենց պարտականութիւնները և կամայականութիւն չեն անում։ Սակայն այդ տեսակ արտաքին յատկանիշներով չէ լրանում դպրոցական ղեկավարութեան (դիսցիպլինայի) իմաստը։ Արտաքին բարեկարգութիւնը, իսկապէս ասած դպրոցի ղեկավարական գործունէութեան մի կողմն է։ Դպրոցական ղեկավարութիւնը, խօսքի ընդարձակ իմաստով, բացի այդ գործի արտաքին կողմից, ունի նոյնպէս աւելի նշանաւոր ներքին կողմը։ Խօսքի այդ իմաստով ընդունուած դպրոցական դիսցիպլինան՝ դաստիարակչական բնութիւն ունեցող այն բոլոր միջոցների համախմբութիւնն է, որոնք գործ են դրւում դպրոցում։

Այդ նշանակութեամբ դպրոցական ղեկավարութիւնը զուգադրւում է ուսուցման հետ, որ համարւում է իբրև այն բոլոր մի-

ջոյների համախմբութիւն, որոնք գործ են դրուում դպրոցում գիտելիքներ հաղորդելու մերձաւոր նպատակով։

§ 9.

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ։

Աշակերտներ ղեկավարելու արուեստը հաւասար հեշտութեամբ ձեռք չէ բերում իւրաքանչիւր ուսուցիչ։ Ո՛վ ընդունակ է կանոնաւոր գնահատութիւն անելու այն բոլոր մանր բաների, որոնցից կազմուած է դպրոցական կեանքը, ո՛վ հմտութիւն ունի հաշուեցնելու այն բազմազան շահերը, որոնք դիպչում են իրար դպրոցական կեանքում, ոչ մի կողմ չշեղուելով մի անգամ ընտրած նպատակներից, այն մարդը առանց դժուարութեան ձեռք կբերէ ղեկավարելու արուեստը։ Իսկ ո՛վ որ զուրկ է այդ ընդունակութիւնից՝ նա կհանդիպի մեծ դժուարութիւնների։ Նոր ուսուցիչները սովորաբար մեծ դժուարութիւնների են հանդիպում, երբ կամենում են հաստատուն դիրք տալ ղեկավարութեան գործին։ Ահա ինչու համար դպրոցական ղեկավարութեան տեսութեան ուսումնասիրութիւնն անհրաժեշտ պահանջ է իւրաքանչիւր անձի համար, որ նուիրւում է մանկավարժական գործունէութեան։

Չէ կարելի հերքել որ լինում են այնպիսի ուսուցիչներ, որոնք պարզ գաղափար չունենալով ղեկավարութեան տեսութեան մասին, բաւարար արդիւնք են ստանում գործի մէջ։ Սակայն այդպիսի ուսուցիչները յաջող բացառութիւններ են։ Նոցա յաջողութիւնը կամ բնական յատուկ տաղանդից է, կամ այն բարեյաջող պարագաներից, որոց մէջ անցել է նոցա գաստիարակութիւնը։

Ընդհանրապէս ասելով՝ այն մարդը, որ նուիրել է իրան մանկավարժական գործունէութեան, չի կարող չպարզել իր համար թէ ի՞նչ է դպրոցական ղեկավարութեան էութիւնը և նպատակը, ի՞նչ արգելքներ կան դէպի այդ նպատակը տանող ճանապարհների վրայ, ի՞նչ միջոցներով կարելի է

հեռացնել այդ արգելքները և ինչպէ՞ս հարկաւոր է օգտուիլ այդ միջոցներից նպատակին անպատճառ հասնելու համար։

Դպրոցական ղեկավարութեան տեսական ուսումնասիրութիւնը զգուշացնում է անփորձ ուսուցչին կոպիտ սխալներից գործունէութեան նոյն իսկ սկզբում՝ ղեկավարութեան գործին սկզբնաւորութիւն տալու ժամանակ, և այնպիսի սխալների հետևանքը զգացնում է խիստ երկար ժամանակի ընթացքում։

Ով ղեկավարութեան գործին ձեռնամուխ է լինում առանց տեսական պատրաստութեան, նա ոչ աւելի պակաս բիսկ է անում քան թէ այն մարդը, որ սկսում է ուսուցանել, ծանօթութիւն չունենալով մանկավարժական գործի հոգեբանական հիմունքների և դիտակտիկական կանոնների մասին։ Տեսական պատրաստութիւնը սկսող ուսուցչին տալիս է հաստատ ուղղեցոյց, որ պահպանում է նորան դէս ու դէն անհնպատակ թափառումից։ Տեսականապէս պատրաստուած ուսուցիչը գիտէ ինչ է ուզում և ինչ է կարող անել։ Գործին ձեռնամուխ լինելով նա հաստատ հող ունի արդէն իւր ոտների տակ. իսկ ընթերցանութիւնով, անձնական փորձով, գործակից ընկերների փորձի ուսումնասիրութեամբ կատարելագործում է ուսուցիչը — գործի վարպետը։

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ (ԴԻՍՑԻՊԼԻՆԱՅԻ) ԷՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՊԱՏԱԿԻ ՄԱՍԻՆ։

Ա) ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԸՆՉՈՒԹԵԱՄԲ։

§ 10.

ԹԷ Ի՛ՆՉ Է ԴՊՐՈՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ։ ՆՈՐԱ ԳՈՐԾԸ ԵՒ ՆՊԱՏԱԿԸ։ ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԻ ՄԷՋ։

«Դիսցիպլինա» լատինական խօսք է. հայ լեզուով դա նշանակում է խրատ, ուսուցում նոյնպէս՝ վարժեցնելու, սովորեցնելու արուեստ, ղեկավարութիւն. սոյն հեղինակութեան մէջ «դիսցիպլինա» խօսքը գործածւում է հէնց այդ ընդարձակ նշանակութեամբ։

Այդպիսի նշանակութիւն տուին դիսցիպլինային նոր մանկավարժութեան հեղինակները։ «Դպրոցական դիսցիպլինան», ասում է Դիստերվեգը, «մի ինքնագոյ բան չէ, և ոչ մի զատուած բան ուսուցումից։ Իսկական ուսուցանողը մի և նոյն ժամանակ և դեկավարող է։ Ով լաւ է սովորացնում նա հմտութեամբ և դեկավարում է»։ Ուսուցումը «դիսցիպլինա» է դեռ դասական հեղինակների կարծիքով, որ դժբաղդաբար միշտ չէ մնում մեր յիշողութեան մէջ։ Հարկ է ծնում տեսնելով ուսուցման և դիսցիպլինայի մէջ եղած մերձաւոր կապը արդեօք յարմար է, դիսցիպլինայի մասին գրել բաժանելով նրան ուսուցումից։ Բոլորովին ճշմարիտ է որ ուսուցումը դպրոցի դաստիարակչական գործունէութեան կենդրոնն է, որ ուսուցումը ոչ միայն ձգտում է մեռեալ դրամագլուխ չդարձնել գիտութիւնը, այլ անել այնպէս, որ այդ գիտութիւնը ցոլանայ երեխայի հոգու մէջ յայտնի տրամադրութիւններով։

Բայց եթէ այդ ամենը ճշմարիտ է՝ անհերքելի է և այն, որ ուսուցումը ամենանշանաւոր գործիքն է դաստիարակութեան մէջ, բայց ոչ միակը, և որ նորա համար անպայման կարևորութիւն ունի նաև դիսցիպլինան, իբրև դաստիարակչական գործունէութեան մի ճիւղ՝ իւր սեպհական բովանդակութեամբ և պաշտօնով։

Այն բարի ձգտումից, որ յառաջանում է ուսուցման ազդեցութեամբ, մինչև համապատասխան բարի գործը որոշ հեռաւորութիւն կայ, յայտնի ճանապարհ, որի վրայ այդ ձգտումը կարող է փոփոխուիլ այս կամ այն ուղղութեամբ և կամ բոլորովին սպնչանալ։

Բարի ձգտումներ իրագործելու համար պահանջւում է մարդուց իւր անձին տիրելու ընդունակութիւն, որ չի արւում ուսուցումով։

Իւր անձի տէր դառնալը հեռևանք է բարոյական զգացմունքների և կեանքի կանոնաւոր և նպատակայարմար մարժութեան։ Եթէ այդ վարժութիւնները զարգացրել են սանի մէջ բարի սովորութիւններ և հակումներ, եթէ նոքա սովորեցրել են ճնշել

բնական եսամոլ պահանջները, և բաւականութիւն ստանալ բարոյական գործերից, այն ժամանակ ուսուցման ներշնչած բարի ձգտումները չեն մարում և շարժառիթներ են լինում լաւ վարքի։ Ուրեմն ուսուցման հետ անհրաժեշտ է միացնել երեխաների զգացմունքի և կամքի վարժութիւնը, դպրոց զի ամրանան նոցա մէջ բարոյական լաւ սովորութիւններ։ Բաւական չէ իմանալ ինչ է բարին, քաջութիւն պէտք է ունենալ և հմտութիւն բարի գործ անել։

Սորանից յետոյ դպրոցը իւր առջև ունի մանուկների մի ամբողջ շրջան կամ հասարակութիւն։ Այդ շրջանին պատկանելը յառաջացնում է հասարակական յայտնի պարտականութիւններ։ Աշակերտը վարժուած պիտի լինի անել ոչ թէ այն, ինչ որ ուզում է անել, այլ այն, ինչ որ պարտական է։ Նա սովոր պիտի լինի յարգելու դպրոցի կանոնները, իւր անձնական պահանջները սովոր պիտի լինի ենթարկելու հասարակական պահանջներին, նա պիտի ցոյց տայ հասարակական առաքինութիւն։ Այդ կարև որ է և անհրաժեշտ նոյն իսկ ուսուցման գործի յաջողութեան համար, որովհետև չէ կարող կանոնաւոր ուսում տեղի ունենալ, երբ երեխաները հասարակական զգացմունքներով տոգորուած չեն։ Ուրեմն երեխաների շրջանի բարեաց համար և ուսուցման գործի յաջողութեան նպաստելու համար՝ դպրոցը պարտական է պատուաստել երեխաների մէջ հասարակական լաւ սովորութիւններ։

Վերջապէս մարմնաւոր առողջութեան այս կամ այն վիճակը, նմանապէս և ֆիզիկական այժերինը, անխուսափելի կերպով արտայայտւում է թէ երեխաների մտաւոր գործունէութեան վրայ, և թէ նոցա տրամադրութիւնների և ձգտումների բնութեան վրայ ուստի երեխաների ֆիզիկական բարեկեցութեան մասին խնամատարութիւնը չէ կարող դպրոցի պարտականութեանց մէջ չմտնել։ Այդ խնամատարութիւնը չպիտի սահմանափակուի լոկ տեղեկութիւններ հաղորդելով երեխաներին մարդուս ֆիզիկական զարգացման պայմանների մասին։ Դպրոցը պիտի տայ կեանքի այն տեսակ կազմակերպութիւն, որ նպաստէ այդ զարգացմանը։

Այդպիսի կազմակերպութեան պահպանութիւնը դպրոցական դիսցիպլինայի գործն է։

Ուրեմն դպրոցական դիսցիպլինան մի համախմբութիւն է դպրոցի գործադրած միջոցների՝ այն նպատակով որ երեխաների մէջ զարգանան բարոյական սովորութիւններ՝ թէ հասարակական, և թէ ֆիզիկական։

Դպրոցական դիսցիպլինայի նպատակն է վարժեցնել երեխաներին կանոնաւոր գործողութեանց նոյն իսկ այն ժամանակ, երբ դեռ ընդունակ չեն նոքա ինքնուրոյն կերպով որոշելու իւրեանց արածի վատն ու լաւը։ Խնամքով և հոգածութեամբ պահպանելով երեխաների ֆիզիկական բարեկեցութիւնը՝ ղեկավարութիւնը պահպանում է դպրոցի մէջ բարոյական լաւ կարգ, և դորանով տալիս է երեխաների ֆիզիկական զարգացման և ընաւորութեան կազմակերպութեան նպաստող լաւագոյն պայմաններ։

Այդ է դպրոցական ղեկավարութեան ամենամերձաւոր նպատակը։ Իսկ հեռաւոր և բարձրագոյն նպատակն այն է, որ պատրաստէ աշակերտին ինքնակրթութեան համար և հասարակութեան ապագայ անդամին վայել գործողութեան համար։

Այսպէս ուրեմն՝ դպրոցական ղեկավարութեան անմիջական պաշտօնն է մտցնել և պահպանել դպրոցի մէջ արտաքին և ներքին բարի կարգեր։ Իսկ այդ կարգերը դաստիարակչական ուրիշ ազդումների հետ պիտի ապահովեն աշակերտի համար կանոնաւոր յառաջընթաց շարժում դէպի բարոյական ազատութիւն. ղեկավարական կանոնները կարող են այդ դէպքում համեմատուել ուղղեցոյց սիւնի հետ, գործ տեսնելով այնքան աւելի նախազգուշութեամբ, որքան հեռու է աշակերտը բարոյական հասունութիւնից։

Ուրեմն՝ թէև գործի մէջ ղեկավարութիւնը անբաժանելի է ուսուցումից, բայց որովհետև ղեկավարութիւնը միևնոյն ժամանակ՝ ունի գործողութեանց առանձին ասպարէզ, սեպհական նպատակ և պաշտօն, ուստի կարելի է դառնում ղեկավարութեան ուսումնասիրութիւնը տանել ուսուցման ուսումնասիրութիւնից

բաժան, ինչպէս որ կարելի է ուսուցման հարցը քննել դասախարակութեան հարցից զատ։ Ինչպէս կարող է գոյութիւն ունենալ ուսուցման մեթոդիկայ, նոյնպէս գոյութեան իրաւունք ունի ղեկավարութեան մեթոդիկան։

§ 11

ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՍՏՈՐԱԴԱՍ ՄԱՍԸ (ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ)

Դպրոցական ղեկավարութեան առաջին պարտականութիւնն է այն, որ աշակերտների արտաքին վարմունքները ենթարկելով ճիշտ կանոնների, ստեղծուին այնպիսի պայմաններ, որոնք նպաստաւոր լինին ուսուցման յառաջադիմութեան։ Այդ ուղղութեամբ գործածուած միջոցները պայմանաւորուած են ոչ այնքան հոգեբանական հիմունքներով, որքան լոկ անհրաժեշտութեան պահանջներով։

Ուսուցիչը իւր դասախարակչական գործունէութեան մէջ պիտի չհանդիպէ որևէ արտաքին արգելքների երեխաների կողմից։ Նորա ծրագրները կարող են իրագործուիլ միայն այն անհրաժեշտ պայմանով, որ երեխաների կամքը ենթարկուած լինի նորա կամքին։ Դորա անհրաժեշտութիւնը ակներևէ և այլ հայեցակէտով։

Աշակերտը անդամէ այն ընկերութեան, որ մենք դասարան ենք անուանում։ Նա ունի ընկերական պարտականութիւններ։ Անկարելի է երևակայել այնպիսի կարգ, որն իրաւունք տար աշակերտին անելու իւր խելքին եկածը։ Կարելի՞ բան կը լինէր ուսուցումը, երբ աշակերտներից մինը գիրք կարդար, միւսը աղաղակէր, երրորդը թմբկահարէր ապակու վրայ և այլն։ Ուստեմն աշակերտը ընդհանուր ճանապարհի վրայ պիտի մնուի, պիտի ենթարկուի դաստիարակի կամքին և հասարակական պարտականութեան։ Այս դէպքում կարգի ապաւաղումը պատժւում է ոչ յանուն բարոյական սկզբունքների, այլ ֆիզիկական անհրաժեշտութեան պատճառաւ։

Նոյնպէս և միայն արտաքին պատճառներ ստիպում են պահպանել երեխաների առողջութիւնը և ֆիզիկական ոյժերը։

Սանի առողջության կորուստը և ուժերի թուլանալը անկարելի են դարձնում դաստիարակությամբ ներգործելը նորա վրայ։ Ֆիզիկապէս արատաւորուած և ուժասպառ աշակերտը ծանր բեռ է դառնում հասարակության համար։ Արդէն միայն այդ հիմունքները պարտաւորացնում են դաստիարակին խնամք տանել և հոգս անել երեխայոց ֆիզիկական վիճակի մասին, հեռացնել և իսպառ արգելել այնպիսի գործողութիւններ, որոնք վնասակար են սանի ֆիզիկական բարեկեցութեանը։

Ուսուցչի ահա այսպիսի գործունէութիւնը, որ բղխում է արտաքին անհրաժեշտութիւնից և ծառայում է երեխայոց ֆիզիկական բարեկեցութեանը, ուսուցման յառաջադիմութեան և ընդհանուրի օգտին, գործունէութիւն, որով սանձւում է և ուղղութիւն ստանում նոցա վարքը, որով նոքա ենթարկւում են դաստիարակի կամքին և հեռացւում է ամեն միջոց դիմադրելու ուսուցչի դաստիարակչական ծրագրներին, այդպիսի գործունէութիւն համարւում է դպրոցական ղեկավարութեան իբրև ստորադաս մասը կամ ինչպէս ասում են «կառավարութիւնը»։

Արդեօք հարկաւոր է այդ գործունէութիւնը քննել իբրև դաստիարակչական, թէ որ նա բղխում է որոշ բոպէի պահանջմունքներից և ի նկատի ունի ոչ թէ դաստիարակութեան բարձրագոյն գաղափարը, այլ լոկ արտաքին յարմարութիւններ։ Կառավարութիւնը արդարև ունի ոստիկանական բնաւորութիւն, բայց երբ նա կանոնաւոր ընթացք է բռնել, պատշաճաւոր կապ է պահպանում դպրոցի բարձրագոյն պաշտօնի հետ՝ արտաքին կարգ ստեղծելով, անտարակոյս նա գործում է նաև դպրոցի ներքին կեանքի զարգացման օգտին՝ նպաստելով բնաւորութիւնների կազմակերպութեան։ Երեխայոց բնաւորութեան այն բոնկումները, որ հանգցնում է դպրոցը, չէ կարելի համարել բնաւորութեան սկզբնական որոշիչներ։ Բնաւորութեան հիմքում դրած է ամուր, անփոփոխ և խոր արմատացած ձգտում։

Սիստեմատիկաբար դիմադրելով երեխաների կամակորութեան և ստնձարձակութեան արտայայտութեանց, կառավարութիւնը գործում է նորա միւս ցանկութեանց օգտին, որոնք աւելի գիտակ-

ցական են և օրինաւոր։ Խեղդելով առաջինները՝ նա յուզում և ամրացնում է վերջիններին և այդպիսով գործում է դաստիարակութեան համաձայն։ Կառավարութիւնը հոգ է պատրաստում բարոյական դաստիարակութեան համար։ Այն բարի սովորութիւնները՝ որոնք զարգանում են կանոնաւոր զրուած կառավարութեան շնորհիւ՝ կազմում են առաքինութեան սկզբնական յատկանիշներ։

§ 12.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ (ՆԱԽԱԴԱՍ) ՁԻՒՂԸ (բարոյական ղեկավարութիւն)։

Բարոյական դաստիարակութիւնը չէ կարող սահմանափակուել սանձելու և կրաւորական հնազանդութեան ձևերով։ Մարդը ազատ էակ է՝ ըստ որում բարոյական դաստիարակութեան նպատակին հասած կարելի է համարել միայն այն դէպքում՝ երբ նորա հեռ՝ էանքն է լինում լաւագոյն գործելու ընդունակութիւն՝ սեպհական ներքին համոզմունքով։ Այլապէս ասած բարոյական դաստիարակութիւնը՝ մշակելով պիտի կատարելագործէ սանի մէջ բարոյական բնաւորութիւն։

Բայց ի՞նչ է բարոյական բնաւորութիւնը։ Անհրաժեշտ է զանազանել բնաւորութեան երկու կողմերը՝ ներքին և արտաքին։ Բնաւորութեան հիմքն է կազմում մի յայտնի շրջան գաղափարների՝ գիտութիւնների և այնպիսի կանոնների՝ որոնք հիմնաւորապէս մտածուած են և ամրապէս իւրացրած՝ ներդաշնակութեամբ միացած իրար հետ և իսկ արմատացած մարդու սրտի մէջ։ Բնաւորութեան միւս յատկութիւնն է վարժ կերպով՝ հեռանողութեամբ և անսայթաք իրագործել կեանքում և գործունէութեան մէջ այդ գաղափարները և կանոնները։ Բնաւորութեան ցոյց տուած առաջին կողմը կրթւում է գլխաւորապէս ուսուցման ներգործութեան տակ։ Իսկ բնաւորութեան երկրորդ գիծը ուսուցումը չէ կարող ստեղծել։ Բնաւորութեան այդ յատկութիւնը պիտի զարգանայ՝ այն դաստիարակչական գործունէու-

թեան շնորհիւ՝ որ մենք անուանում ենք ղեկավարութեան բարձրագոյն ճիւղ կամ բարոյական ղեկավարութիւն։

Խօսքով և օրինակով՝ խրատելով և զգուշացնելով՝ խորհուրդներով և պատիժներով ուսուցիչը յառաջ է բերում աշակերտի մէջ օրտի և կամքի այնպէսի ուղղութիւն՝ որ վատ վարմունքը պատժւում է աւելի այն համոզմունքով՝ թէ նա անբարոյական է՝ և բարի գործը ներքուստ գոհութիւն է պատճառում հոգուն՝ որ մարդ ոգևորուած է լինում բարեայ և ճշմարտի գաղափարով և տոգորուած գաղափարական պահանջները կեանքում իրագործելու փափագով՝ և մի խօսքով՝ արժանաւոր վարքը արտայայտութիւն է լինում մաքուր զրգռմների և բարոյական հաստատուն համոզմունքների։ Սանի հոգևոր ոյժերի մշակութիւնը այդ ուղղութեամբ ներկայացնում է ղեկավարութեան բարձր՝ ազնուագոյն կողմը։

Հասկանալի է ինչ մեծաւոր կապ ունին դաստիարակութեան այդ կողմը և ուսուցումը։ Բարոյական ղեկավարութիւնը կարելի բան է դառնում այնտեղ՝ որտեղ ուսուցման բովանդակութիւնը բաւարար չափով յարմարեցրած է դաստիարակչական նպատակներին։ Եթէ ուսուցման արդիւնքն են լինում անհաստատ գաղափարներ՝ այդ դէպքում տեղիք չեն կարող ունենալ հաստատուն կանոններ՝ իսկ առանց բարոյական հաստատուն կանոնների չկայ բարոյական ընաւորութիւն։

Ոչ սակաւ պարզ է այն յարաբերութիւնը՝ որ կայ երեխաներ կառավարելու և նոցա բարոյապէս ղեկավարելու մէջ։ Սոքա երկու կողմեր են միևնոյն գործի։ Դաստիարակչական գործունէութեան այդ երկու արտայայտութեանց թէ գործիքները և թէ միջոցները միևնոյն են՝ և միայն տարբեր են նոցա նշանակութիւնը և գործածութեան դնելու միջոցները։ Ուսուցչի հեղինակութիւնը անմեռանշանաւոր գործիքն է թէ կառավարութեան՝ և թէ ղեկավարութեան։ Բայց կառավարութեան գործում նորա հեղինակութիւնը գործում է իբրև ճնշող՝ զրգող ոյժ՝ մինչդեռ ղեկավարութեան մէջ նա գործում է իբրև ոյժ՝ որ ոգևորում է և յափշտակում։ Դպրոցական ղեկավարութեան ստորագաս մասում աշակերտը հնազանդում է այն պատճառով՝ որ անկարող

է հեռացնել ուսուցչի ազդեցութիւնը։ Ղեկավարութեան բարձր մասում աշակերտը ուսուցչին ցանկալի մի բան է անում այն պատճառով, որ տոգորուած է ուսուցչի գաղափարներով և ձգտումներով։

Հսկողութիւնը իւր ստորադաս ձևով հետևումէ մի բանի՝ թէ աշակերտները ենթարկուո՞ւմեն արդեօք սահմանուած կանոններին։ Իւր բարձր ձևով հսկողութիւնը ուսումնասիրումէ սաների արամադրութիւնները և հակումները, իմանալու համար թէ ո՞ր կողմից և ինչ պայմաններով ղեկավարական օգնութեան են նոքա կարօտ։ Իսկ գալով սաների ֆիզիկական խնամատարութեան կառավարութեան մէջ՝ սա արտայայտուումէ երեխաների ոյժերի և առողջութեան անմիջական պահպանութեան մէջ. իսկ ղեկավարութեան գործում այդ խնամատարութիւնը ձգտումէ զարգացնել երեխաների մէջ իւրեանց առողջութիւնը պահպանելու ընդունակութիւնը։

Պատասխանատուութեան ենթարկելու միջոցները կառավարութեան գործում գլխաւորապէս երկիւղ են ազդում, իսկ ղեկավարութեան մէջ ուղղումեն։ Որովհետև ղեկավարելը և կառավարելը երկու կողմեր են միևնոյն բարոյապէս դաստիարակող գործունէութեան, ըստ որում նոքա գործումեն միասին, բայց այնպէս, որ դաստիարակութեան սկզբում աւելի տիրումէ կառավարող մասը, իսկ աստիճանաբար՝ ուսանողների մտաւոր և բարոյական ոյժերի զարգացման համեմատ՝ առաջին տեղն սկըսումէ բռնել ղեկավարող մասը։

Երբ աշակերտները հասնումեն հասունութեան յայտնի աստիճանին՝ այն ժամանակ կարող է աւելորդ բան համարուել կառավարող տարրը. դիսցիպլինան ստանումէ միայն բարոյական ղեկավարութեան (առաջնորդութեան) նշանակութիւն։

(Շարունակելի)։

ՎԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԴՏՆՈՒԱԾ ՍԵՊԱՁԵՌ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1)

ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄ Մ. Վ. ՆԻԿՈԼՍԿՈՒ

I

Վանի արձանագրութեանց բովանդակութեան վերծանութիւնը։ Սեպագիր արձանագրութեանց գիւտը Ռուսաստանում։

Վանի կոչուած սեպաձև արձանագրութիւնները գլխաւորապէս Վան քաղաքում և նրա շրջականերումն են գտնուում։ 1827-ին առաջին անգամ նրանց ընդօրինակեց գիտնական Շուլցը՝ որ ֆրանսիական կառավարութեան կողմից ուղարկուած էր Վանի հնագիտական հետազօտութեան համար և նրա սեպագիր արձանագրութիւններն ընդօրինակելու։ Նորա ճանապարհորդու-

---

1) Մ. Վ. Նիկոլսկու այս յօդուածը հրատարակուած է Մոսկուայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան պարբերական հրատարակութեան մէջ (ДРЕВНОСТИ ВОСТОЧНЫЯ. Հատ. Ա. մ. 3. Մոսկուա 1893)։ Խմբագրութիւնս անհրաժեշտ համարեց այս գիտնական յօդուածի ամբողջական թարգմանութիւնը՝ աչքի առաջ ունենալով որ «Արարատը» մշտապէս հետաքրքրուել է Հայկական բևեռագրերի խնդրովը և արել է իւր կարողացածը՝ տալով գիտնականներին հում նիւթ։ Ռուսահայաստանում գտնուած բևեռագրերը մեծաւ մասամբ գտնուել՝ ընդօրինակուել՝ հրատարակուել կամ մասնագէտներին են ուղարկուել Միաբանութեանս անդամների՝ մասնաւորապէս Սրբ. Մեսրովբ Արքեպիսկոպոսի ձեռքով։ Այս աշխատութիւնը մի յաջող ամփոփումն է մինչև այժմ Հայկական (այն է՝ Հայաստանում գտնուած) բևեռագրերի մասին եղած հրատարակութեանց։

ՄԻԱԲԱՆ։

թեան հաշիւը հրատարակուեցաւ միայն 12 տարուց յետոյ՝ այն է 1840 թուին Journal Asiatique— ամսագրում հետևեալ վերնագրով։—Sur le lac de Van et les environs (Վանայ լճի վրայ և շրջակայքում)։ որին կցած էին 42 արձանագրութեանց նկարները։ Նրանից յետոյ Լէյարդի 1850 թ.։ Ներսէս Սարգսեանի - 1864 թ. և Ռասամի 1877 թ. կատարած ճանապարհորդութիւնները զգալի կերպով ուղղեցին և լրացրին Շուլցի հաւաքած նիւթը [1]։ բայց Շուլցի նկարներն ու տեղեկութիւնները ցայսօր Վանի արձանագրութեանց գիտնական ուսումնասիրութեան ամենագլխաւոր աղբիւրն են կազմում։

Գլխաւորապէս սեպագիր արձանագրութեանց բովանդակութեան լուծմամբ զբաղող նշանաւոր ասորագէտները՝ ինչպիսիք էին Գինկոը [2]։ Հէնրի Ռուլինսոն [3]) և Լընորմանը [4]) փորձում էին վերծանել այդ արձանագրութիւնները։ բայց նրանց փորձերը յաջողութիւն չունեցան։

Այդ արձանագրութեանց սեպագրերը փոխ են առնուած ասորեստանականից և թէ ձևակերպութեամբ։ թէ սճով նոյնն են։ ինչ որ Ասուր Նասիր Աբալ և Սաղմանասար II Ասորեստանի թագաւորներինը։ որոնք իշխում էին IX և VIII դարերում Քրիստոսից առաջ. նշանագրերը թէ դաղափարագրութեամբ։ թէ ֆոնէտիկաբար (հնչագրութեամբ) գործ են ածւում՝ այն նշանակութիւններով՝ ինչպէս որ ցոյց է տրուած Ասորեստանական հեղարանի մէջ. բայց այդ տեսակ ընթերցանութեամբ կազմուած բառերն ու դարձուածները բոլորովին նման չէին ասորեստանականին և ցարդ անյայտ մի

1. Լէյարդի Վանի սեպագիր արձանագրութիւններից մեծ մասի նկարները գտնուում են Բրիտանական թանգարանում և դեռ ոչ միանգամ չեն հրատարակուել։ Պրոֆ. Սէյսը իւր հետազօտութիւնները հրատարակելիս նրանցով օգտուել է։ Ներսէս Սարգսեանի նկարները հրատարակուած են Վենետիկում հայերէն։ Նա հրատարակեց նաև չորս նոր արձանագրութիւններ։—Ռասամի նկարները դարձեալ Սէյսի աշխատութիւնից են յայտնի։ որը նրանցով օգտուել է։

2) Journal of the Royal Asiatic Society vol. IX. երես 387—447 (1848 թ.)

3) Ibid. vol. XII երես 475 (1850 թ.)—

4) Lettres assyriologiques, tome I. երես 113—164 (1871 թ.)

լեզու էին ներկայացնում։ Այդ գիտնականները քիչ թէ շատ սրամիտութեամբ կարողացան որոշել մի քանի բառերի և դարձուածների նշանակութիւնը և թէև թոյլ՝ բայց կարծիք յայտնեցին թէ լեզուների որ ընտանիքին կարելի է վերագրել այդ լեզուն։ Մորգանն էր առաջինը՝ որը իւր մի առաջ այդ անյայտ ընագրերի արմատական լուծման պակասի լրացումը՝ որը 1882 թուին Zeitschrift der Deutchen Morgenländichen Geselchaft-ում զետեղուած Entziferung und Erklärung der armenischen Keilinchriften von Van und der gegend-վերնագրով ընդարձակ աշխատութեան մէջ նկարագրեց և կարդաց մինչև այդ ժամանակ յայտնի բոլոր արձանագրութիւնները՝ սակայն այդ փորձը չափազանց անյաջող եղաւ։ Ենթադրելով որ այդ արձանագրութեանց լեզուն ներկայ հայկականին նոյնանիշ է՝ Մորգանը բոլոր բառերն ու դարձուածները բացատրեց ներկայ՝ նորագոյն լեզուի բառգրքով և քերականութեամբ։ Այդ տեսակ հայեացքը հետևանք էր Մորգանի սեպագրերի (սիսաեմի) եղանակի և ասորեստանի լեզուի մասին ունեցած թոյլ ծանօթութեան 1)։

Ասորեստանի լեզուից բոլորովին տեղեկութիւն չունենալով՝ Մորգանը վատահաւատ վանում գտնուած բուն ասորեստանական արձանագրութիւնը կարդալ և մեկնել հայկական քերականութեամբ և բառերով։ Մի ուրիշ ծայրայեղութեան մէջ ընկաւ ֆրանսիացի գիտնական գօկտոր Ռոբէրտը՝ որը 1876 թուին հրատարակած - Etude philologique sur les inscription cuneiformes de l'Arménie - աշխատութեան մէջ ապացուցանում էր՝ որ այդ արձանագրութիւնները գրուած են ասորեստանական՝ սեմական լեզուով։ Լեզուաբանական այդ բոլոր կուրեօզներին վերջ դրեց ֆրանսիացի արաբագէտ և ասորագէտ Ս Գիյարը (Stanislas Guyard) Journal Asiatique-ի 1880 թուի մայիսի և յունիսի համարներում հրատարակած վանի բևեռագրերի համառօտ տեսութեան մէջ իւր հանճարեղ գիւտերը (երես 510—513)։ Նա շատ յաջող դիտողութիւններ անելով գտաւ՝ որ վանի արձանագրութեանց մեծ մասը վերջանում է միևնոյն ասացուածներով և ենթադրեց՝ որ

1) Մորգանի վերծանութեանց մասին տես «Արարատ» ամսագիր։

այդ դարձուածները գիմումն են աստուածներին՝ պատժելու նոցա, որոնք կըփոքձեն աւրել արձանագրութիւնները. մի բանաձև, որով սովորաբար վերջանում են ասորեստանի թագաւորների պատմական արձանագրութիւնները։ Այդ եզրակացութեան շնորհիւ Գիյարը բաւականին հիմնաւոր կերպով բացատրեց բառերի և դարձուածների նշանակութիւնը, որով և անսպասելի լոյս սփռեց վանի լեզուի քերականական ձևերի վերայ։ Այսպիսով ահա արձանագրութեանց բանալին արդէն գտնուած էր։

Գիյարի մեթոդից և գիւտից օգտուելով՝ Օկսֆորդի համալսարանի համեմատական լեզուագիտութեան պրոֆեսոր և յայտնի ասորագէտ Սէյսը (A. H. Sayce) կարդաց բոլոր արձանագրութիւնները և իւր հետախուզութեանց հետևանքը հրատարակեց Journal of the Royal Asiatic Society of Great Britain ant Jreland. vol. XIV Part 3 և 4 վանի բևեռագիրների մասին ընդարձակ յիշատակարանում։ Սակայն Սէյսի դիտողութիւններն և եզրակացութիւնները պահանջեցին մեծ սրբագրութիւններ, ստուգումներ, որոնք կատարուեցան Գիյարի [1]) և Վիեննայի պրոֆեսոր Միւլլերի (D. H. Muller [2]) վերոյիշեալ աշխատութեան նոյն հրատարակութեան յաւելուածի մէջ vol. XX Part. I. Բայց յամենայն դէպս այդ (նիւթերի) բևեռագիրների լուծման խնդիրը՝ շնորհիւ նոցա աշխատութեանց՝ բաւական հիմնաւոր է, թէև դեռ վերջնականապէս չի լուծուած։ Ինչ կը վերաբերի արձանագրութիւնների ժամանակագրութեան, արդէն վճռականապէս որոշուած է։ Վանի արձանագրութիւնները անկասկած փաստերի վերայ հիմնուած՝ վերաբերում են IX-դ դարու վերջերին և VIII դարու առաջին կիսին Քրիստոսից առաջ և գլխաւորապէս վանի հինգ թագաւորներին են պատկանում, որոնք յաջորդաբար իշխել են վանում՝ Սարդուրի Ի-նին Լուտիպրի որդուն, Իշպուինին՝ Սարդուրի Ի-ի որդուն, Մէնուային՝ Իշպուինի որդուն, Արգիշտիին՝ Մէ-

1) Melanges d'Assyriologie, Paris. 1883 թ. journal Asiatique t. I. երես 261, 517, t. II. երես 306: t. III. p. 499. 8 série.

2) Oesterreichische Monatschrifte für den Orient. (յունվ. 1885 և օգոստոս 1886) Die Keilinchrift von Achrut-Darga 36-դ հատոր Abhand. Kaiserl. Wien. Akademie.

նուայի որդուն և Սարգուրի II-ին՝ - Արգիշտի որդուն։ Այս թագաւորութեան ժամանակագրութիւնը որոշուած է շնորհիւ արձանագրութեանց պալէոգրաֆիական[1]) առանձնայատկութեանց, որոնք իրանց ձևակերպութեամբ շատ նման են Ասորեստանի թագաւոր Ասուր—Նասիր—Արալի (885—860 Քրիստոսից առաջ) և Սաղմանասար II-ի (860—825) արձանագրութեան և նոյնպէս շնորհիւ Ասորեստանի թագաւորների տարեգրութեանց ցուցմունքների։

Բայց չնայած այս ամենին՝ Վանի արձանագրութեանց լեզուն և նիւթը ներկայացնում են շատ կողմերից բևեռաձև արձանագրութեանց մասին եղած գիտութեան (ասորեստանագիտութեան) ամենագժուարին և դեռ ևս մութ մասը։ Այդ մասամբ նորանից է, որ հետախոյզները սովորած են գործ ունենալ ոչ բաւականաչափ ճիշտ և ուսուցուած նիւթի հետ, որպիսիք են այդ արձանագրութիւններից հանած պատճէնների մեծ մասը. նաև գլխաւորապէս այն պատճառով, որ դեռ ևս չի յաջողուել գտնել այն մերձաւոր ընտանիքը, որին կարելի լինէր վերագրել այդ լեզուն։ Նա մի բոլորովին առանձին բան է ներկայացնում։ Վրաց լեզուին նման մի քանի մասնաւոր երևոյթները դեռ իրաւունք չեն տալիս ազգակից համարելու վրացերէնին, թէև այդ ազգակցութեան կարելիութիւնը այս արձանագրութիւններն ուսումնասիրողները համարեա բոլորն էլ ընդունում են։ Տարաբաղդաբար կովկասեան լեզուների համեմատական ուսումնասիրութիւնը՝ մանաւանդ վրացերէնինը՝ դեռ շատ անկատար է. յամենայն դէպս, միայն վիրագէտ լեզուաբաններից կարող ենք յուսալ այդ հարցի աւելի վճռական պատասխանը։

Բայց այժմ Վանի արձանագրութեանց հետախոյզը հարկադրուած է բաւականանալ միայն ցայսօր յայտնի արձանագրութեանց նիւթերը իրար հետ համեմատելով։ Իրաւ է, այդ արձանագրութեանց բաւականին նշանաւոր մասը (մօտ 80 արձանագրութիւնք, որոնցից և մի քանիսը բաւականին ընդարձակ) գաղափարագիրների ընդարձակ գործածութեամբ, որոնք իւրեանց նշա-

---

1) Palaios հին և grapho գրում եմ. հմտութիւն հին գրութեանց ընթերցանութեան։

նակութեամբ ասորեստանականին նոյնանիշ են և արձանագրութեանց (ոճի) ձևակերպութեան ասորեստանականին նմանութեամբ հեշտացնում են նրանց լուծումն (վերծանութիւնը), բայց բառերի և դարձուածներիմեծ մասը մնում է դեռ ևս անհասկանալի և կմնայ, մինչև որ Վանի արձանագրութիւնները չըստանանք մեզ յայտնի որևէ լեզուով թարգմանութեան հետ, այսինքն Ռոզետտայի քարի նման մի բան։

Ռուսաց հնագիտութեան և պատմութեան համար այդ արձանագրութիւնները առանձին նշանակութիւն ունին, որովհետև Վանի արձանագրութեանց տիպարի շատ բևեռագիրներ գտնուած են մեր հայրենիքի սահմաններում։ Այս հանգամանքը՝ որպէս և արձանագրութեանց հնութիւնն ու նշանակութիւնը՝ պատմական և լեզուաբանական տեսակէտից իրաւունք է տալիս մեզ՝ ռուս գիտնականների առանձին ուշադրութիւնը հրաւիրելու այդ բանի վերայ։ Չնայած արձանագրութեան այդ մեծ նշանակութեան, չնայած որ՝ ուղիղ երեսուն տարի է անցել այն ժամանակուանից, երբ յայտնի եղաւ, որ բևեռագիրները գտնուում են և Ռուսաց սահմաններում մեր ռուսաց հնագիտութիւնը լուրջ չէր պարապում այդ առարկայով և այդ բանի մասին մեր գիտութիւնը շատ աղքատիկ էր. մինչդեռ այդ երեսուն տարուայ ընթացքում ռուսաց սահմաններում՝ այն է Երևանեան նահանգում՝ գտնուած են քսանից աւելի բևեռագիր արձանագրութիւններ և այն էլ ոչ թէ գիտնականներից կամ հնագէտներից, այլ տեղացի բնակիչներից։ Այդ արձանագրութիւններից մեծ մասը գտնելու պատիւը անկասկած պատկանում է հայ եպիսկոպոս Մեսրոպը Սըմբատեանին, որը ներկայումս Շամախու թեմի առաջնորդն է։ Վաթսունական թուականների սկիզբներին դեռ վարդապետ կամ հասարակ վանական եղած ժամանակ՝ Մեսրոպը կարդում է Մխիթարեանների աշխատութեանց մէջ, որ ներկայ հայաբնակ տեղերում գտնուում են սեպագիր արձանագրութիւններ և սկսեց հաւաքել այդ արձանագրութիւնները Ռուսահայաստանում՝ ենթադրելով, որ նոքա Հայոց հին պատմութեան հետ սերտ կապ ունին։ Նորա ջանքերը

յաջողութեամբ պսակուեցան, և եթէ արձանագրութիւններից ոչ բոլորը գտնուած են նորա ձեռքով, այնու ամենայնիւ մեծ մասը նա ինքն է գտել, բոլորը առանց բացառութեան անձամբ քննել՝ դիտել, ընդօրինակել է և շատ քիչ բացառութեամբ հրատարակել։ Այդ արձանագրութիւնները հրատարակելու համար նա սկզբում ընտրեց Մսերեանի ձեռքով Մոսկուայում հայերէն հրատարակուող «Համբաւաբեր Ռուսիոյ», իսկ յետոյ Էջմիածնում հրատարակուող «Արարատ» ամսագիրը։ Նորա նկարները շատ անյաջող էին, բայց նոքա հասնում էին արևմտեան այն գիտնականներին, որոնք մասնագիտաբար պարապում էին Վանի արձանագրութիւններով՝ ինչպիսիք էին՝ Մորգանը, Սէյսը, Միլլէրը, ոմանք ուշի ուշով քննում էին և ուսումնասիրում։ Այդ արձանագրութիւնները արևմտեան գիտնականներին հասցնող միջնորդի դերը կատարում էր հանգուցեալ ուսուցչապետ Ք. Պ. Պատկանեանը, որը նոյնպէս հաւատում էր նրանց հայկական ծագմանը։ Համեմատաբար աւելի նոր ժամանակներս միայն Մեսրոպը եպիսկոպոսը դիմեց արձանագրութիւնները լուսանկարելուն, որի համար և բացեց սեփական լուսանկարչարան, տարաբաղդաբար այդ ձևով նա դեռ շատ քիչ է օգտուել, բայց և այնպէս այդ նկարներն են կազմում Վանի արձանագրութեանց մասին մեր ունեցած ամենալաւ նիւթը։ Մեզ մօտ՝ Ռուսաստանում, այդ արձանագրութեանց գիւտի մէջ Մեսրոպի գործունէութեան մասին յայտնի էր Պատկանեանի «Ռուսաստանի սահմաններում գտնուած Վանի ձևի սեպագիրների մասին» համառօտ յօդուածից, որը հրատարակուեց Լուսաւորութեան Նախարարութեան ամսագրում 1883-ին։ Ներկայ 1892 թուին Մոսկուայի հնագիտական ընկերութեան անդամ ընտրուած Մեսրոպը արքեպիսկոպոսը ուղարկեց ընկերութեան իւր գտած բոլոր արձանագրութեանց լուսանկարները և նոցա գտնելու մասին համառօտ տեղեկագիրը։ Այդ նիւթը միջոց է տալիս աւելի մեծ ճշտութեամբ և լրիւ հաշիւ ներկայացնելու մեզանում գտնուած արձանագրութեանց մասին և առիթ է ներկայացնում նոր քննութեան ենթարկելու՝ ինչպէս այդ արձանագրութեանց նիւթը, նոյնպէս և նրանց մասին գիտութեան

մշակած համեմատութիւնները, մանաւանդ՝ որ Մեսրոպը սրբազանի ուղարկածների մէջ կան և այնպիսիք, որոնք ոչ մի տեղ դեռ չեն հրատարակուած։

Ռուսաստանի սահմաններում գտնուած համարեա բոլոր արձանագրութիւնները կրում են այն հարստութեան թագաւորների անունները, որին իրենց ծագմամբ պարտական են Վանի և նրա շրջակայքի շինութիւններն ու արձանագրութիւնները։— Մենուա, Արգիշտի և Սարգուի II։ Ընդհանրապէս պէտք է նկատել, որ Վանի թագաւորների արձանագրութիւնները գտնուում են Վանից հեռու տեղերում—դէպի արևմուտք, արևելք և հիւսիս, որից կարելի է եզրակացնել, որ Վանի թագաւորութիւնը զօրեղ միջոցին իւր նուաճումները տարածում էր բաւական ընդարձակ սահմանների վերայ։ Բայց ըստ երևոյթին, ոչ մի տեղ Վանի թագաւորները այնպէս հաստատուն չեն մնացել, ոչ մի տեղ այնպէս չեն աշխատել իւրեանց իշխանութեան յիշատակարանները կանգնեցնել, ի՛չպէս իւրեանց երկրի հիւսիսային՝ կովկասեան լեռնաշղթային մօտ՝ սահմաններում։ Այս բանին որպէս ապացոյց ծառայում են ցայսօր գտնուած արձանագրութեանց քանակութիւնը և նրանց բովանդակութիւնը։ Այս բանի պատճառն այն է, որ նրանց հին թագաւորութեան կեդրոնը եղել է Արաքսի մօտ, որի մասին մենք մանրամասն կըխօսենք հետևեալ գլխում։ Արձանագրութեանց մեծ մասը բաժանուում է երեք խմբի ըստ երեք, իրարից ոչ շատ հեռու տեղերի, որտեղ նրանք սկզբում գտնուեցան։ Առաջինն է Սևանայ լճի արևելեան և հարաւային կողմը, երկրորդ տեղն է Արաքսի ձախ ափին այն բլուրը, որտեղ ենթադրւում է Հայոց Արմաւիր քաղաքի գոյութիւնը՝ Էջմիածնից հարաւ—արևմուտք և երրորդն է Արմաւիրի հանդէպ Արաքսի աջ ափը։

Սևանայ լճի ափերին գտնուած է չորս արձանագրութիւն՝ երկուսը հարաւային ափին եղած Ալիչալու և Զախալու գիւղերում և երկուսը—արևմտեան կողմի Օրգաքլու և Ատամխան գիւղերում։

Ալիչալուի արձանագրութիւնը 19 տող է՝ մինը ամենամեծերից՝

և գտնուած է Մեսրովբի ձեռքով միւսներից վաղ՝—1869 թուին։ Նա վերագրուած է Ժայռի վերայ, որին բաղխումեն ալիքները և նկարելը կարելի է միայն մակոյկից և այն էլ որոշ տարաշուրթիւնից։ Նրա նկարը, որը տպուած է Մոսկուայում հայերէն հրատարակուող Ռուսաց Համբաւաբերի մէջ 1863 ին, շատ անյաջող է դուրս եկած, նորա վերայ չի կարելի ջոկել ոչ մի պարբերութիւն։ Տարաբաղդաբար ցայսօր նոր և աւելի լաւ նկար չի վերցրած և ուսումնասէր հետախուզներին անյոյս բան է ներկայանում նրա ընթերցանութիւնը։ Սէյսը № LV իւր յիշատակարանի մէջ զետեղել է այդ արձանագրութիւնը, բայց նա կարողացել է ջոկել միայն մի քանի բառ։ Մեկնել Սէյսից աւելին, անկարելի բան է այն նկարով, որը Մեսրովբից ուղարկուած է ընկերութեանս, մինչդեռ այդ արձանագրութիւնը մեծ նշանակութիւն պիտի ունենայ, որովհետև նրա ընթերցանութեամբ կարելի էր պարզել այն հին քաղաքի տեղը, որը ներկայ Ալիչաղուի տեղն էր գտնուում։ բացի դորանից գաղափարագիրներին նայած, արձանագրութեան մէջ յիշուած են շատ ուրիշ երկիրներ։ Ցայտնի չէ նոյնպէս թէ նա որ թագաւորին է պատկանում։ Զեմ կրկնիլ Սէյսի ենթադրութիւնը այդ արձանագրութեան հաւանական բովանդակութեան մասին՝ աւելի բարւոք համարելով սպասել համբերութեամբ մի նոր նկարի։ Ատամիանի արձանագրութիւնը (տես № XVI) գտնուեց նոյն 1863 թուին և ներկայումս գտնուում է Թիֆլիզի թանգարանում։ Նրա բաւականին լաւ լուսանկարը զետեղուած է Կովկասեան հնագիտութիւն սիրողների հրատարակութեան մէջ 1875 թուին։ Նա նշանաւոր է նրանով, որ թէև պատկանում է Սարգուրիին, բայց դա վանի արձանագրութիւններից յայտնի Սարգուրիներից և ոչ մինը չէ։ Սէյսը նորա հօր անունը կարդում է Բասիս (ra—pi—is— hi—ni—se= որդի Բասիսի) բայց աւելի ուղիղ է J—pi—tu—hi—ni—se այսինքն Իսիտուի որդի (լուսանկարի վերայ այդ անունը բոլորովին պարզ չէ)։ Արդեօք այդ Սարգուրին Սարգուրի II ին յաջորդող վանի թագաւորներից մինն է եղել (վանի թագաւորների ազգատոհմից վերջինը) կամ ինչպէս Սէյսը կարծում է, տեղական թագաւոր էր, այդ

հարցը դեռ պէտք է մնայ առանց վճռի։ Եթէ դա տեղական իշխան էր, բայց անուանակից Վանի թագաւորների, այն ժամանակ կարելի կլինէր եզրակացնել, որ Սևանայ ծովի մօտերքը բնակւում էին Վանի ժողովրդին ցեղակից ազգերը, որոնք խօսում էին նոյն լեզուով, բայց մենք աւելի տրամադիր ենք կարծելու, որ արձանագրութիւնը Վանի թագաւորներից մինին է պատկանում։ Արձանագրութեան մէջ խօսւում է Սարդուրիի ձեռքով Տուլիունի քաղաքի նուաճման մասին, որը մայրաքաղաք է եղել Ուդուրիեթինի երկրի։ Եթէ քարը ճշմարտապէս պատկանում էր Աստամխանի մօտ գտնուած ժայռին, այն ժամանակ կարելի է ենթադրել, որ այդ գիւղը գտնւում է հին Տուլիունի քաղաքի տեղը։

Օրդաքլուի (տես №VIII) և Զախալուի (տես № XV) արձանագրութիւնները Մեսրովբը գտել է 1883 թուին և հրատարակուած են Արարատ ամսագրում միևնոյն թուին։ Օրդաքլուի արձանագրութիւնը (լճի հիւսիս-արևմտեան կողմում) փորուած է, ինչպէս հաւատացնում է Մեսրովբը, չը տաշած լճափնեայ ժայռի վերայ։ Նա պատկանում է Վանի Արգիշտի թագաւորին, որը այդ արձանագրութեան մէջ խօսում է Քիէխունի և Խոտիկունի քաղաքների նուաճման մասին։ Գուցէ այդ քաղաքներից մինը՝ այն է Քիէխունին գտնւում էր ներկայ Օրդաքլուի տեղը։ Իսկ ինչ էլ վերաբերի Զախալուի արձանագրութեանը, նրա նկարը, որը տպուած է Արարատում, ներկայացնում է բնագիրը այնպէս այլանդակած, որ նշանագրերը Վանի բևեռագիրների նմանութիւնն անգամ չունին։ Կարելի է կարծել, որ այդ արձանագրութիւնն ընդօրինակողը ուղեցել է տալ նշանագրերի ձևին Պարսից Աքեմենեանների արձանագրութեանց նշանների ձևը, երևակայելով, որ նա նոյն կամ նորա ազգակից ծագումն ունի։

Մեսրովբի ձեռագրի մէջ գտնւում է նորա նոր աւելի հիշդ, թէև ոչ բոլորովին բաւարար նկարը, որը այստեղ առաջին անգամն է հրատարակւում։ Արձանագրութիւնը պատկանում է Սարդուրի II-ին Արգիշտիի որդուն, բայց տարաբախտաբար, այն քաղաքի անունը, որի նուաճման մասին որ խօսւում է նրա մէջ, կարելի է կարդալ միայն ենթադրութեամբ։ Անհրաժեշտ է վերց-

նել աւելի լաւ նկար այդ արձանագրութիւնից, որը գտնւում է գիւղի մօտի ժայռի վերայ։

Գտած արձանագրութիւններից կարելի է եզրակացնել, որ Քրիստոսից առաջ IX-դ դարում Գեօկչայեան լճի հարաւ — արևմտեան ափերին խիտ բնակութիւն և ամուր քաղաքներ կային, որոնք ղէպի իրենց էին գրաւում Վանի աշխարհակալներին՝ Արգիշտիին և Սարդուրի երկրորդին։ Գուցէ այստեղ ապրող ժողովուրդը միևնոյն ցեղին էր պատկանում, ինչին որ պատկանում էին Վանի բնակիչները, բայց յամենայն դէպս, եթէ այդ այդպէս չէր, պէտք է ենթադրել, որ այդտեղ եղել են Վանի գաղթականութիւններ և Վանի քաղաքակրթութիւն։ Աւելորդ չէր լինիլ ուշադրութեամբ քննել այդ լճի և միւս ափերը։

Մեսրոպը իւր գտած արձանագրութեանց մեծ մասը յատկացնում է Բլուր կոչուած տեղին, որը գտնւում է Էջմիածնից 25 վերստ դէպի հարաւ-արևմուտք։ Այդ բլուրը, որի վերայ գտանւում են հին շինութեանց մնացորդներ, ինչպէս և Թափադիպի գիւղը, որը գտնւում է բլրի ստորոտում՝ արևելեան կողմը, հայերը վաղուց համարում էին հին առասպելական Արմաւիր մայրաքաղաքի տեղը, որը ըստ Մովսէս Խորենացու, շինել է Հայկի թոռը՝ Արամայիսը Քրիստոսից 2000 տարի առաջ և որը աւերուել է առաջին դարում Քրիստոսից յետոյ։ 1869 թուին Մեսրոպը Թափադիպի գիւղում գտաւ երկու արձանագրութիւն՝ մինը 13 տողից (№ XI) միւսը երեք տողից։ Այդ արձանագրութիւններն հետազօտեց հանգուցեալ պրոֆ. Կոսսովիչը, որը թէև հրատարուեց այդ կարդալուց, բայց գրելու ձևով՝ բնութեամբ՝ ընդունեց Միդիական, այսինքն նոյնատեսակ այն արձանագրութեանց, որպիսիք գտնւում են Դարէհ Վշտասպի Բէհիստունեան II-դ սիւնի և Վանում Քսէրքսէսի արձանի վրայ։ բայց այդ բանն էլ բաւական էր գիտնականների ուշադրութիւնը այդ տեսի վրայ սեւեռելու։ 1880 թուի սկզբին Մոսկուայի Հնագիտական ժողովի նախընթաց մասնաժողովում որը պէտք է հետևեալ 1881 թուին գումարուէր Թիֆլիզում հանգուցեալ Մ. Յ. Էմինի առաջարկութեամբ վը-

ճրռուած էր պեղումներ կատարել ենթադրուած Արմաւիրի տեղը։ Պեղումները կատարուեցան նոյն թուի հոկտեմբեր ամսին կոմս Ա. Ս. ի և կոմսուհի Պ. Ս. Ուվարովի ձեռքով, այդ բանի մասին բաւական մանրամասն հաշիւ զետեղուած էր ժողովի աշխատութիւնների մէջ տեղական քարտէսով։ (Տես երես 439—449 Հետաքրքրութիւն այն տեղի, ուր ենթադրուում էին Արմաւիրի աւերակները)։

Ինչպէս Բլուրը, այնպէս և բոլոր շրջակայ տեղերն ու բլուրները և դէպի արևելք գտնուող գերեզմանները պեղեցին մեծ փութաջանութեամբ և շատ տեղերում ուր պեղումները վինչև մայր հողն էին հասցնում պեղումները տևեցին եօթն օր շարունակ, բայց այնուամենայնիւ բացառական հետևանքի հասցրին։ Ինչպէս շինութիւններն, այնպէս և գերեզմաններից հանած իրերը ըստ կոմսի մանրակրկիտ ուսումնասիրութեան՝ Քրիստոսից յետոյ երրորդ դարու գործ են և այնպիսի մի հին քաղաքի հետ, ինչպիսին է Արմաւիրը, ոչ մի կապ չունին։ Այսպիսով ակներև է, որ թէ պեղումներից առաջ և թէ յետոյ գտած բևեռագիր արձանագրութիւնները ծառայել են որպէս շինութեան նիւթ և բերուած են ուրիշ՝ թէ և գուցէ Բլուրին մօտ տեղից։ Որովհետև վերջը պարզուեց, որ բևեռագիր արձանագրութիւնները ոչ թէ Միդիական, այլ Վանի ծագումն ունին և նրանց լեզուն հայերէնի հետ ոչ մի կապ չունի, հետևապէս նրանք ոչ մի առնչութիւն չեն կարող ունենալ հայկական Արմաւիրի հետ, թէկուզ նա իրօք գոյութիւն ունեցած էլ լինէր1)։ Չնայած այդ բանին, ինչպէս Մեսրոպը արքեպիսկոպոսը, այնպէս և ուսուցչապետ Պատկանեանը գոհ չէին կոմս Ուվարովի պեղումներով և պնդում էին

1) Թէ Հայկական Արմաւիրը առասպելական մութացածին քաղաք չէ և իրօք գոյութիւն է ունեցել, այդ մասին ոչ մի խօսք չէ կարող լինել։ Բոլորովին անկախ մեր պատմիչներից՝ Արմաւիրը ծանօթ է աշխարհահռչակ մեծ աշխարհագիր և աստղաբաշխ Պտղոմէոսին, Բ. դ դարում (Ե. 16)։ Արմաուիարա կամ Արմաուրիա անունով։ Ակներև է որ պ. Նիկոլսկու կասկածը Արմաւիրի գոյութեան մասին անհիմն է և հակառակ դրական փաստերի։ ՄԻԱԲ.

շարունակել՝ այն փաստի զօրութեամբ, որ յետոյ սրբզ. Մեսրոպը միևնոյն տեղում գտաւ դարձեալ ութ (իսկապէս 6) նոր բևեռագիր արձանագրութիւններ։ Այդպէս պնդելը նրանց կողմից կարելի է բացատրել միայն արձանագրութեանց ծագման մասին ունեցած թիւր կարծեաց և հայ գիտնականների շատ բնական յափշտակութեամբ՝ այն մտքով, որ կարողանան գտնել Հայաստանի հին մայրաքաղաքը։ Մենք հիմն ունինք կարծելու, որ Արմաւիրի մասին հայկական զրոյցը հիմնուած է այն աւանդութեանց վերայ, որ արիական հայերը ժառանգել են Անդրկովկասի վրայ Վանի գերիշխանութեան դարերշրջանից։ Բլրից և թափագիպից ոչ շատ հեռու՝ Արաքսի միւս ափին իրաւ գտնուում էր Վանի այդ գաւառի փոխարքաների աթոռանիստը, որի յիշատակը ստեղծել է Քրիստոսից մի քանի հազար տարի առաջ այդ տեղ գոյութիւն ունեցող հայոց մայրաքաղաքի մասին առասպելը։ Թէ այդ ինչ քաղաք է, դորա մասին ստորև կըխօսենք։

Բլուրի մօտ (որ և Արմաւիր) գտնուած բոլոր արձանագրութիւնները տասն են հաշուում, բայց նրանցից երկուսը գտնուած են Արաքսի աջ ափին՝ այն տեղին հանդէպ, ուր գտնուում է Բլուրը, հետևապէս և չպէտք է այդ կարգին վերագրուեն, այդպիսով կլինէր միայն ութ արձանագրութիւն։ Բայց որովհետև Արմաւիրի արձանագրութեանց կարգին դասում ենք և նրանից հինգ վերստ հեռու դէպի հիւսիս՝ Սարդարապատում ամառս գտնուած արձանագրութիւնը, ուստի Արմաւիրի արձանագրութիւնները հաշուում ենք իններ։ Նրանցից երեքը պատկանում են Արգիշտիին, չորսը Սարդուրի II-ին, մինը անանուն է, իսկ մինն էլ ներկայացնում է անլուծանելի մի հատուած։ Այդպիսով ուրեմն՝ արձանագրութեանց մեծ մասը պատկանում է Արգիշտիի որդի Սարդուրի II-ին։ Բացի 1869 թուին գտնուած երկու արձանագրութիւններից, որոնց մասին վերը խօսեցինք՝ (13 տողով Արգիշտիինը և երեք տողով անանունը), 1881-ին գտնուած են դարձեալ Սարդուրիի երեք արձանագրութիւններ (№ VIII) տասն երկու տողից, (№ XIV) ութ տողից. 1883 թուին գտնուեցաւ Սարդուրիի արձանագրութիւնը (№ XII) տասն և երեք տողից, 1885 թուին մի

անանուն արձանագրութիւն (№ XVII) տասն և մէկ տողից և 1886 թուին դարձեալ մի արձանագրութիւն տասն և երեք տողից, որը ներկայացնում է 1869 թուին գտած Արգիշտիի № X արձանագրութեան սկիզբը։ Այս բոլոր արձանագրութիւնները՝ բացի 1883 թուին գտնուածից, որը տասն և երեք տողից է բաղկացած և Սարդարապատինից, բոլորը կտոր կտոր են (Фрагментарны) և լուծելու մեծ դժուարութիւններ են ներկայացնում։ Այստեղ առաջ կբերենք Արմաւիրի կոչուած արձանագրութիւններից ամենաաչքի ընկնող կտորները։ Նրանցից մինում՝ (№ XI), որը գտնուեցաւ 1886 թուին և պատկանում է Արգիշտիին, խօսւում է Ազանի երկրի՝ որպէս իւր որդու իշխանութեան կամ սատրապութեան մասին. միւսի՝ (№ IX) մէջ, որը գտնուեցաւ Սարդարապատում, խօսւում է Արգիշտիի որդու պալատի շինութեան մասին։ Ո՞վ է արդեօք այդ Արգիշտիի որդին, արձանագրութեան մէջ ոչինչ չի ասուած, (նորա անունը երևի բեկուած մասի վրայ էր փորագրուած), բայց հաւանականօրէն նա Սարդուրին էր, որը և յաջորդեց Արգիշտիին։ Նորա փոխարքայութեան յանձնուած Ազանի երկիրը, ակներև է, որ Արգիշտիի նուաճած հիւսիսային գաւառներից մինն էր։ Այսպիսով երևում է, որ Արգիշտին առանձին նշանակութիւն էր տալիս իւր թագաւորութեան այդ մասին՝ այն տեղ իւր որդուն փոխարքայ նշանակելով։ Ստորև մենք կտեսնենք, որ և Արգիշտիի նախորդը՝ Մենուան—Արգիշտիի հայրը՝ Արաքսի ափերին ունէր փոխարքայութիւն, որը նոյնպէս իւր որդիներից մինին էր յանձնել։

Սարդուրի II-ը, յաջորդելով իւր հօրը, առանձին ուշադրութիւն էր դարձնում այդ գաւառի վերայ և այդ տեղ աւելի շատ արձանագրութիւններ է թողել նա, քան իւր նախորդներից որև է մէկը։ Նորա ամբողջ և անվնաս մնացած (№ XII) 13 տողից բաղկացած արձանագրութիւնից մենք տեսնում ենք, որ այն տեղ ուր գտնուում էր արձանագրութիւնը, Սարդուրին պալատ և տաճար կանգնեց, որը և նուիրեց իւր աստուածներին։ Երևի հէնց այդ տեղ էր գտնուում Սարդուրիի և նրա նախորդների մայրաքաղաքը, երբ նրանք այդ երկիրների փոխարքայ էին։

Այսպես պէտք է նկատել և այն, որ Բլուրի (կամ Արմաւիրի) մօտ գտնուած ինն արձանագրութիւններից եօթը գտնուում են Էջմիածնի հոգևոր ճեմարանում, մինը Բլուրի հիւսիսային ստորոտում գտնուող Մոլլաբայազիդ գիւղի եկեղեցու դրանը և մինն էլ այդ եկեղեցու երեցփոխանի մօտ։ Մի թէ չէր կարելի աւելի վայելուչ տեղ զետեղել այդ տիեզերական պատմութեան համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող յիշատակարանները։ Եթէ նրանք գտնուած լինէին Անգլիական հողի վերայ, վաղուց արդէն Բրիտանական թանգարանին որպէս զարդ կծառայէին 1)։

Պատմական աւելի մեծ նշանակութիւն ունին Բլուրին թէ և մօտ և նրա հետ սերտ կապ ունեցող մի ուրիշ կեդրոնում գտնուած արձանագրութիւնները, այն է Բլուրի հանդէպ Արաքսի աջ ափին գտնուածները։ Այսպէս՝ գետին մօտ գտնուում է մի գիւղ՝ Տաշրու�՝ անունով, որը տեղական բնակիչները համարում են Արմաւիրի հիմնադիր Արամայիսի թոռան Յոլակի շինած առասպելական Յոլակերտ քաղաքը 2)։ Այդ գիւղի մօտ գտնուեցան երեք

1)։ Մի քանի անգամ կծու նկատողութեանց տեղիք է տուել սեպաձև արձանագրութեանց անխնամ պահպանութիւնը, և իրաւամբ։ Մի ժամանակ այդ քարերը բաց երկնքի տակ ձգուած էին ճեմարանի գաւթում։ Երկար ըողոքներից յետոյ վերջապէս մի հասարակ հողի և փայտեայ ծածկոյթ շինուեց, բայց այսուամենայնիւ քարերը պաշտպանուած չէին ջարդուելուց, վնասուելուց։ Վերջապէս այժմ այդ բոլոր արձանագրութիւնները զետեղուած են ճեմ։ շինութեան ստորին յարկում մի սենեակի մէջ։ Անհրաժեշտ է այդ սենեակը պահել մաքուր և յատկացնել միմիայն արձանագրութեանց պահպանութեան, իբրև պահարան։ Դժբաղդաբար աւելի վատ է պահուելիս եղել (և հաւանականաբար նոյն վիճակի մէջն է և մինչև այժմ) Թիֆլիսում գտնուած միակ բևեռագիր քարը, որ բերուած է Սարիղամիշից։ Այդ արձանագրութիւնը, ինչպէս հաղորդեց մեզ պ. Նիկոլսկին, վայր է ձգուած Թիֆ. Արքունի Թանգարանի շինութեան դրսում։ Ճիշտ անձրևաջրի խողովակի տակ։ Մինչդեռ Մուսէոնի շքեղ դահլիճներում իբրև շատ թանկագին բան շարուած են կովկասեան ազգերի տիպարների մոմից շինուած խրտուիլակները։ Մեզանում այժմ ոչ թէ 7 այլ տասը արձանագրութիւն կայ։ Մոլլաբայազիդում մնացած վերջին քարն էլ այս օրերս բերել տուի ճեմարան։ ՄԻԱԲԱՆ։

2) Յոլակերտն և Տաշրուռունը նոյնացնելը, հարկաւ, ոչ մի գիտնական

սեպագիր արձանագրութիւններ, որոնցից մինը 24 տողից, (№ I) Ժայռի վրայ փորագրուած, գտաւ ակադեմիկ Կեստները 1864 թուին, իսկ միւս երկուսը—Մեսրովբ սրբազանը 1886 և 1888 թուականներին. (երկուսն էլ 11 տողից): Բոլոր երեք արձանագրութիւններն էլ պատկանում են Մենուային: Առաջինից երևում է, որ արձանագրութիւն գտնուած տեղը կոչւում էր «Երիդուայի որդու երկիր», Երիդուախի, իսկ Մենուայի նուաճած գլխաւոր քաղաքը—Լունունինի:

Հազիւ թէ կարելի լինի կասկածել այն բանում, որ Լունունինի քաղաքը, ինչպէս արձանագրութեան մէջ ասուած է (Մենուայի ալիւնինի) «Մենուայի բնակավայրի» վերակոչուած, Վանի իշխանութեան հիւսիսային այն կեդրոնն էր, որտեղ բնակւում էին վոխաբքաները, որոնք, ինչպէս տեսանք, արքայական տան անդամներ՝ արքայորդիքն էին: Շատ հաւանական է նոյնպէս, որ յետագայում հէնց այդ քաղաքը արիական հայերին ծառայեց որպէս հիմք Արմաւիրի մասին եղած առասպելների. երբ նա կործանուեց, նրա արձանագրութիւնները կարող էին տեղափո-

---

կամ դրական հիմք չունի: Այսպիսի վայրիվերոյ նոյնացումները հին և նոր անուանակոչութեանց ոչ միայն չեն նպաստում գիտական խուզարկութեանց, այլ և մեծամեծ և շատ անգամ ծիծաղաշարժ շփոթութիւններ են առաջ բերում: Այսուամենայնիւ ամեն հաւանականութիւն կայ կարծելու, որ վիպական Ցոլակերտը նոյնն է հինգերորդ դարում յայտնի՝ իսկապէս գոյութիւն ունեցող՝ Զողակերտի հետ: Տարբերութիւնը միմիայն ուղղագրական է: Իսկ հինգերորդ դարի Զողակերտը մեր միջնադարեան բժշկարաններում յիշւում է՝ Զ ո ղ կ ե ր տ, Զ ո ր կ ե ր տ ուղղագրութեամբ: Հայր Ալիշանը Զողկերտի մասին գտած տեղեկութիւններն ի մի ամփոփելով («Այրարատ» եր. 122) այն եզրակացութեանն է գալիս, որ Զողկերտը այժմեան Գարագալէն (Ղարաղալա) է, բայց մենք մի դրական ապացոյց չենք գտնում այդ վարկածը հաստատող: Այս միայն հաւաստի է, որ թէ վիպական Ցոլակերտը և թէ պատմական Զողակերտը կամ Զողկերտը Մասիսի ոտքումն էին, այժմեան Սուրմալի (հին՝ Սուրմարի) գաւառում:

ՄԻԱՐԱՆ:

հուել Արաքսի միս ափը մի նոր քաղաք շինելու բլուրի վերայ։ IV դարում Քրիստոսից առաջ, ինչպէս և ուրիշ տեղեր։ Միս արձանանագրութեան մէջ (տես № II) Մենուան խօսում է Լուխիունի քաղաքում կառուցած պալատի մասին. արդեօք դա առանձին քաղաք էր, թէ Լուխիունի անունը Լունունինիի ուրիշ ձևն է, որոշելը դժուար է։ Տաշքուռուունի երրորդ արձանագրութիւնը, որը այստեղ առաջին անգամն է հրատարակւում (տես № III) հետաքրքրական է նրանով, որ վեցերորդ տողում խօսւում է Մենուայի որդու մասին, որին հայրը յանձնեց իւր վերաշինած տաճարն ու պալատը, բայց դա ոչ թէ յետոյ Մենուային յաջորդող Արգիշտին էր, այլ նորա եղբայրը, որի անունը տարաբաղդաբար չի մնացել։ Այսպիսով երևում է, որ հիւսիսային «Երիդուայի որդու երկիր» (կամ Երիդուախի) կոչուած գաւառի նուաճողը իսկապէս Մենուան էր։ Նա շրջապատեց Լունունինի քաղաքը և տուեց իւր որդուն բնակուելու։ Նորանից յետոյ, ինչպէս արդէն տեսանք, իրեն յաջորդ Արգիշտին էլ յանձնեց այդ երկիրներն ու քաղաքը իւր որդուն, հաւանականաբար Սարդուրի II-ին։

Տաշքուռուունի (Ցոլակերտի) արձանագրութեանց խմբում մենք դասում ենք և նորանից ոչ հեռու դէպի արևմուտք գտնուած երկու արձանագրութիւններ, նրանցից մինը մի տողից, որը գտնուեց պարսից Դազանչի գիւղի մօտ, (տես № IV) որը նոյնպէս Մենուային է պատկանում; միւսը փանիկ գիւղի մօտ՝ երեք տողից բաղկացած մի հատուած, որը դժուար լուծանելի է։

Բայց Վանի գերիշխանութիւնը տարածւում էր աւելի հեռու, քան Սևանայ լիճը և Երևան քաղաքը։ Մենք ունինք Արգիշտիի երեք շատ հետաքրքրական և լաւ պահպանուած արձանագրութիւններ՝ Երևանից դէպի հիւսիս զանազան տեղերում գտնուած։ Նրանցից մինը, որը 1863 թուին գտաւ Մեսրոպը արքեպիսկոպոսը Էլար (Երևանից դէպի Թիֆլիզ առաջին կայարան) գիւղում, պատմում է Արգիշտիի Լուխունի երկրի և Դարան քաղաքի նուաճման մասին։ Որովհետև Արգիշտիի Վանում գտնուած

արձանագրութեանց մէջ յաճախ յիշուում է նորա արշաւանքների մասին Լտիունի երկրում, այդ պատճառով սոյն ժայռի վերայ փորագրուած արձանագրութիւնը կարելի է դարձնում այդ քաղաքի տեղի որոշումը։ Ըստ Մեսրոպի վկայութեան, այդ ժայռի մօտ գտնուում են մի ինչ որ ամրոցի աւերակներ և այդ պատճառով դէպքը բերած միջոցին աւելորդ չէր լինիլ այդ ամրոցի վերայ ուշադրութիւն դարձնել։ Միւս արձանագրութիւնը գտնուում է Արագած լերան մօտ՝ Հայկական Կուլիջան գիւղից ոչ հեռու։ (տես № VII)։ Եւ որովհետև այդ արձանագրութեան մէջ յիշուած քաղաքը, կոչուում է Կուլիտինի, ուստի և հիմք կայ այդ երկու անուանները բաղդատելու կամ նոյնացնելու։ Վերջապէս ամենահիւսիսային արձանագրութիւնը գտնուեց Ադէքսանդրապոլից ութ վերստ հեռու դէպի հիւսիս արևմուտք՝ Ղալինջա կոչուած տեղում (տես № V) Մարմաշէն վանքի աւերակների մօտ։ Արձանագրութիւնը բաղկացած է հինգ տողից և խօսում է Արգիշտիի ձեռքով Երիախի երկրի և Իրդանիունի քաղաքի նուաճման մասին։ Երիախի երկիրը Վանի մեծ արձանագրութիւնից երևում է որպէս մի մասն Լտիունի երկրի, որի մասին մենք վերը խօսեցինք, որից պէտք է եզրակացնել, որ Լտիունի անունը ընդհանուր էր Վանի ամբողջ մի նահանգին, որը համապատասխան էր մեր Անդրկովկասին 1)։

---

1) Էլարի արձանագրութեան 2-դ տողում (Նիկոլսկու հրատ. թ. VI) յիշուում է այս աշխարհը Է-տի-ու-Նի-Նի անուանակոչութեամբ։ Ունի կամ Ունինի վերջաւորութիւնը բոլորովին նոյն է մեր նախարարութեանց և նրանց կալուածական երկիրների ունի վերջաւորութեան հետ։ Արիացի հայերը գալով Հայաստան անշուշտ չէին կարող ոչնչացնել յաղթուած ազգի աշխարհների և քաղաքների բոլոր յատուկ անունները, որոնցից շատերը պէտք է որ պահուած լինէին յաղթող ազգի բերանում և սերնդից սերունդ աւանդուէին։ Ուրարտու (Արարատ), Բիայնա (Վան), Տուշպա կամ Տուսպա (Տոսպ), նոյնպէս և թագաւորների կամ դիւցազունների անունները՝ ինչպէս Արամէ (Արամ) Մենուաշ կամ Մենուաս (Մանաւազ) և այլն. գեղեցիկ և գրական ապացոյցներ են այս բանին։ Ուստի և ակներև է այն մեծ կարևորութիւնը, որ պէտք է տալ մեր պատմութեան մէջ պահպանուած հին, վաւերական (յատուկ) անունների և բևեռագիր արձանագրութեանց մասին։

Ինչ որ վերաբերում է Ասատատունում գտնուած արձանագրութեանց պատմական և լեզուաբանական ուսումնասիրութեանը, պէտք է ասել որ նոյա Վանի միջնաբերդի արձանագրութեանց հետ ունեցած անխզելի կապի շնորհիւ՝ այս ուսումնասիրութիւնը հնարաւոր է միայն այդ արձանագրութեանց շարքում և նրանց հետ միասին։ Ընդհանուր հարցեր պարզելու համար մենք առաջ ենք բերում պրոֆ. Սէյսի վերոյիշեալ աշխատութիւնները, որը փորձ փորձեց մեզ մօտ գտնուած արձանագրութիւններից մեծ մասը լուծելու, օգտուելով նաև Դիյարի և Միլլերի գործերով։ Սակայն այդ արձանագրութիւնների՝ ըստ նոյա տեղի ամրոցութիւններ կազմելով և նրանց բովանդակութիւնն ու լուծումը նորից աչքի անցկացնելով, մենք՝ այսպէս ասած՝ միայն մի որևէ երկրին պատկանելու (территоріальною) կամ ազգային տեսակէտով չենք առաջնորդուում։ Այս արձանագրութիւնները աստրեստանական ժամանակակից տարեգրութեանց հետ անձամբ ուսումնասիրելս համոզեց ինձ, որ Արաքսի հովիտը, որտեղ գլխաւորապէս գտնուած

ձանագրութեանց մէջ յիշուածների միմեանց հետ բաղդատութեանը։ Այս բաղդատութիւնից կարող ենք մենք մեծ լոյս սպասել սեպական յուշարձանների շատ մութ կէտերը ըստ կարելոյն պարզաբանելու համար։ Միայն թէ այս բաղդատութիւնները պէտք է լինին մեծ զգուշութեամբ և՝ եթէ հնարաւոր է՝ պատմական ապացոյցներով։ Ունենալով շղթայի երկու ծայրերը, չպէտք է անուշադիր թողնել միջի միաւորող օղակները, որոնք ձգուելով դարերի երկայնութեամբ կապում են հեռաւոր անցեալը (մօտ 2500 տարուայ՝) ներկայիս հետ։ Այսպիսի պատմական ապացոյց մենք չենք գտնում, օրինակ, հին Կուլիաինի և այժմեան Կուլիջան անունների մէջ։ Մենք չգիտենք թէ մի կամ մի քանի դար մեզնից առաջ կար արդեօք այդ Կուլիջան անունը, որը կարող է բոլորովին պատահական նմանութիւն ունենալ հին Կուլիաինի անուան հետ։ Մեզ աւելի հիմնաւոր է թւում մեր պատմական հին անունները համեմատել բևեռագրերում յիշուածների հետ։ Այսպիսի մի բաղդատութիւն աւելորդ չենք համարում անել Ուրարտական արձանագրութեանց Էտի-ունի անուան և մեր հնագարեան աշխարհներից մէկի—Ուտի-անուանակոչութեան միջև։ Մեր հին Ուտին՝ ծանօթ Ե-դ դարի գրողներին և սրանցից էլ առաջ Յոյներին՝ ունէր իւր սեպական ժողովուրդն ու լեզուն—Ուտէացիք—և

են մեք արձանագրութիւնները, Վանի թագաւորութեան՝ կամ գործածելով ասորեստանական աւելի համապատասխան անունը՝ Ուրարտուի թագաւորութեան՝ գլխաւոր կեդրոնն և նրա սկզբնաւորութեան տեղն էր։ Այս հարցը աւելի պարզելու, նոյնպէս և Ուրարտուի թագաւորութեան պատմական նշանակութիւնը որոշելու համար, մինք արձանագրութեանց բովանդակութիւնից առաջ դիտեցումենք մեր հիւսուածքը՝ այդ թագաւորութեան Ասորեստանի հետ ունեցած քաղաքական և քաղաքակրթական յարաբերութեանց մասին, ասորեստանական և Վանի վաւերագրերից քաղուած։

Թարգ. Ռուսեր. ԵՂԻՇԷ ԱՐԵՂԱՑ ՄՈՒՐԱԴԵԱՆ.

(Կը շարունակուի.)

գրեթէ անմիջապէս կից էր Սևան լճին հիւսիսից, տարածուելով մինչև Կուր գետը։ Այժմեան Ուտէացիների բնակավայրը աւելի ևս հիւսիսումն է, Կովկասեան լեռների ոտքում Նուխուայ մօտ (Նիժ, Վարդաշէն)։ Ահա՛ երև է որ դարերի ընթացքում այս ժողովուրդը ստիպուած է եղել հետզհետէ դէպի հիւսիս քաշուել։ ուստի և անհաւանական չէ որ նախահայերի ժամանակ այդ ազգն ապրելիս լինէր աւելի ևս հարաւում։ այժմեան Էլարի շուրջը։ Էլարը նախկին Ուտի նահանգից հազիւ մի քանի տասնեակ քիլոմետր հեռու է։ Եթէ ստուգուի Ուտի և Էտի-ունի անունների նոյնութիւնը, այն ժամանակ պէտք է ենթադրել, որ Ուտէացիք Սևանի հարաւային ափերից տեղափոխուել են նոյն այդ լճի հիւսիսային զառիվայրերը։ պատմութեան ընթացքում հետզհետէ քաշուելով դէպի Կովկասեան մեծ շղթան, կամ թէ ոչնչանալով հարաւային նահանգներում։ Այս համեմատութիւնը կարևոր է կացուցանում նոր ուշադրութիւն դարձնել Ուտէացիների մնացորդների բարբառի վրայ և որոնել թէ արդեօք ունի՞ որ և է կապ այդ բարբառը Ուրարտեան արձանագրութեանց լեզուին հետ։

ՄԻԱՐ.

«ՆՍՏՈՅ»

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՑԱՊԵՏ ՆԻԿ. ՄԱՌ'Ի ՄԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ [1]։

ՀԻՆԳ ՆՈՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

*Եռանդուն և երիտասարդ ուսուցչապետը տարի չէ անցնում, որ մեզ մի նոր աշխատութիւն չտայ, իւր անխոնջ գործնէութեամբ լինելով ճիշտ հակապատկեր այն բազմաթիւ «Փիլոլոգ» հայ մասնագէտներին, որոնք կարծես երդուել են ոչինչ չանել։ Պ. Մառը իւր այս նոր փոքրիկ հրատարակութեամբ մեզ տալիս է 24 կոտոր մեծ ու փոքր արձանագրութիւն, Թ-ից մինչև ԺԹ-դ դարի, հաւաքած Անիում և նրա շրջակայքում։ Արձանագրութեանց մի քանիսը շատ հետաքրքրական են և լուսաբանում են մի քանի մութ կէտեր, բայց աւելի հետաքրքրական են պ. Մառի տուած մի քանի նոր բայաստրութիւնները այնպիսի անհասկանալի մնացած բառերի, որոնք հանդիպում են արձանագրութեանց մէջ, և որոնց լուսաբանութեամբ մենք աւելի մօտ ենք ծանօթանում և աւելի ուղիղ ըմբռնում մեր հայրենիքի անցեալ դարերում ունեցած քաղաքակրթութեան չափն ու աստիճանը և տնտեսական վիճակը։ Մասնաւորապէս ուշադրութեան արժանի են խասինջու (№ 5), եւան, *եւանութիւն, ձեռնաւոր և ձեռնաւորութիւն (№ 9) բառերի բա-*

---

1) Н. Марръ; Новые Матеріалы по Армянской Эпиграфикѣ. (Անի—Աղամն.—Մրեն.—Բագարան.—Երուանդակերտ.— Վ. Թալին). Спб. 1893. Արտատպութիւն Записки Восточн. отдѣл. Имп. русск. Археол. общ. պարբեր. հրատարակութեան VIII. հատորից, եր. 69—103.

ցաարութիւնները կամ բացատրութեան փորձերը։ Սակայն մեր դիտողութիւնը վերաբերում է պ. Մառի ոչ ամբողջ հրատարակութեանը, այլ մի արձանագրութեան միայն (№ 7) և այն էլ՝ այդ արձանագրութեան մէջ եղած՝ միայն մի բառի։ Ահա այդ քառատող արձանագրութիւնը.

1. Թվ։ ԶԺ. ի տիեզերակալութի Հուլաւու զա-
նի ես Սահմադին որդի [Ալեռեաց գ]նեցի
զթագաւորանիս [ա] տեղի [ս] զՄրեն ի յԱր-
տաշրէ որդո Շահնշահի [ի] հալալ ընչ[ից
իմ] ոց ի վայելումն ինձ և որդ-
2. ոց իմոց. Ստուած շնահաւոր ար[ա]սցէ յա-
ւիտեանս ժամանակաց։ [ի թվ] ՁԻՆ յաշ-
խարհակալութեան Պաղա զանին ես Սամ-
տին, որ պարոնին ամարանոց ու
դարապաս չկայր, զաս այգիս և զդրա-
3. խաս, որ կոչի Ընքայութիւն, գնեցի՝ զամէն
մէկ յիւր տիրոչէն. և յիմ մոաց դուս՝ ա-
ռանց (°) վարդպետի ձևեցի ու հիմն ձգեցի
դարապասիս ու դրախ[ա]իս. ի Ժ տարին կա-
տարեցի. Ստուած
4. Շնահաւոր արասցէ պարոն Սահմադինին որ-
դից ի յորդիք. ու խարճ, որ եղաւ դարապա-
սիս։ Խ։ Ո։ դուկատ դահեկան։

Այս չորս երկար տողերով արձանագրութիւնը, գրուած խոշոր գլխատառերով, գտնուում է Մրենում մի բոլորովին աւեր պալատի՝ դէպի Արագածի գագաթը նայող մեծ դրան վրայ։ (Մառի հրատարակութեան մէջ կայ դրան լուսատիպը (սխտ. № 6). առանց արձանագրութեան)[1]։ Մեր դիտողութեան առար-

---

1) Արձանագրութեան վերծանութեան մանրամասնութեանց համար տես Մառի հրատարակութիւնը։

կան է այս արձանագրութեան 2-դ հատուածի գծուած տողը· «որ պարոնին ամարանոց ու դարապաս չկայր»։ Պ· ուսուցչապետն ասում է որ ամարանոց բառի տեղ ընագրում է ԱՏՈՅՈՒ կամ ԱՄՈՅՈՒ, որն և բաժանելով՝ կարդում է «ԱՄՈՅ (= Ամարանոց) ու դարապաս»։ Մենք ուղղագոյն ենք համարում ԱՏՈՅՈՒ ընթերցուածը, որի վերջին վանկը նոյնպէս բաժանելով ստանում ենք Ատոց։ «ԱՏՈՅ»-ը վոխանակ ԱՄԱՐԱՆՈՅ կարդալու, մենք կարդում ենք՝ ՍՏՈՅ։ Ա յրի և ոէի համանմանութիւնը երկաթագրի մէջ ակներև է։ Այսպիսով ստանում ենք հետևեալ ընթերցուածը· «որ պարոնի Ն+ՍՏՈՅ ու դարապաս չկայր»։ ՆՍՏՈՅ բառը իբրև աթոռանիստ տեղի (այս վերջին ասացուածը աւելս արձանագրութեան առաջին հատուածում) գործածուած է նոյն իսկ այդ ԺԴ-դ դարի երկրորդ կիսում, երբ գրուել է Սահմագին Պարոնի արձանագրութիւնը։ Ահա օրինակներ Մաղաքիա աբեղայից· «Եւ զՍիս քաղաքն այրեցին, որ էր Ն՚՚՚՚՚ թագաւորին Հայոց» (եր· 40· Սպբ· 1870)։ Մի աւելի լաւ օրինակ, որի մէջ հանդիպում ենք և դարպաս բառին· դարպասի շինողն է նոյն իսկ Հուլաւուն, որ յիշւում է Սահմագինի արձանագրութեան մէջ· «Իբրև գիտաց Հուլաւուն զանն թէ ետ նմա Աստուած զանութիւն և մեծութիւն և բազմութիւն զօրաց և հեծելոց և զամենայն ընչից, յայնժամ հրամայեաց դարպաս շինել իւր մեծա(ւ) ծախօք ի Դառն (տպ· դառն) դաշտին, զոր կոչեցին իւր ինքեան զանուն տեղւոյն Ալատաղ, որ էր զառաջն տեղին այն նստոց ամարան մեծ թագաւորացն Հայոց, այսինքն Արշակունեացն» (եր· 32)։

Եւ որովհետև խօսքը նոր գտնուած արձանագրութեանց վրայ է, ի դէպ եմ համարում դնել այստեղ պատահմամբ իմ ձեռքս անցած մի քանի նոր արձանագրութիւններ, որոնցից մասնաւորապէս մէկը՝ Զաքարէ Սպասալարինի, շատ կարևոր է։ Այս արձանագրութիւններից և ոչ մէկը մտած է Հայր Ալիշանի «Այրարատի» մէջ, և՝ իմ գիտութեամբ՝ ուրիշ տեղ էլ հրատարակուած չկան։

Թ. 1.

Ինակլու գիւղում Բիւրականից շատ մօտ, մի երկու վերստ վեր դէպի Արագածի գագաթը՝ բնակւում են այժմ 18 տուն աղքատ գաղթականներ, եկած Վանի կողմերից։ Դրանք առաջ բնակուելիս են եղել հէնց նոյն իսկ Բիւրականում, բայց չեն հնարաւորուել Բիւրականցիների հետ, (որոնք Խոյից են եկած) և սրանից 28 տարի առաջ թողնելով բուն այժմեան Բիւրական գիւղը, նոր տներ են շինել նոյն իսկ այդ գիւղի հողի վրայ վոքր ինչ աւելի հիւսիսում, որն և կոչւում է Ինակլու։ Այս թուրքերէն անունը, որը կարելի էր թարգմանել «Եղնատուն» 1, չգիտեմ սկզբից կայ եղել, թէ այս նոր գաղթականներն են դրել։ Ինակլուեցիք այժմ ունին՝ հասարակ ցեխի շախախից շինած՝ մի եկեղեցի Ս. Աստուածածին անունով։ Եկեղեցու դրան աջ պատի վրայ գտնւում է մի նշանաւոր խաչքար արձանագրութեամբ, որ գտնուել է նոյն իսկ եկեղեցու գաւթում։ Այս արձանագրութեան մասին առաջին անգամ ինձ տեղեկութիւն տուեց Երևանցի կալուածատէր Պ. Վասիլ Եղիազարեանցը։ Արձանագրութիւնն ինձ համար ընդօրինակեց եղբայրս՝ Տէր Միսիթար աբեղան։ Այս հրատարակութեան համար օգտուեցայ և մի երկրորդ ընդօրինակութիւնից, որ նկարել էր մեր միաբանակից եղբայրներից՝ Տիգրան սարկաւագը։ Յաւում ենք որ մեզ անհնար է տալ արձանագրութեան ճիշտ նմանահանութիւնը կամ լուսատիպը։ Բարձր խաչքարի վրայ (որի չափերը մեզ անյայտ են), նոյն իսկ խաչի տակ զետեղուած են խոշոր տառերով արձանագրութեան հինգ տողը, վեցերորդ տողը խաչի երկարութեամբն է ներքևից վերև, արձանի ձախ եզերքում, եօթներորդ տողը՝ խաչի գլխին, ութերորդը՝ աջ եզերքին՝ վերից վար։ Ահա բնագիրը, ինչպէս կարողացանք վերծանել մեր ձեռքումն եղած երկու ընդօրինակութիւնից.

---

1) «Եզատունք կամ Եղնատուն» գիւղ կայ Սիւնիքում. տե՛ս Աղիշանի «Սիսական», եր. 480, 486.

1 + Ի ՈՒԹ ԹՈՒԱԿԱՆ
2 ՈՒԹԻՆՍ ԵՍ ՁԱՌԱՐ-
3 Ե ԱՄԻՐ ՍՊԱՍԱԼԱՐ ՀԱ
4 ՅՈՅ ԵՒ ՎՐԱՅ ՈՐԴԻ Մ-
5 ԵԾԻ ՍԱՐԳՍԻ ԱՌԻ ՁԱՆԱ-
6 ՌԻԿ ԱՄՐՈՅՍ ՁԱՆԲԵՐԴՈՅ ՅԱՂԱԽՆԱՅԾԻՆ ՈՐԴՈՅՆ ՀԱՌԱՐՈՒ ՈՐՔ...
7 ..... ԱՅ Ի ՍՄԱ
8 Ի ԿՈՐՈՒՍՏ ՔՐԻՍՏՈՆԵԻՅ ԵՒ ՅԱՒԵՐ ԵԿԵՂԵՑԵՅ ԵՒ ԵՏՈՒ ԱՌՆԵԼ
ՁՆՇ - (ԱՆՍ)։

Նշանաւոր արձանագրութեանս թուականն է Հայոց ՈՒԹ (= 649)*, ուրեմն Փրկական* 1200*, ճիշտ երեքտասաներորդ դարի սկիզբը կամ ճշտագոյն ևս՝ երկոտասաներորդի վերջին տարին։* 1 *և* 2 *տողի թուականութեանս (թուականութինս) բառը Տիգրան սարկաւագի օրինակում գրուած է երկու կ*ենով*, մինչ դեռ Տէր Մխիթարը տեսել է մի կ*են։ 8*-դ տողում եկեղեցեաց բառը Տ. Մխիթարը ընդօրինակել է «եկեղեցց», իսկ սարկաւագը՝ «եկեղեց»։* 6*-դ տողի վերջին բառում (որք) Տ. Մխիթարը չէ տեսել ք*էն*, իսկ սարկաւագի օրինակում կայ մի տառի որոշ հետք, որը կարելի է ք*է* կարդալ։ Խաչքարի հիւսիս-արևմտեան անկիւնը աղարտուած լինելով՝ պակաս են մընում վեցերորդ տողը (վերջից) և եօթներորդը (սկզբից)։ Այդ պակասի միտքը կարելի է մօտաւորապէս գուշակել, լրացնելով ենթադրութեամբ այսպէս. «որք [բռնացեալ էին յամաց բազմ]աց ի սմա, ի կորուստ քրիստոնէից» և ն։ 7-դ տողը կարելի է կարդալ և այսպէս «... ԱՅԻ ՍՄԱ»։ Արձանագրութեան մէջ պարզ փակագրեր (երկու տառի միաւորութիւն) բաւական յաճախ են (Զաքարէ, ամիր, սպգսի, ամրոցս, ոչդոցն, Հաքարու, ոչք, կորուստ) և միատեսակ՝ ոչ, ամ և ոչ։ Զաքարէ և Քրիստոնէից բառերում պահուած է հին ուղղագրութիւնը (է՝ փոխանակ է*՝ որից և կարելի է եզրակացնել որ է*՝ ուղղագրութիւնը՝ անպայման հնութեան ապացոյց չէ, քանի որ այդ գործ էր ածւում և 13-դ դարում։*

Զաքարէ Սպասալարի անձամբ կանգնեցրած արձանագրութիւններից, որոնք յայտնուել են մինչև այժմ Այրարատեան նահանգում և Սիւնիքում և ունին թուական, ամենահինն է այս մեր հրատարակածը։ (Շիրակում հրատարակուածների թուականներն են ՈԾ (եր. 161), ՈԾԵ (եր. 22), ՈԾԷ (եր. 43), ՈԿ (եր. 127) և ՈԿԱ (եր. 41). իսկ «Սիսականում՝» ՈԿ (եր. 186)։ Մենք չենք հաշուում ուրիշների արձանագրութեանց մէջ Զաքարէի անուան յիշատակութիւնը, որ շատ յաճախ է։

Զաքարէն տիրեց Անիին 1199 թուին, իսկ Արագածի հարաւային կողերին՝ առնելով «անառիկ Անբերդը»՝ մի տարի յետոյ՝ 1200-ին։ Թերևս երկու յաղթութեանց միջև եղած ժամանակամիջոցը ոչ թէ մի ամբողջ տարի, այլ մի քանի ամիս էր, կամ՝ աւելի էլ քիչ։ Յաղթական խրոխտ խաչարձանս հաւանականաբար կանգնեցրած էր նոյն իսկ յաղթութեան տեղում, Բիւրականի և Անբերդի միջև, այն է՝ այժմեան Ինակլու՝ի եկեղեցու գաւթում։ Զաքարէի մահը —1212 թուին է, թէև Ալիշան մէ՛ ուրիշ տեղում[1]) գնում է 1214 («Շիրակ» եր. 175)։

***

Թ. 2.

Հայր Մխիթարը ընդօրինակել է Ինակլու — Բիւրականում և հետևեալ անթուական արձանագրութիւնները։

Ինակլու՝ում կայ մի ուխտատեղի—աղբիւր, որ կրում է «կաթնաղբիւր» անունը։ Այս ջրին ուխտ են գալիս այն մանկամարդ կանայք, որոնց կաթը կտրուած է։ Կաթնաղբիւրի մօտ մի գերեզմանի վրայ կարդացւում է.

ԱՅՍ ԴԻՐ ՇԱՏԻՆ Ե ԵՂԲԱՒՐ ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՈՒԽՏԻՍ.

Թ. 3.

«Կաթնաղբիւրից» փոքր ինչ հեռու գտնուում է մի հատարակ

---

1) Այս երկու տարբերութիւնը եթէ տպագրական վրիպակ չէ, հաւանականաբար ծագում է հայ տօմարական թուականի տարբեր հաշուից՝ (551 և 553)։

մարագ, նոյնպէս յանախուած ուխտատեղի «Կիրակնամուտ» անունով։ Այդ տեղում գտնուած միակ խաչարձանի վրայ կարդացուում է.

ԵՍ ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԴԱՆՋՆՈՐԴ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ ԿՆԴՆԵՑԻ ՁԽԱՉՍ . . .

Այն խաչի պատուանդանի վրայ ԲԱՐԵԽԱՒՍ ԻՆՁ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻ ՄԻԱԲԱՆԱՒԻՔՍ.

Թ. 4.

Եկեղեցու գաւթում մի փոքրիկ կոտրած քարի կտորի վրայ կարդացուում են հետևեալ բառերը.

ՄԱՄԱ [ԹԱԹՈՒՆ] . . . .
ՍՊԱՍԱՒԱՐ . . .
ՈՎ. . . . .

2-դ և 3-դ արձանագրութիւնները ժամանակակից են՝ գրուած լինելով Հայրապետ վարդապետի վանահայրութեան օրով։ Հայրապետի եղբօր անունը՝ «Շատ» փոքր ինչ անսովոր է, թէև կայ «Շատենց այգի», «Շատի» վանք ևլն, (տես «Սիսական»)։ Այդ անուան սկզբնաձևը կարող է լինել և Շատին (Շատինեան յայտնի ազգանուն), որով արձանագրութիւնը կարելի էր կարդալ. «Այս դիր Շատին(ին) է» ևլն։ Բայց մեզ ամենահաւանական է թւում որ այդ արտասովոր անունը պէտք է կարդալ «Շահ», իբրև յատուկ անուն։ Մեր ունեցած ընդօրինակութեան վրայ հիմնուելով դժուար է մի որոշ եզրակացութեան գալ, պէտք է տեսնել բուն արձանագրութիւնը։ 2-դ արձանագրութեան մէջ կից (փակագիր) են գրուած Ա և Ո վանկերը, 3-դի մէջ փակագիր է սուրբ բառը (ՍԲ), ՈՒԽ վանկը (ուխտիս). ն ե վանկը և հաւանականաբար՝ ՁԽԱ(չս) վանկը։ Այս վերջին բառը ընդօրինակողը կարդացել է ՁԱՁԱ, իսկ մենք մտքին և ձևերի նմանութեան վրայ հիմնուելով վերծանեցինք՝ ՁԽԱՉՍ. որովհետև նոյն իսկ ընդօրինակուածի մէջ պարզ երևում է երկաթագիր Ձայի և Ա[թ]ի մէջ միացնող փոքրիկ գծիկը, որով այդ գրերի միաւորութիւնից ստացուում է ՁԽԱ փակագրուած վանկը։ Ձ[ա] գիրը շատ պարզ է, իսկ վերջին գիրը եթէ իսկապէս չէ Ս է այլ Ա[թ] և կէտերն էլ ցոյց տալով մի քանի ջնջուած գիր, այն ժամա-

նակ պէտք է կարդալ՝ ՁԽԱՁԱ(ՐՁԱՆՍ)։ Պատուանդանի վրայի գրութիւնը շարունակութիւն է վերևի գրութեանը։ Փակագրուած են «բարեխօս» բառի մէջ ԱՐ և ԽԱԻ կամ ԽԱԻՍ վանկերը, «միաբանօքս» բառի մէջ՝ ՄԻ, ԱԲ և ԱԻ վանկերը։ Ամենից դժուարն են վերծանութեան համար «ԻՆՁ ԵՒ» բառերը, որանց առաջին գիրը լինելով Ս^{ԷՒ} և Ի^{ՆԻ} միաւորութիւն (բարեխաւ ՍԻՆՁ և)՝ ընդօրինակողը կարդացել է «մինչև», անշուշտ խաբուելով ձևերի արտաքին նմանութիւնից։

Այս կրկին արձանագրութիւնները ցոյց են տալիս որ Բիւրականից փոքր ինչ վերև (երկու—երեք վերստ) կար մի ՎԱՆՔ (ուխտ), միաբաններով և առաջնորդով (=խանահայր)։ Հայր Ալիշանի ի մի ամփոփած տեղեկութիւններից մենք իմանում ենք («Այրարատ» եր. 157), որ Բիւրականում առաջին անգամ վանք հաստատեց Յովհաննէս պատմաբան կաթուղիկոսը, որի կալուածքն էր Բիւրականը, ԺԴ դարի սկզբին։

ԺԵ-Դ դարում (1467) յիշւում է ՄԵՆԱՐԱՆ ԲԻՒՐԱԿԱՆԻ Ս. Աստուածածին և Ս Յովհան եկեղեցիներով («Այրարատ» եր. 158)։ Ինչպէս տեսանք այժմեան Լնակլուի եկեղեցին էլ կրում է Ս. Աստուածածին անունը։ Բիւրականում մնացած մի քանի տուն բնիկները աւանդած են երևում Խոյից և Վանից եկած գաղթականներին իրենց սրբավայրերի անունները։ Հայր Ալիշանը մէջ է բերում Բիւրականի մենարանում գրուած Յիսուս-Որդու յիշատակարանը (տես նմանատիպը «Այրարատում», եր. 148, որը գրուած է Հայոց ՉԺԸ թուին, իսկ բուն գիրքը («Յիսուս-Որդի»)՝ ՊՀԷ թուին։ Այդ յիշատակարանի մի հատուածը, կարծում ենք որ բացատրում է այժմեան ուխտատեղու «Կիրակնամուտ» անունը։ «Աստուած դինքն (ՁՍարգիս վարդապետ) օրհնի, որ Սուրբ Աստուածածնի դուռն ի բաց պահի. շաբաթու կիրակի պաշ(տ)աւն ու պատարագ լինի, որ իսկի չխափանի» ասուած է այդ յիշատակարանում, որից կարելի է եզրակացնել, որ ԺԵ-Դ դարում Բիւրականի մենաստանում այլ ևս կանոնաւոր միաբանութիւն չկար, այլ հազիւ միայն շաբաթ (կիրակնամուտ երեկոյին) և կիրակի պաշտօն էր կատարւում եկե-

ղեցում՝ որից և ստացաւ հաւանականաբար այդ ուխտատեղին «Կիրակնամուտ» կոչումը։ Ցամենայն դէպս թ. 2 և 3 արձանագրութիւնները անշուշտ աւելի հին են քան ԺԵ դարը՝ երբ այլ ևս միաբանութիւն չկար՝ և թերևս նոյնչափ հին որչափ Զաքարէի արձանագրութիւնը կամ աւելի ևս։ 2-դ արձանագրութեան մէջ ե՛ (Այս դիր Շահին ե) փոխանակ է՝ արդէն հնութեան ապացոյց է՝ բայց ոչ այնպիսի մեծ հնութեան (ե—է դար) ինչպէս կարծւումէր մինչև այժմ։ Արդէն վերևում այս մեր կարծեաց տեսանք ուրիշ ապացոյցներ։ Թիւ 4-դ արձանագրութեան առաջին բառը (Մամա) մենք լրացնելով կարդումենք Մամախաթուն՝ որով որոշւումէ գրութեան ժամանակը (ԺԳ-դ դար)՝ երբ ապրումէր արդէն ուրիշ արձանագրութիւններից յայտնի այս կողմերի իշխան Վաչէի կին Մամախաթունը՝ որի արձանագրութիւնը Բիւրականից ոչ հեռու՝ Տղերում՝ հասել է մեզ (գրուած Հայոց ՈՁԱ = 1232 Փրկ.)[1]։

թ. 5.

Այս վերջին արձանագրութիւնը Ապարանի (Նիգ գաւառ) Ղարաքլիսա գիւղից է։ Մոսկուայի Կայսերական Հնագիտ. Ընկ. խսկական անդամ և քարտուղար Պ. Նիկոլսկու հետ գնացած լինելով Ղարաքլիսա բևեռագիր արձանագրութիւններ որոնելու— որովհետև ինձ հաղորդել էին որ այդ գիւղում կայ մի պղնձեայ «ճրագ» և մի գերեզմանաքար բևեռագիր արձանագրութեամբ— հանդիպեցայ այս հայերէն տապանագրին։ «Ճրագն» էլ թէև հետաքրքրական հնութիւն՝ բայց ոչ բևեռագիր արձանագրութեամբ՝ այլ պարսկական ճաշակի զարդերով՝ հաւանականաբար Սասանեան ժամանակի գործ։ Ինչպէս յայտնի է Ղարաքլիսա անունը (հինը մեզ յայտնի չէ) ծագել է սև քարերով շինուած մի փոքր եկեղեցու կամ մատուռի կիսակործան աւերակից՝ որը մինչև այժմս էլ դեռ կանգուն է՝ գիւղի ոտանուտէրի մեծ բակի հարաւային ծայրում՝ գեղեցիկ դիրքով դարևանդի վրայ՝ որտե-

1) «Այրար.» 147. տես և եր. 253 Վաչուտեան իշխանների ցեղագրութիւնը։

ղից հիանալի է տեսարանը դէպի ամեն կողմ և մասնաւորապէս դէպի Արագածի գագաթն ու ՀՐՎԷԺ։ Գիւղացիների ասելով այս եկեղեցու գաւթիցն է տարուած մեզ հետաքրքրող տապանաքարը գիւղի այժմեան հասարակաց գերեզմանատունը։ Իմ ուղեկիցս յանկարծակի հիւանդանալով, ինձ էլ անհնարին լինելով անձամբ գնալ գերեզմանները տեսնելու՝ այս արձանագրութիւնն էլ տալիս եմ ուրիշի ձեռքով եղած ընդօրինակութիւնից [1]։

Գերեզմանաքարը օրօրոցաձև է, մօտաւորապէս երկու արշին երկարութեամբ և մի արշին բարձրութեամբ։ Կողերի տափարակ մակերևոյթը բաժանուած է երկու հաւասար քառակուսիների, որոնց մէկի մէջն է միայն զետեղուած քառատող արձանագրութիւնս.

ԱՅՍ Ե ՀԱՆԳԻՍՏ Դ ԱԻԹԻ ԳՆԹՈՒՆԵ ԱՅ ՏՆ ՈՐԴՈ Վ.ԱՍ ԱԿԱ Ի ◆ԱԲԷՂԱ◆	(Այս է հանգիստ Դաւթի Գընթունեայ Տեառն Որդո(յ) Վ.ասակա(յ) ի Աբէղա)։

«Վ.ասակա» բառի վերջին այբը ընդօրինակութեան մէջ Ա՝ է։ «Աբէղա» բառի Ղ ատը աւելի նման է Շ այի. իսկ «Գնթունեայ» բառի առաջին Ն՝ աւելի նման է Ը՝ի, որով և կարելի էր Գըթունեայ կարդալ։ «Աբէղ»-ը հաւանականաբար տեղի անուն է։ Արգեօք Աբեղէնք գաւառի անունն է, փոքր ինչ կըրճատ ձևով։ Այսպէս կամ այնպէս՝ մեզ թւում է թէ այս արձանագրութիւնը վերևում առաջ բերուածներից նոր չէ կարող լինել, այլ հաւանականաբար շատ աւելի հին։ Գնթունեայ նախարարութեան մասին իմ ունեցած չափազանց սահմանափակ տեղեկութիւնները ինձ թոյլ չեն տալիս գտնել մօտաւորապէս այս արձանագրութեան ժամանակը որոշելու։

*
* *

Այս՝ այսպէս ասած՝ պատահական կերպով հաւաքած արձանագրութիւնները ցոյց են տալիս թէ որչա՞փ նոր բան կարելի

---

1) Ընդօրինակեցին նկարելով իրենց կարողացածի չափ բայց մեծ խնամքով գիւղի դրագիր պ. Վաղարշակը և իմ սպասաւոր պ. Պողոսը։

է գտնել Արագածի լայնանիստ կողերի ահագին աշխարհում։ Եթէ միայն խուզարկութիւնները կատարուին սիստեմով և բանիմաց մարդկանց ձեռքով։ Բիւրականում տէր Միսիթար աբեղան տեսել է մի այգու մէջ մի մեծ գերեզմանոց, մամռապատ տապանաքարերով, որոնց մի երկուսի վրայ կարծում է կարդացած լինել ՈԼԸ թուականը, բայց ժամանակ չէ ունեցել հիմնաւոր խուզարկելու։ Անցեալ մայիս ամսին Թիֆլիզում եղած ժամանակս յայտնի գիտնական գիւղատնտես պ. Աղէքսանդր Բալանթարեանը ինձ հաղորդեց իւր ունեցած տեղեկութիւնը, որ Արագածի գագաթին (կամ գագաթին շատ մօտ) տարօրինակ արձանագրութիւններ տեսնողներ են եղել։ Այդ գրութիւնները յիշեցնելիս են եղել զանազան կենդանիների պատկերներ։ Այդ տեղեկութիւնը ինձ շատ հետաքրքրեց, յուսալով թերևս գտնել հիտիտեան արձանագրութիւններ կամ պատկերագիր մեր երկրում, որը կարող էր շատ բան պարզել նախահայերի վերաբերութեամբ։ Այս մասին իմ խուզարկութիւններս բոլորովին ապարդիւն չանցան։ Լինելով Աշտարակ՝ գտայ մի կը, որը հաստատացնում է, որ անձամբ տեսել է այդ արձանագրութիւնները։ Եւ այնչափ բարի եղաւ այդ պարոնը (Սմբատ Սիսակեանց), որ ուղարկեց մեզ իւր յուշատետրից մի երես ընդօրինակութիւն այդ արձանագրութեան պատկերների։ Այդ պատկերները կամ պատկերագրերը յիշեցնում են զանազան կենդանիների թեթև և կոպիտ ուրուագիծ, (ձուկ, մողէս, թռչնի գլուխ, օձ, մի չորքոտանի։ Նկարներից մի քանիսը ակներև նման են Արարատում (1886 թ. Թ.Ա.) տպուածին, գտնուած Մատտարայի մօտ, Արագածի արևմտեան լանջի վրայ։ Այդ՝ մեր սովորական երկար նրստարանների — «իշոտնուկի» նմանութիւն ունեցող խաղերը՝ պ. Սիսակեանցի նկարում գտնուելով խառն ուրիշ պատկերագրերի հետ՝ իսկապէս տանում են նշանակութիւն և երևում է որ պատահական խուզարկներ չեն։ Մեր ստացած ընդհանուր տպաւորութիւնը պ. Սիսակեանցի նկարից մեզ յիշեցրեց Ամերիկայի հնդիկների պատկերագրերը, միայն աւելի բարդ և աւելի բազմաթիւ նշաններով, բայց որևէ եզրակացութիւն անելը դեռ

վաղաժամէ, պ. Սիսակեանցի մատիտով գծածը շատ անբաւարար լինելուն պատճառով, ուստի և աւելորդ համարեցինք հրատարակել, յուսալով ուշ թէ շուտ կարողանալ ձեռք բերել այդ հետաքրքրական արձանագրութեանց աւելի յաջող նկարը կամ լաւ և՛ լուսանկարը։ Հրաւիրումենք մասնագէտ և ձեռնհաս հնախոյզների ուշադրութիւնը։

ՄԻԱՐԱՆ.

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԽՆԴԻՐ։

Կան խնդիրներ, որոնք բարձր են կուսակցութիւններից, որոնք մօտ են անպայման բոլորի սրտին։ Այդպիսի խնդիրներին կուսակցական գոյն տալը մեծ անազնուութիւն է։ Այդ նշանակումէ տէր կանգնել ընդհանուրի սեպհականութեանը. այդ նշանակումէ հակառակորդին վնասելու կամ պախարակելու համար ոչ մի ընտրութիւն չանել զէնքի։ Բայց Արգար Յովհաննիսեանը, որի մասին ստիպուած ենք մենք այսօր մի վերջին խօսք ասել, ե՞րբ արդեօք ընտրութիւն է արել զէնքի իւր հակառակորդներին մրելու, նրանց ցեխի մէջ կոխելու համար։ Վարանե՞լ է նա երբ և իցէ, երբ կարևոր կամ նպատակայարմար է դատել մի սուտ թխել de toutes pièces, կամ թիւրել ճշմարտութիւնը, նրանից սուտ եզրակացութիւն հանելու համար։ Ահա մօտ երկու տարի և կէս է, որ մենք պատկանումենք հակառակ բանակների։ Կարո՞ղ է արդեօք պարոնը ցոյց տալ գոնէ մի դէպք, մի օրինակ, երբ մենք նրա մասին գիտութեամբ որևէ սուտ ասած լինէինք, բամբասած կամ զրպարտած նրան։—Ոչ երբէք, որովհետև մենք այդպիսի բան չենք արել, չենք անիլ և կարօտութիւն էլ չենք ունեցել այդպիսի ստոր միջոցների դիմելու։ Իսկ մենք կարող ենք մատնանիշ լինել հարիւրաւոր դէպքերի և օրինակների, որոնցով պարոնը և իւր արբանեակները՝ առանց խղճմտանքի մի վերջին նշոյլ, երեսի ջրի մի վերջին պուտ ցոյց տալու՝ զրպարտել և բամբասել են մեզ, մեր համախոհներին՝ մեծից մինչև փոքրը, ամեն տեսակ անվայել ակնարկներով, յերիւրուած ստերով և անձնական արժանապատուութեան դէմ ուղղուած գռեհիկ վիրաւորանքներով։ Այդ բոլորին մենք պատասխանել ենք արհամարհանքով և լռութեամբ։ Եւ ահա իրրև լրումն իւր սխրագործութեանց պ. Յովհաննիսեանը մի ստախառն առաջնորդողում 1) մեզ և Էջմիածնի այժմեան վարչութեանն է ուզում վերագրել աշխարհաբար լեզուի այժմեան անկած դրութիւնը։ Իրրև նիւթ ծառայել է իրեն «Արարատ»-ի յուլիսի տետրակը։

---

1). «Արձագանք» թ. 91. «Խմբագրական գոհարներ»։

Լեզուի խնդիրը մասնաւորապէս իմ սրտին շատ մօտիկ լինելով այս անգամ միայն իրրև բացառութիւն՝ արժան ենք համարում պ. Արգար Յովհաննիսեանին պատասխանել։ Մենք պարոնին հետ գլխովին համաձայն ենք, որ Յուլիսի «Արարատ»-ի լեզուն վատ է, և այդ բացառութիւն չէ։ Եթէ բացառութիւններ եղել են, այդ քիչ թէ շատ կոկ լեզուով գրուած յօդուածներն են եղել, որոնք պատահաբար հրատարակուել են «Արարատ»-ում։ Նոյնը կարելի է ասել և ուրիշ լրագիրների և ընդհանրապէս ռուսահայերիս բոլոր հրատարակութեանց համար։ Մենք կարող էինք այստեղ առաջ բերել «Արձագանքից» լեզուի կոպիտ սխալների, տգէտ և անգրագէտ գարձուածների մի ահագին քանակութիւն, բայց միթէ «Արարատ»-ը կարո՞ղ է արդարանալ «Արձագանքի» կամ մի այլ հրատարակութեան սխալներով։ Գլխաւոր հարցն այն է թէ արդեօք նո՞ր երևոյթ է մեր նոր լեզուի այդ անկեալ և անխնամ վիճակը ռուսահայերիս մէջ, թէ այդ մի հին և արմատացած ցաւ է, որին պէտք է միացեալ ուժերով ամենալուրջ գարման տանել։ Քիչ թէ շատ ազնուութեամբ խօսելով՝ կարելի՞ է արդեօք այդ հին և մեծ ցաւը վերագրել Էջմիածնի այժմեան վարչութեանը։ Ես անձնականապէս՝ ինձ պատասխանատու եմ համարում միմիայն իմ ստորագրութիւնս կրող յօդուածների պարունակութեան և լեզուի համար։ Իմ բացակայութեան ժամանակ ամբողջ մի տարի «Արարատ»-ը լցուում էր միմիայն երկու գրողի՝ պպ. Տէր Միքելեանի և Տէր Մովսիսեանի (այժմ աբեղայ) յօդուածներով։ Կարծեմ կհամաձայնի ինձ հետ պ. Աբ. Յովհաննիսեանը, որ Եփրեմ աբեղայից, որին յանձնուած էր «Արարատ»-ի խմբագրութեան այսպէս ասած արտաքինին հսկելը միայն, չէր կարելի պահանջել, որ նա սրբագրէ բարձր կրթութիւն ստացած և ճեմարանի ուսուցիչ գրողների լեզուն։ Ո՞վ է մեղաւոր, որ մեր միջնակարգ և բարձրագոյն դպրոցների սաները ամբողջ ինը—տասը տարի սովորելուց յետոյ, այսուամենայնիւ անկարող են դանուում մի երկու տող ողորկ և անսխալ գրել։ Յուլիսի «Արարատ»-ում գրողները (Տ. Գաբրիէլեան, Տ. Միքելեան ևլն) կարող են իրենք իրենց պաշտպանել, եթէ տեղիք և հնարաւորութիւն կայ պաշտպանուելու, միայն այս պէտք է գիտնալ, որ այդ պարոնները բոլորն էլ ոչ միայն բարձրագոյն կրթութիւն ստացած մարդիկ են, այլ ուսումնաւարտ սաներ են ճեմարանի, Ներսիսեան դպրանոցի, Լազարեան ճեմարանի։ Անտանելի լեզուով գրուած քաղուածքները, որոնց վրայ մասնաւորապէս շեշտում է «Արձագանք»-ը, պատկանում են ճեմար. ուսումնաւարտ սաներից մէկին՝ Տիգրան սարկաւագ Տ. Յովհաննիսեանի գրչին։ Այս սարկաւագը ուսուցիչ է նաև Երևանի Թեմական դպրանոցում։ Ինչպէս տեսնում էք, ոչ մի պատահական, փողոցից վերցրած մարդ չկայ գրողների մէջ. բայց այսուամենայնիւ գրածների լեզուն անհարթ է,

լի է օտարաբանութեամբ։ Նոյն իսկ լեզուի խորթութիւններով։ Ո՞վ է մեղաւոր։ Կարելի՞ է արդեօ՞ք մի մարդուց պահանջել անկարելին։ այն է՝ որ նա հարթէ։ կոկէ մնացեալների լեզուն։ մի բան։ որ երկար տարիների ընթացքում չեն կարողացել անել հոգաբարձու պ. Աբ. Յովհաննիսեանի հաւանած տեսուչները։ Եւ վերջապէս ի՞նչ զարմանալու բան կայ։ որ մեր դպրանոցների և ճեմարանի ուսումնաւարտսաները գրեթէ «անգրագէտներ» են։ ինչպէս ասում է «Արձագանքը»։ երբ այդ հաստատութեանց մէջ մինչև օրս աշխարհաբար լեզուն չէ արժանացել իբրև ուսանելի առարկայ դասախօսուելու։ Ի՞նչ զարմանալու բան կայ։ ասում ենք։ որ ամեն տեղ — և ոչ միայն «Արարատ»-ում— երկու ոտքով կաղում է հայ լեզուն։ մեզ համար ամենաթանգագին բանը։ երբ ուսուցիչներ և տեսուչներ են եղել երկար տարիներ մեր այդ հաստատութեանց մէջ։ 3—5 հազար բուբլի ռոճիկ ստացող։ որոնք զուրկ լինելով հանդերձ որևէ գիտնական հետաքրքրութիւնից։ այնչափ բորիկ են եղել իրենց մայրենի լեզուում։ որ Հանգուցեալ Մակար Կաթուղիկոսը ստիպուած էր իւր «տիրացուներին» սրբագրել տալ նրանց գրած պաշտօնական ամենահասարակ թղթերը։

Ե՞րբ է յարուցւում մեզանում լեզուի խնդիր։—երբ կարիք է զգացւում այս՞կամ այն ատուած մարդու՝ ռամկական լեզուով ասած՝ պոչից բռնել։ Իսկ երբ իսկապէս հարկաւոր է լուրջ ուշադրութիւն դարձնել այդ ամենակարևոր խնդրի վրայ։ այն ժամանակ բոլորեքեան լռում են։ խցում են ականջները և փակում աչքերը։ թողնելով որ զանազան խնամական հաշիւների համար արհամարհուի մեր դպրանոցներում անտէր անտիրական հայ լեզուն։ որը մնացել է ժառանգութիւն միմիայն «տիրացուներին»։ Երանի՞ չէր լինի արդեօք։ որ պ. Արգար Յովհաննիսեանի անազնուաբար և չարամտութեամբ միմեանց հետ կապած երկու տարբեր խնդիրները (աշխարհաբարի անկեալ վիճակ և Տեղակալութիւն)՝ իսկապէս ներքին կապ ունենային։ որով մի Տեղակալութեան։ մի ժամանակաւոր վարչութեան կամ խմբագրութեան հետ կվերջանար նաև մեր արդի լեզուի անկեալ վիճակը։ Ո՞ւր էր թէ՝ գոնէ այս խնդրում՝ մենք սխալուած լինէինք։ պ. Արգար Յովհաննիսեանը՝ ազնիւ մարդ և «Արձագանք»-ի առաջնորդող յօդուածի հաւաստածը՝ ճշմարիտ։

ՄԻԱԲԱՆ։

ԱՋԳԱՅԻՆ

Նորին Վեհափառութիւնը՝ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. Սրբազնագոյն կաթուղիկոսը՝ ամսիս 3-ին մեկնել է Երուսաղէմից, Եաֆֆա—Ադէքսանդրիա — Տրիեստ—Վիեննայի վրայով դէպի Ռուսաստան։ Ամսիս 29-ին առաւօտեան ժամանել է Թիֆլիս։ Թէ Հայ և թէ օտար թերթերը լի են շքեղ և հանդիսաւոր ընդունելութեանց և գիմաւորութեանց նկարագրութեամբ։ Նորին Սրբութիւնը մօտ օրերս սպասւում է էջմիածնում։ Ամեն տեղ Նորին Վեհափառութեանը ընդունելու համար մեծ պատրաստութիւններ են տեսնուած։ Մեր Պատգամաւոր—թղթակցի նամակները՝ երևի պոստի անհոգութեամբ կամ անճշտութեամբ՝ մինչև օրս տեղ հասած չլինելով, Նորին Սրբութեան ճանապարհորդութեան նկարագրութիւնը թողնում ենք հետևեալ համարներին։

*
* *

Ամենապ. Տէր Տեղակալը այս երկտողով շնորհակալութիւն է յայտնում՝ այն բոլոր հաստատութեանց և անձանց, որոնք շտապել էին շնորհաւորել Նորին Բարձր Սրբազնութեան ծննդը։

*
* *

Յանուն Ամենապատիւ Տէր Տեղակալի ստացուել է հետևեալը.

Պարզելով «Արարատի» վերջին համարում հրաւէրը գալ յօգնութիւն կարօտելոց, որք արմտեաց պակասութեան պատճառաւ նիւթականապէս նեղ դրութեան մէջ են, պարտաւոր համարեցինք մերովսանն կատարել մեր մարդասիրական պարտքը, ի լրումն որոց ընդ սմին ուղարկում ենք յիսուն ռուբլի, որը խնդրում ենք գործադրել վերոյիշեալ նպատակի համար։

Խորին յարգանօք առ Սրբազնութիւնդ ի դիմաց Արափելեանի և Կաճկաճեանի՝ ԴԱՆԻԷԼ ՏԷՐ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ.

14 յունվարի 1893 Բաքու։

*
* *

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ հետևեալ նամակները։

ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ուղարկելով նամակիս հետ քսան հինգ (25) բուբլի յօգուտ Երևանու սովեալների, որ ժողովել եմ 15 Յուլիսի Մոսկէս Իզմիրեանի տունին, մի քանի երիտասարդների շրջանում հացկերոյթի ժամանակ, յայտնի ազգասէր Իզմիրեանի ագարակում, խնդրում եմ այդ գումարը հասցնէք նոյն գործի վերաբերութեամբ կազմուած յանձնաժողովին, և հրատարակէք Արարատի մատակայ համարներում ի միամտութիւն նուիրատուների։ Յուլիսի 29-1893 ամի Ղզլար։ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՊԻ—ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ։

***

ՅԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ.

Պատիւ ունիմ ներկայիս ուղարկել Ձեզ Երևանայ նահանգի սովելոց համար հանգանակուած երկու հարիւր տասն երկու բուբլի (212) և նուիրատուաց ցուցակն, խնդրեմ բարեհաճեցէք յիշեալ գումարն հասցնել սովելոց և ցուցակն տպագրել Ձեր պատուական ամսագրոյ համարներու մէջ ի լուր նուիրատուաց։

Մնամ խորին յարգանօք՝ Դ. ԻԻԶԻՐԱՇԵԱՆՑ։

Բագու 10-ն Օգոստոս 1893 թ.

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ

Վասն հայ սովելոց Երևանայ նահանգի 10-ն Օգոստ. 1893.

	Ր.	Կ.
Դաւիթ բէկ Իւզբաշեանց	15	»
Բժիշկ Ալիխանեան	10	»
Կ. Ն. Յակոբեան	10	»
Պարչևսկի	3	»
Բ. Շահեանց	5	»
Թամամշեանց	3	»
Լալայեանց	15	»
Միխայէլ Ունանեանց	5	»
Սերգէյ Աւշարեանց	5	»
Գրիգոր Մանթաշեանց	5	»
Միխայէլ Բէկլարեանց	5	»
Բագրատ Շիսեանց	5	»

	Ր.	Կ.
Արշակ Ունանեանց	5	»
Աստուածատուր Կոլմանեանց	3	»
Խաչատուր	5	»
Լևոն Ղուլեան	5	»
Ալէքսանդր Ասրիբէկեանց	5	»
Տէր Գասպարեանց	5	»
Յովհաննէս Սիմէրեանց	4	»
Ի. Բէկլարեանց	5	»
Յովսէփ Թամամշեանց	10	»
Գերասիմ Թումոյեանց	10	»
Կոստանդին Պողոսեանց	3	»
Այվազեանց	3	»
Եղիշէ Նաբաթեանց	20	»
Վահրամ Մութաֆեանց	10	»
Ա. Նասիբեանց	3	»
Եղբարք Թումանեանց	10	»
Միխայէլ Արամեանց	20	»
Գումար	212	»

Սովետների օգտին մինչև այժմս ստացուած նպաստների գումարն է (թէ Տ. Տեղակալի և թէ խմբ. Հասցէ իւ ուղարկուած).

Բժշկապետ Յ. Գասպարեանից	200	ռուբլի
Ս. Բէգնաղարեան քահանայից	20	»
Գ. Մ. Առափելեանց Առևտ. տուն և ընկ.	100	»
Ն. Առաքելեան և կտրկատեան	50	»
Ղզլարցի մի խումբ երիտասարդներից	25	»
Բագուից Դ. Իւղբաշեանի ձեռքով	212	»
Համագումար	607	»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր Ի Ց.

Ամենապատիւ Տէր Տեղակալի հրամանով Ուսումնական-Վարչական Ծանձնաժողովը իւր ԺԱ-րդ նիստում ուսուցչական ցանկը մոցրեց հետևեալ անձանց անունները.

---

1. Ազատեան Աւետիս . . . Գ. կարգ.
2. Ազալեանեան Գրիգոր . . . Գ. »
3. Տէր Ստեփանեան Արշակ քահանայ Գ. »
4. Տօնականեանց Տիգրան . . Ե. »
5. Օր. Աշխէն Տէր Նիկողոսեանց . Ժ. »
6. Երիցեան Սարգիս քահանայ, կարող է վարել կրօնուսոյցի պաշտօն, եթէ հոգաբարձու չէ։
7. Ղարիպեան Բարսեղ . . . Գ. »
8. Յակոբեան Մարտիրոս . . . Է. »
9. Օր. Մարիամ Բաղդասեանց . . Ժ. »
10. Յովհաննէսեան Պօղոս . . . Է. »

Անդամ Ուսումնական-Վարչական Ծանձնաժողովի՝

ԼԵՒՈՆ ԱՌԵՂԱՑ.

Ամսիս 24-ին, շատ կարճատև հիւանդութիւնից յետոյ ի Տէր հանգեաւ ճիշտ իւր տօնի առաւօտուն (Սրբոցն Յովակիմայ և Աննայի) Միաբանութեանս յարգուած և սիրուած անդամներից մինը՝ Հայր Յովակիմ վարդապետ Ղամեքեանը։ Ծնուած էր Վաղարշապատում 1812 թ. մանկութիւնից մնած էր Էջմիածնի ժառանգաւորաց դրպրոցը, սկզբանէ անտի յայտնի լինելով իւր գեղեցիկ և գուրեկան ձայնով և երգեցողութեամբ։ Երկար տարիներ վարած էր ուսուցչական պաշտօն (Տաթև, Սևան, Վաղարշապատ)։ Իւր հեզահամբոյր և պարզախօս բնաւորութեան համար սիրուած էր ամենքից։ Վերջին կաթուղիկոսական ընտրութեանց ժամանակ իբրև աւագ անդամ Միաբանութեանս պատգամաւոր էր։

Տէր լուսաւորեսցէ զհոգի ննջեցելոյն և հանգուցայէ ի լոյս երեսաց իւրոց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱԶԳ

Բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի կտակին տրամադրութեան համաձայն՝ Սահակ - Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի յաւուր տօնի Սուրբ Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ։

Հետևապէս՝ այն ամեն հեղինակք ու բանասէրք, որ ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ ի և է երկասիրութեամբ կը փափաքին մասնակցիլ այս մրցանակաբաշխութեան, կը հրաւիրուին մինչև յառաջիկայ տարուայ Յունվարի սկիզբն յուղարկել առ Ամեն. Սրբազան Պատրիարքք Հայրն ի Կ. Պոլիս իրենց աշխատասիրութիւններն։

Տպագրեալ երկասիրութիւնք երեք օրինակ պէտք է յուղարկուին. իսկ ձեռագիրք մի օրինակ՝ որք ետ չեն տրուիր։

25 Յունիս 1893։

«Բագուայ Մարդասիրական Ընկերութեան» ընդհանուր ժողովը ներկայ 1893 թ. համար նշանակել է 600 ռ. նպաստ այն անձանց, որոնք կկամենան յընթացս մի տարուայ վերջնական քննութիւն տալ՝ ուսուցչական իրաւունք ձեռք բերելու համար։ Ցանկացողները թող դիմեն Բագու հեռևեալ հասցէով.— Въ Совѣтъ Бакинскаго Армянскаго Человѣколюбиваго Общества. Խնդրատուների մէջ խորհուրդը գերադասելու է նոցա, որոնք աւարտած են թեմական դպրանոցը կամ Գէորգեան ճեմարանը։

Նախագահ Խորհրդի Բ. ԳՈՂՈՒԽԱՆԵԱՆՑ.
Առենադպիր Ա. ԳԱԼՍՏԵԱՆՑ.

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ՀԵՏԵԻԵԱԼ ԳՐՔԵՐԸ.

Ը.

ԷԼԻԶԷ ՌԵԿԼԻՒ

ԼԱԶԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Ե Ի

ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

ԿԻԼԻԿԻԱ՝ ՓՈՔՐ ԱՍԻԱ՝ ՄԻՋԱԳԵՏՔ՝ ԱՍՈՐԻՔ

Ե Ի

ՊԱՂԵՍՏԻՆ

ԹԱՐԳՄԱՆԵԼ

Մ Ի Ա Ք Ա Ն

(Առաջապես «Արարատ» ամսագրից)։

Ք.

ԳԵՕԼԻՆԳԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ե Ի

ՑԱՅՏԱԲԱԲՈՒՔԴԻՆՆԵՐՔ

ՎԱՏԻԿԱՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

1869—1887

(ԱՐՏԱՏՊԱԾ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻՑ)

Գ Ի Ն Ն Է 50 կոպէկ։

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

ՍԱՄՈՒԷԼԻ ՔԱՀԱՆԱՅԻ

ԱՆԵՅՒՈՅ

ՀԱՒԱՔՄՈՒՆՔ ԻԳՐԱՑ ՊԱՏՄԱԳՐԱՑ

ՅԱՂԱԴՍ ԳԻՒՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՅ ԱՆՅԵԼՈՅ ՄԻՆՉԵՒ
Ի ՆԵՐԿԱՅՍ

ԹԱՓՐԱՔԱՂ ԱՐԱՐԵԱԼ

ՑԱՌԱՋԱԲԱՆՈՎ, ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ,
ՑԱՒԵԼՈՒԱԾՆԵՐՈՎ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

ԱՐՁԱԿ ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆԻ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՕՐԱՑՈՅՑ

1894

ԱՄԻ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԷ

ՓՈՔՐ

ՄԱՂՏՈՑ

Ի ՊԷՏՍ ՔԱՀԱՆԱՅԻՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՇՈՒՏՈՎ ՊԱՏՐԱՍՏ ԿԸ ԼԻՆԻ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Զայնագրեալ հոգեւոր երգոց Հայրապետական Մաղթանաց, կիրակեաւմտից եւ հանդիսաւոր աւուրց:

Մ. Աթոռոյ տպարանի մատենադարանում

Հ. ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ԿԱԶՄԱԾ

«ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻՑ»

Գանուում են սակաւ քանակութեամբ, գնել ցանկացողները թող վաղօրօք դիմեն Տպարանական ժողովի Հասցէով:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Տպարանական ժողովը խնդրում է Վիճակային ատեաններից, Գործակալներից և Թեմական Տեսուչներից, որոնք տակաւին չեն ուղարկել յառաջիկայ 1893 թ. բաժանորդաց ցուցակը, շտապեն ուղարկել։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ

ԱՒԵՏԱՐԱՆ

ԻՎԱՆԵՐԻՑ՝ ՀԱՆԳՍՏԵԱՆ՝ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ՝ ՏԱՀԱՒՈՒ ԵՒ ԽԱՁԵԼՈՒԹԵԱՆ՝

փառակազմ։

ՎԱՃԱՌՈՒՄԸ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՆՆԵՐՈՒՄ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԱՑԵԱՆՆԵՐՈՒՄ

Գրաբառ փոքրադիր փառակազմ

ԱՒԵՏԱՐԱՆ

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԵԿ։

Կարելի է գիմել և Տպարանական ժողովին այս հասցէով։ Эчміадзинъ Типографическій Комитетъ.